1) Իմ սեփական անշարժ կալւածները, որ գտնւում են Ալէքսանդրապօլ քաղաքում, իր բոլոր հողերով ու շինութիւններով, կտակում եմ իմ մահւանից յետոյ լիովին սեփականութիւն իմ եղբօր որդի վաճառական Առաքել Յովսէփեան Մինասեանին այն պայմանով, որ նա՝ Մինասեանը տայ մի հազար ռուբլի (1000 ր.) տեղիս Աղքատախնամ ընկերութեան, և այս, նա, Առաքել Մինասեանը պարտաւոր է կատարել իմ մահւանից յետոյ մէկ ու կէս տարւայ ընթացքում։

2) Իմ սեփական երկյարկ տունը, իր շրջապատի տասն ու մէկ կրպակներով, որ գտնւում է Ախալքալակի առաջին քաղաքամասում № 49—60 իրենց բոլոր հողերով և շինութիւններով կտակում եմ տեղիս Բարեգործական ընկ. ճիւղին այն պայմանով, որ Բար. ընկ. յիշեալ եկամուտից մի սան պահէ մշտական հայոց բարձր դպրոցներում։

3) Իմ օրինաւոր կնոջը Սօֆիա Մինասեանցին կտակում եմ իմ մահւանից յետոյ օգտւել իմ բոլոր փողի տոկոսով, որը գտնւում է Թիֆլիսի Պետական գանձարանում:

4) Իմ բոլոր առձեռն փողերը, որոնք չեն յիշատակւած կտակիս մէջ, թող լինի սեփականութիւն իմ հաւատարիմ և երախտաւոր ծառայ Արշակ Տօնոյեանին:

5) Խնդրում եմ իմ ընտրած կտակակատար Արսէն Սարգսեան Մինասեանցին կատարել իմ վերջին կամքը կտակիս համաձայն: Այս կտակը որ գրել եմ իմ սեփական ձեռքով, ստորագրում եմ Սարգիս Աւագեան Մինասեանց:

Վկայ եմ՝ որ այս կտակը գրել և ստորագրել է Սարգիս Աւագեան Մինասեանցը, որ գտնւում էր առողջ դատողութեան և լաւ յիշողութեան մէջ՝ ծխատէր Երւանդ քահ. Տէր-Կարապետեան: Վկայ եմ երկրորդ կարգի վաճառական Ահարոն Սրապեանց:

ՊԱՅՄԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ա.

Հազար ինն հարիւր տասը թւի Մայիսի ութին, Ալէքսանդրապօլ:

Մենք ներքոյ ստորագրող Ալէքսանդրապօլ քաղաքի բնակիչ Լևոն Խաչատրեանցս և Հայկ Մուրադեանցս կապեցինք մեր մէջ հետևեալ պայմանը. 1) Ես Լևոն Խաչատրեանցս տւի քրէհով իմ սեփական տունը (կամ կրպակը) որ գտնւում է քաղաքիս առաջին մասում № 25 և բաղկացած է չորս սենեակից Աշոտ Մուրադեանցին մի տարի ժամանակով, տարեկան քրէհն է մի հարիւր քսան ռուբլի (120 ր.) վերոյիշեալ թւից մինչև տարին լրանալը. 2) Տարեկան քրէհ հարիւր քսան ռուբլին Մուրադեանցը պարտաւոր է վճարել երեք քառամսեակում (տրէթ), իւրաքանչիւր քառամսեակի սկզբում քառասուն ռուբլի (40 ռուբ.) ճշտութեամբ. 3) Մուրադեանցը պարտաւոր է տունը իր շրջակայքով կանոնաւոր մաքրութեան մէջ պահել և ոստիկանութեան արած նկատողութիւններին պատասխանատու ինքն է. 4) Պայմանաժամը լրանալուն պէս Մուրադեանցը պարտաւոր է դուրս գալ տանից և տունը նոյնութեամբ յանձնել ինձ, ինչպէս ստացել էր. 5) Ես Խաչատրեանցս տարին չլրացած իրաւունք չու-

նիմ Մուրադեանին տանից դուրս հանելու, նոյնպէս և Մուրադեանցը չունի իրաւունք դուրս գալու, եթէ մեր մէջ համաձայնութիւն չկայանայ։ 6) Այս պայմանից գրեցաւ երկու օրինակ. իսկականը մնալու է կալւածատիրոջ՝ Խաչատրեանի մօտ, իսկ նոյնստորագրութեամբ վաւերացրած պատճէնը—Մուրադեանցի, որի վրայ պէտք է գրել վճարուած փողերի քանակութիւնը պատշաճաւոր ստորագրութեամբ. 7) Մեզանից իւրաքանչիւրն էլ պարտաւոր է մաքուր և անարատ պահել այս պայմանը. 8) Ով որ այս պայմանի որևէ կէտը խախտէ, պարտաւոր է արդար կողմին վճարել իբրև տուգանք երկու հարիւր րուբլի։ Առ որև ստորագրենք. Լևոն Խաչատրեանց, Աշոտ Մուրադեանց։ Վկայ ենք Ահարոն Խաժակնեանց, Մարտիրոս Աբգարեանց։

Բ.

Հազար ինն հարիւր տասը թւի Յուլիսի 5-ին ես ի ներքոյ ստորագրող կօշկակարների համքարից վարպետ Սարգիս Գէորգեանցս ընդունեցի իմ կօշկակարութեան գործարանում կօշկակարութեան արհեստը սովորեցնելու համար իմ համաքաղաքացի Թադէոս Կարինեանցի որդուն՝ Արշալոյսին, վերոյիշեալ թւից, հինգ տարւայ ընթացքում, հետևեալ պայմանով. 1) Ես պարտաւոր եմ Կարինեանին կանոնաւոր սովորեցնել կօշկակարութեան արհեստը, չպահանջելով նրա հօրից, Թադէոս Կարինեանից և ոչ մի կոպէկ սրա համար վարձատրութիւն. 2) Բոլոր պայմանաժամի ընթացքում պարտաւոր եմ կերակրել նրան սընդարար կերակուրներով և հագցնել մաքուր ու կանոնաւոր. 3) Խիստ ծանր աշխատանքներով չպէտք է ծանրաբեռնեմ նրան և նրա գործած յանցանքների համար մարմնական պատիժ չպէտք է գործ դնեմ, այլ պէտք է յանդիմանել խօսքերով և երբ նա այս կերպով չուղղւի, պէտք է է պայմանը խախտուած համարել և նրան վերադարձնել իր հօրը. 4) Հինգ տարի ժամանակամիջոցը չլրացած Թադէոս Կարինեանը իրաւունք չունի իր որդուն իմ գործարանից հանելու, նոյնպէս և ես չունիմ իրաւունք հեռացնելու, եթէ տեղի չէ ունեցել երրորդ կէտում յիշուած պատճառը. 5) Այս պայմանից գրւեցաւ երկու օրինակ, իսկականը մնալու է Սարգիս Գէորգեանցի մօտ, իսկ պատճէնը Թադէոս Կարինեանցի, որը պարտաւոր ենք մաքուր և անարատ պահել։ Սարգիս Գէորգեանց. Թադէոս Կարինեանց։ Վկայ են Սեւրովբ Աղիզեանց, Մանուկ Ասատուրեանց։

Վաճառականական նամակներ

15-ն Սեպտեմբերի 1910 *թ.*

Ալէքսանդրապօլ

Մեծապատիւ պ. Վարդանեան

Քանիցս ես գրել եմ Ձեզ և շատ անգամ իմ հաւատարմատարների ու գործակալների միջոցով յիշեցրել եմ Ձեր 360 *ռուբլի պարտքը, որ մնացել է Ձեր տարած ապրանքից։ Բայց իմ նամակներս միշտ մնացել են անպատասխան, իսկ ուղարկած մարդկանցից դուք խուսափում էք զանազան պատճառաբանութիւններով։ Մինչև օրս չստանալով Ձեզանից վերոյիշեալ գումարը, ես ստիպուած եմ նկատել Ձեզ, որ առևտրական գործերում այդ տեսակ անճշտապահութիւնը առաջացնում է վարկի (դաւերիա) անկում, որպիսին թանկ է ամեն մի ճշմարիտ ազնիւ վաճառականի համար։ Ձեր պատճառաբանութիւնները և խուսափումները ինձ համբերութիւնից հանում են. եթէ դուք յետագայում ես զանազան պատճառաբանութիւններով չհատուցանէք ձեր պարտքը, ես ստիպուած կը լինեմ դիմել օրինական միջոցների, որը բոլորովին ցանկալի չէր։ Եթէ դուք լինէք իմ տեղը, նոյնքան և ձեզ համար կլինէր վիրաւորական եթէ ես էլ ի չարը գործ դնէի Ձեր հա-*

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ

(*Տես երես* 263)

«ՇԻՐԱԿ» 1910 *թ*

ւատարմութիւնը և զիջողութիւնը։ Թոյլ տուէք նկատելու, որ այս իմ վերջին նամակն է ձեզ և յոյս ունիմ որ դուք կաշխատէք գոհացնել իմ արդարացի պահանջը։

Պատրաստ ձեզ միշտ ծառայելու

Ս. Գաբրիէլեան

II

Մեծապատիւ պարոն

Երկու ամիս է, որ մոռացել էի Ձեզ վճարելիք պարտքը. չնայելով իմ բոլոր ցանկութեան՝ ներկայիս ես անկարող եմ կատարել այդ։ Շատ գումարներ, որոնց վերայ ես յոյս ունէի, դեռ ես չեմ ստացել և ես չեմ էլ կարող հարկադրել վըճարելու, վախենալով կորցնել իմ գնողներին (покупатель)։ Դրա համար խոնարհաբար խընդրում եմ մի ամիս ևս ժամանակ տալ ինձ և յոյս ունիմ, որ այդ ժամանակամիջոցում կը ստանամ բաւականաչափ գումարներ։ Ինձ համար թանգ համարելով Ձեր վարկի պահպանութիւնը, Ձեզ առաջարկում եմ ուշացնելու փոխարէն ստանալ տոկոս։

Լիայոյս եմ որ դուք չէք մերժի իմ խնդրած ժամանակի համար։

Թարգմանօք՝ Թ. Տարոյեան

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Մ Ա Ր Դ Ո Ւ Ծ Ա Գ Ո Ւ Մ Ը

(Ըստ Ֆլամարիոնի)

Բնութեան ուսումնասիրութիւնները, երկրաբանութեան և պեղումների միջոցով կատարած հետախուզութիւնները հաստատում են, որ կենդանիների տեսակները աստիճանաբար զարգանալով ու կատարելագործուելով իրար յաջորդել են, բոլորը մի արմատից են առաջ եկել և միմեանց ազգակից են։ Մարդը արդի կապիկներից չէ առաջ եկել, ինչպէս արդի ռողուններից և անողնաշարաւոր կենդանիներից, այլ առաջ է եկել մարդակերպ կենդանիներից կապիկների նման, որոնց տեսակն այժմ բոլորովին կորսուած է. Նրանք էլ արդէն վաղուց աշխարհիս երեսից անհետացած պարկաւոր, երկրակենցաղ կենդանիներից և ձըկներից էին առաջ եկել։ Եթէ մեր մարմինը մանրազնին քննութեան ենթարկենք, կտեսնենք պեղումների գիտութեան ասած ճշմարտութիւնը։

Մինչև այժմ պահում ենք այնպիսի սկզբնական և անպէտք գործարաններ, որոնք մեզ համար ոչ մի նպատակի չեն ծառայում, և այդ մենք ժառանգել ենք մեր կենդանի նախահայրերից.

օրինակ՝ ականջի ջիղը, որով այժմեան կենդանիները իրենց ականջներն են շարում, մեր աչքերի ներքին անկիւնում գտնուած փոքր ծալքը, որ այժմեան կենդանիների համար երկրորդ արտեւանունք է և այլն։ Ամեն մի կենդանի մարդկանց նման ունի անպէտք և սկզբնական գործարաններ, որոնք ժառանգել են իրենց նախահայր կենդանիներից։ Այրերի մէջ ապրող ձկները դեռ աչքեր ունին, բայց այդ աչքերը իրենց զօրութիւնը կորցրել են և այլևս չեն տեսնում։ Այժըմ չը թռչող թռչունները թևեր ունին (ջայլամն), բայց այդ թևերը իրենց համար ոչ մի բանի չեն ծառայում, որովհետև թռչելու սովորութիւնը կորցրել են։ Բօա և Բիւթօն կոչուած օձերը դեռ իրենց մարմնի արտաքին մասի վերայ ունին ոսկրային անօգուտ մասեր, որոնք նրանց կատարելագործուած անդամների, այժմ անգործածելի դարձած բեկորներն են։

Եթէ այստեղ մանրամասնօրէն տարրալուծենք մարդկային մարմինը, կտեսնենք, որ անդամազննութիւնն ևս կը հաստատէ երկրաբանութեան և պեղումների գիտութեան աւանդածի ճշմարտութիւնը։ Խօսենք ընդհանուր բնութեան հետ մեր ունեցած ազգակցութեան վրայ։

Օրինակի համար համեմատենք մարդկային ձեռքը Գօրիլի, Օրանգ-ութանգի, շան, բուկի, դլփի

ձկան թա-
թերի հետ,
այստեղ դը-
րած պատ-
կերի մէջ,
սպիտակ մա
սերը ոսկոր-
ներն են, իսկ
սեւերովը՝
մսերնեն:
Կըտեսնենք,
որ անդա-
մազննական
բացատրե
լով բոլորն
էլ համարեա
նոյն կազ-
մութիւն
ունին:
Նոյնանման
եզրակացու-
թեան կհաս
նենք, եթէ
սրանց — ու-
թանկի չիմ-

պաղէի, կայլն, և մարդու ամբողջական կմախք-ներն իրար հետ համեմատենք: Սրանց օրինակները բացորոշ տեսնում ենք մեր դրած պատկերի մէջ, (երես 134) որ մարդը կենդանիների նման հօրիզոնական դիրք ունի և աստիճանաբար բարձրանում է ուղղահայեաց ադնիւ դիրքին:

Ուղեղների համեմատութեամբ ևս նոյն եզրակացութեան ենք հասնում: Ուղեղը ողնածուծի զարգացումն է, ողնածուծի ներքին մասը աստիճանաբար զարգանալով ուղեղը լինում է կատարեալ—մեծանում է, աճում է, և զարգանում է մտաւորական կարողութեան գործածութեամբ:

Բազմակողմանի քննութեամբ հաստատւում է, որ այժմեան մարդկային կերպարանքը կամաց կամաց ձեւակերպւում է կենդանի բնութեան ամեն մի դասակարգից անցնելով. և հետեւաբար բնական օրէնքով, ինչպէս պտուղն է ծառից առաջ գալիս, նոյն օրինակով և մարդկային տիպը մեր մոլորակի՝ կենդանաբանութիւնից է առաջ եկել Այս կարեւոր եզրակացութիւնը լիուլի հաստատւում է նաև վերոյիշեալներից բոլորովին տարբեր գիտութեամբ, գիտութիւն, որ երկրաբանութեան և պեղումների գիտութեան հետ որևէ առնչութիւն չունենալով հանդերձ՝, ճշտիւ նոյն ճշմարտութիւնն է հաստատում մարդկանց ծագման կարեւոր խնդրի մասին: Այս գիտութիւնն է

սաղմագիտութիւնն է։ Արդարև, բոլորս էլ մեր մայրերի արգանդի մէջ անցել ենք այժմ ապրող

կենդանիների գլխաւոր տեսակներից, բոլորս էլ նախ գործարանական փոքր բճիճ ենք եղել, ինչ պէս վառեկն է եղել, բոլորս էլ փոքր ձու ենք եղել, և մեր սաղմը ձկի սաղմին նմանել է, ապա երկարակենցաղ և յետոյ սողունի սաղմին է նմանել։ Սաղմնային բաւական երկար կեանք անցկացնելուց յետոյ միայն ստանում ենք կաթնասուն կենդանիներին յատուկ վիճակ, առաջին շաբաթւայ միջոցում անկարելի է մարդկային սաղմը զանազանել կաթնասուների, թռչունների, սողունների և ձկների սաղմերից։

Այսպէս, բնական ամեն գիտութիւն, բոլորը միասին հաստատում են, որ մարդս մարդու կատարելագործուած համառօտութիւնն է երկրիս վերայ իրանից առաջ ապրող բոլոր կենդանական դասակարգի և թէ երկրի վրայ ապրող բոլոր կենդանիների նման իր, գոյութիւնը պարտական է երկրագնդի վերայ գործունէութեան մէջ եղած գործարանական ոյժերի միացմանը։

Թարգ. Ղ. Ասրունի

ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Անցյալ 1908 թ.ի վերջերին, Ամերիկյան Փիլիսոփայական Ընկերության նիստում կարդացված էր մի զեկուցում փորձնական վիրաբուժության հրաշալիքների մասին, որոնք տեղի էին ունեցել Նյու-Յորքում, Ռոկֆելլերի հիմնած բժշկական հետազոտությունների ինստիտուտում։ Վերոյիշեալ ինստիտուտի բժիշկ Ալէքսիս Կարըլլի ամենայաջող անդամահատություններից մեկն էր կազմում մի շան ոտքի ոսկորի միացումն մի ուրիշ շան մարմնին։

Այս նպատակով, սատկած Ֆօկս-տէրիերի— (շան ցեղի անուն է) ոտքը կտրել էին և պատւաստել կենդանի շան ոտքին, որը երեք ամսից յետոյ բոլորովին առողջ էր և մինչև իսկ չէր կա-կաղում։ Այստեղ շների և կատուների վերայ կատարւած երկարատև փորձերից յետոյ, հնարաւորութիւն գտան տեղափոխելու մեռած մարմիններից կենդանի մարմինների մէջ մի քանի գործարաններ։ Այսպէս օրինակ, դիակից կտրած – հանած առողջ երիկամունքները կարելի է յաջողութեամբ զետեղել կենդանի մարմնի մէջ, որտեղ վերջինները կարող են լիովին փոխարինել նըրանց հեռացրած հիւանդ երիկամունքներին։ Մի

կատուի երիկամունքների փոխադրելը միւսի մարմնի մէջ, երբ դա պահւած էր 60 օր սառուցում, պսակւեց լիակատար յաջողութեամբ։

Այս դէպքում մինչև անգամ կարևորութիւն չկայ գործադրելու թարմ երիկամունքներ, նրանք կարող են մինչև անդամահատութիւնը պահւել վեց շաբաթւայ ընթացքում սառոյցի մէջ։ Նման օրինակ անդամահատութեան մեծ մասը կենդանիների վերայ կատարած փորձերի ժամանակ անցել է բոլորովին յաջողակ և ըստ էութեան ոչ մի հիմք չկայ ենթադրելու, թէ մարդկանց վերաբերմամբ և նոյնպիսի անդամահատութիւնները կանգնեն աւելի յաջող անդամահատութեամբ։ Կատուների և շների վերայ եղած փորձերը, բժիշկ Կարօլի կարծիքով, լիովին հնարաւոր է յարմարեցնել նաև մարդկանց։ Մեռած մարդու ոտքի ծնկաբաժակը յարմարեցրած էր կենդանի մարդու վնասւած ոսկորի փոխարէն։ Ապա շնչերակները փոխարինւած էին քներակների և հիւանդը չէր զգացել ոչ մի տարբերութիւն, սակայն ապշեցուցիչ են առանձնապէս արեան մի տեղից միւսը ածելու փորձերը, որոնք յիշեցնում են միջնադարեան կախարդների մասին լսած հէքիաթները։ Օրինակ, մի շատ ուժասպառ կնոջ կազդուրման համար, որին պէտք է անդամահատէին, նրա մարմնի մէջ լցրին ուղղակի անօթ-

ների միջոցով իւր ամուսնու արիւնից: Մի այլ դէպքում, պատմում է գիտական մի հանդէս, հօր արիւնը ծառայել է երեխայի մարմնի կազդուրման, բայց ամենահետաքրքիրը այս տեսակի փորձ, տրուած էր պրօֆեսօր Գարավելի և բժիշկ Ջօնսոնի նախաձեռնութեամբ:

Սրսկելով երկու անդամահատեալների մարմնի մէջ կօկաին, բժիշկները միացրին սրանց արիւնատար անօթները, և Մարկ Օվէնը, երկու և կէս ժամւայ ընթացքում իւր արիւնը յանձնում էր հիւանդ ընկերոջը: Յետոյ ինքը վեր կացաւ տեղից ու խմելով մի ընպանակ կօնեակ և երկու հում ձու, դուրս գնաց հիւանդանոցից:

Թարգ. Ֆ'Աշոտ

ԵՐԿՐԱՇԱՐԺՆԵՐ

Տարերային բոլոր աղէտներից վատթարագոյնը երկրաշարժներն են:

Հարաւային Իտալիան առաջին տեղն է բռնում խրոնիքական երկրաշարժների նեթակայ երկրների շարքում. 1783 թ. ստորերկրեայ հարւածները անդադար կրկնւում էին Կալաբրիայում մի ամբողջ տարւայ ընթացքում, և էլի տասը տարուց յետոյ նկատւում էր երկրի տատանումը:

չէնց Մէսսինայում չորս տարի առաջ երկրաշարժ էր, որը աւերեց քաղաքի մի մասը և մօտ երկու հազար մարդկային զոհեր տարաւ:

Ի նկատի ունենալով, որ Սիցիլիայի մայրաքաղաքի հետ միասին կործանւեցին մօտ երեսուն մանր քաղաքներ և գիւղեր, Մէսսինայի երկրաշարժը իր զոհերի թւով,—նրանց թիւը հաշւում են մօտ 200 հազար, առաջին տեղն է գրաւում վերջին հազարամեակում:

Ահա «պատմական» երկրաշարժների ցուցակը, որոնք տեղի են ունեցել անցեալ դարում և ներկայ դարի սկզբում: Այդ ցուցակը ակներև ցոյց է տալիս իտալական երկրաշարժի չափերը:

Թիւը	Տեղերը	Զոհերի թիւը
1775	Լիսաբոն	56000
1797	Էկվադոր	40000
1812	Կարակաս	12000
1822	Հալէպ	20000
1829	Մուրսիա (Սպանիա) . .	6000
1842	Հաիտի	5000
1855	Կալաբրիա	10000
1860	Մինդօզա (Հար. Ամերիկա) .	7000
1868	Պէրու	25000
1883	Իսկիա	2000
1885	Սէրինագոր (Հնդկաստան) .	3000
1888	Ինան (Չինաստան) . .	4000

1891–1898	Յապօնիա	40000
1899	Միջին Ասիա . . .	1700
1902	Շամախի	2000
1902	Սէն-Պիէր . . .	30000
1902	Սէն-Վինցէնտ . . .	2000
1902	Թուրքեստան . . .	10000
1905	Սիցիլիա և Կալաբրիա . .	2500
1906	Սան-Ֆրանցիսկօ . . .	1000
1908	Սիցիլիա և Կալաբրի մօտ .	200000

Սակայն ճիշտ հաշուել սպանուածների թիւը երկրաշարժի ժամանակ շատ դժուար է և մինչև անգամ անհնարին է։

Ֆրանսիական գիտնական Պարվիլը իր մի հաւաքած ստատիստիկան թւերի հիման վրայ նախատեսեց մի շարք երկրաշարժներ, և վերջին քսանհինգ տարիների ընթացքում—ասում է նա,—իր գուշակութիւններն իրականացան։ Նա գրում է «Կօրրեսպօնդենտի» մէջ, որ 1908 թ. դեկտեմբերի 28 ի երկրաշարժն ևս նա գուշակեց շատ ամիսներ և մինչև անգամ տարիներ առաջ։

ԳԻՒՏԵՐ

5058 տարի առաջ Հնդկաստանցիք աստղաբաշխական աղիւսակները հնարեցին.

5057 Ղամեքի որդիքը հնարեցին հովուութիւնը, երաժշտութիւնը և դարբնութիւնը.

4559 Չինացիք կամուրջն ու դրամ հնարեցին.

4558 Հօանկտի հնարեց երգեռ, չափ, կշիռ և զանգակ.

5557 Չինացիք հնարեցին կողմնացոյցը.

4407 Հուանկտի եղեգով երաժշտութիւնը հընարեց.

3907 Կրետէ կղզու մէջ հնարեցին երկաթն ու պղինձը հալեցնելն ու բանեցնելը.

3907 Սիդոնացիք հնարեցին գիրը.

3741 Պղուտոն եգիպտոսի թագաւորը առաջին անգամ սկսեց հանք բանեցնել.

3706 Պրոմէթէոս կաւէ արձան շինելը և գայլախազից (չախմախքարից) կրակ է հանում.

3706 Ատլաս աշխարհագրութիւնն ու աստղաբաշխութիւնը հնարեց.

3557 Արաբացիները հնարեցին իրենց թւանշանները.

3470 Երեքդոնիոս հնարեց սայլը.

3407 Փիւնիկեցիք առաջին անգամ ապակի շինելու արհեստը գտան.

3357 Առաջին գրադարանը շինուեց Եգիպտոսում.

2851 Առաջին ոսկի և արծաթ դրամը շինուեց Արգոսում.

2797 Պլէոպանտ հնարեց միագոյն նկարչութիւնը.

2267 Երասիստրադ անդամազննութեան առաջին փորձն արաւ.

2253 Առաջին արեգակնային ժամացոյցը շինուեց Հռոմում.

2220 Եւմենէս հնարեց մագաղաթը.

2207 Եգիպտացիք հնարեցին ջրէ ժամացոյցը.

2177 Արքիմիդէս հնարեց պտուտակը և ճախարակը։

2158 Չինաստանի մէջ հնարուեց մետաքսէ թուղթը, թանաքը և գրչի տեղ բարակ վրձինը.

2147 Հերոն Աղէքսանդրացին հնարեց ջրհանը.

2095 Չինացիք հնարեցին թուղթը.

2020 Կիկերոն արագագրութեանը հնարը գտաւ.

1850 Մագնիսի գիւտը.

1504 Հայոց գրերի գիւտը.

1359 Հայոց Տոմարի շինուելը.

1260 Արաբացիք հնարեցին հողմաղացքը.

1246 Պէրալդ կրօնաւորը Անգլիայի մէջ պատուհանի ապակի գործածելը սովորեցրեց.

1251 Արաբացիք առաջին անգամ դրամ կտրեցին.

1160 Բամբակէ թուղթը հնարուեց.

1080 Փաչիֆիկոս Վերոնացին անիւանաւոր ժամացոյցը հնարեց.

950 Հոլլանդիայի մէջ շուխայի և կտաւի գործարաններ բացուեցին.

886 Գուտիոն Արետացին երոպական երաժշտութեան խազերը հնարեց.

740 Բագէլիա փախած յոյները կտաւի քուրջերից թուղթ շինելը հնարեցին.

660 Ճարպից մոմ շինելու արհեստը գտան.

616 Հռոքէր Բաքոն վառօդը հնարեց.

604 Աղէքսանդր Սպինա հնարեց ակնոցը.

600 Տոն վառարանը հնարուեց Եւրոպայում.

460 Պետրոս Շեֆֆէր, Յովհաննէս Ֆուստ և Յովհաննէս Գուտտեմբերգ միասին գտան և կատարելագործեցին փայտի և մետաղի վերայ փորուած գրերով տպագրութիւնը.

458 Պրտրոս Շեֆֆէր կաղապարով շարժական կապարեայ գիր ձուլելու հնարը գտաւ.

452 Երկաթէ գրչով և ժանտաջրով պղնձի վերայ փորագրութիւնը հնարուեց.

448 Առաջին տպարանը բացուեց Փարիզում.

440 Առաջին օրացոյցը հրատարակեց Լե հացի Մարտինոսի ձեռքով.

432 Առաջին թղթատար սուրհանդակը Լուի ԺԱ-րդ.

418 Ամերիկայի գիւտը Քրիստափոր Կոլումպոսի ձեռքով.

396 Քառանիւ կառքը հնարեցին Ֆրանսիայի մէջ.

383 Զսպանակաւոր հրացանն ու ատրաճանակը հնարուեց.

374 Քինաքինայի եւրոպա բերելը.

333 Հայերէն տառերով առաջին տպագրութ.

340 Գնդասեղի հնարե ը.

324 Գետնախնձորի գործածութիւնը Եւրոպա.

322 Ումբաձիգ թնդանօթը հնարուեց Եւրոպայում.

293 Երգախառն թատերգութիւնը հնարուեց.

291 Հեռադիտակի գիւտը.

274 Թորիչէլլի հնարեց ծանրաչափը

273 Տրեպէլ հնարեց ջերմաչափը.

276 Առաջին անգամ քթախոտ գործածուեց Թիւրքիայում.

256 Օտտօ Գուէրիք գտաւ օդահան մեքենան.

245 Սուրճի գործածութիւնը սկսուեց Ֆրանսիայում.

249 Ապակի պատուհանով և զսպանակով

կառքը հնարուեց առաջին անգամ.

248 Ճօճանակով բանող ժամացոյցը հնարուեց.

248 Կրակով բանող ջրհանը հնարուեց.

236 Հիւկէնս հնարեց գրպանի ժամացոյցը.

234 Պարլօ գտաւ խփող ժամացոյցը.

220 Ֆրանսիացի Դընի Պապէն առաջին շոգեշարժ մեքենան հնարեց.

290 Փորագրութեամբ գունաւոր տպագրութիւնը գտնուեց.

170 Ամերիկայի մէջ սպիտակ ոսկին (պլատին) գտնուեց.

143 Ֆրանկլին հնարեց շանթարգելը.

133 Բամբակ մանելու մեքենան հնարուեց.

127 Օդապարիկ գունդը հնարեցին Մօնկոլֆիէ եղբայրները.

120 Հեռագիրը հնարեց Շափ.

111 Առաջին երկաթեայ կամուրջը շինուեց.

110 Կովի ծաղկի պատուաստը գտաւ Ջէններ.

105 Բէյէր հնարեց լուցկին.

95 Առաջին շոգենաւը շինուեց.

86 Շոգեկառքի հնարելը.

71 Լուսանկարի գիւտը.

61 Ելեքտրական հեռագրի գիւտը.

44 Առեղնաւոր հրացանների գիւտը։

ԿՐՕՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եգիպտացիների կրօնը.—*Եգիպտացիները չափազանց կրօնական ժողովուրդ են եղել։ Ամենից առաջ նրանք սկսել են պաշտել Նեղոս գետը. Արևը, Լուսինը և բոլոր երկնային մարմինները և ընդհանրապէս բնութեան բոլոր երևոյթները։ Բայց յետոյ ձևերը փոխեցին։ Ամեն մի նահանգ, ամեն մի քաղաք իր աստուածն ունէր, որը Արևի մէջ կերպարանափոխուած էր։* Օզիրիս՝ *Սէթ աստծուն ծովը նետեց։ Իր կինը՝ Իզիս երկար ժամանակ փնտռելուց յետոյ գտաւ Օզիրիսը՝ որից ունեցաւ մի որդի՝ Հորոս։ Օզիրիս բարի ոգի էր, իսկ Սէթ՝ չար։ Հորոս իր վրէժն առնելու համար սպանեց Սէթ աստծուն։ Եգիպտացիները պաշտում էին նաև կենդանիներին, որովհետև հաւատում էին թէ աստուածները սովորաբար անասունների մարմնի մէջ մտնելով երկրիս վերայ իջնում են մարդկանց հսկելու համար։ Ամենից շատ սիրուած ու յարգուած կենդանիներն էին՝ կոկորդիլոսը, կատուն, բազէն, այծը և մանաւանդ Փինիկ թռչունն ու Ապիս կովը։ Փինիկը մի հրաշալի թռչուն է, որ հինգ տարին մի անգամ է յայտնւում և իր աճիւնների վերակենդանանալու շնորհն էր վայելում։ Ապիս կովը Օզիրիսի հոգին էր և Փթահի երկրորդ կեանքը,*

Մէմֆիսի մէջ էր պաշտւում և մեռնելուց յետոյ յետոյ թաղւում էր յատուկ շիրիմի մէջ։

Մի խումբ Եգիպտացիներ աւելի բարձր կրօն էին դաւանում, որ ստեղծել է և տէրն է ամբողջ աշխարհի, նոյնպէս ընդունում էին թէ մարդս չորս տարրերից է բաղկացած։ Մեռնելուց յետոյ կարծում էին թէ հոգին ներկայանում է ատեանի առջև, որին նախագահում է Օզիրիս։ Եթէ մեղաւորը դատապարտւէր, ամենասոսկալի զոհ էր գնում, իսկ երբ արդար ճանաչւէր, մասնակից կը լինէր յաւիտենական երջանկութեան։ Եգիպտական տաճարները ահռելի մեծութիւն ունէին, նշանաւոր է Գարանքի *տաճարը, որի շինութիւնը և կահաւորումը* 3000 *տարի է տևել։*

Քաղդէացիների եւ Ասորեստանցիների.— *Շատ քիչ բան գիտենք Քաղդէացիների հին կրօնի վերայ։ Քարերի, գետերի և կենդանիների պաշտամունքը մեծ տեղ էր գրաւում։ Հին քաղդէական աւանդութեան նայելով* Օ. նէս *աստուածը որ քաղաքակրթութեան առաջին սկզբունքները տուել էր մարդուն, ձկի մարմնով և մարդու գլխով ու ձայնով է աշխարհ եկել։*

Յետոյ պաշտեցին բարի և չար ոգիները, որոնք անցնում են սահող ամպերի միջից, փայլատակող կայծակի և անտառի ծառերի մէջ շնչող փոթորիկի միջից։ Ոգիների հաւատից ծր-

նաւ մոգութեան արւեստը, այսինքն ինքնիրեն հաճելի դարձնելու միջոցը, որի զաղտնածածուկ մեքենայութիւնները մոգերն ու կախարդները ձևացնում էին թէ գիտեն։ Քաղդէացիները աստղահմայներ են և բաղդ նայողների մեծ պապերը։ Ասորեստանցիք ու Քաղդէացիք ամենամեծ զօրութիւն էին վերագրում երկնակամարը լուսազարդող գնտերին և ապագայում գալիք զաղտնիքը ջանալով գուշակել՝ աստղաբաշխութիւնը հնարեցին։ Իրենց գերագոյն աստուածն էր Իլու և որի յաջորդներն էին Անու, Պէլ և Էա։

Քաղդէական տաճարները շինուած են պանապան գոյնի աղիւսներով և հինգ կամ վեց յարկից բաղկացած, ոսկէզօծ գմբէթով ծածկուած, այս ահագին շէնքերը նւիրուած էին ամենաերևելի աստուածներին։

Փիւնիկեցիների եւ Կարքեդոնացիների.— Երկար, շատ երկար ժամանակներ՝ գետերը, լեռները, ծառերը Փիւնիկեցիների պաշտմունքի առարկայ դարձան։ Հազարաւոր տարիներ այս ժողովուրդը ուխտի կր գնում Ատոնի գետի ափին, որի կարմիր ջրերի համար ասում էին թէ Աստծոյ երակներից է վազել։ Փիւնիկեցիք զարմանալի պաշտամունք էլ ունէին այն է՝ Բէլիթների կոնաձև կամ ձւի նման քարերի, մանաւանդ եր-

կնքից եկած օդաքարերի պաշտօնը։ Դամաց-կամաց Փիւնիկեցիները փոխեցին իրենց աստուածները, որոնք իւրաքանչիւր քաղաքում տարբեր անուններ էին կրում, բայց նշմարւում է մի բառ միայն Բաալ, որ միշտ ընկերանում է զանազան ազգանուններին։ Մէլգոթ Բաալը, որ իրենց բերում էր այր ու բենի անվիճելի բարիքը։

Կարքեդոնացիներինը Թանիթ աստուածուհին էր, որի պատկերով զարդարում էին դրամներն ու գերեզմանները։ Բաալ Համոն կամ Մողիք՝ այրող աստուածն էր, որին մարդկային զոհեր էին մատուցանում, երբ վտանգ է սպառնում իրենց երկրին։

Փիւնիկեան կամ Կարքեդոնի տաճարներից ոչ մի հետք կանգուն չէ այսօր, միայն յայտնի է որ նրանք բաղկացած էին ընդարձակ շրջանակներից, որոնց չորս կողմը փակւած է շէնքերով, մէջ տեղում բարձրանում էր քարէ սեղան, որը սրբութեան տեղ էր։

Յունական աստւածներ — Յոյները հաւատում էին մարդկանց նմանող աստուածների, որոնց վերագրեալ արկածները ձևացնում են դիցաբանութիւն։

Գլխաւոր աստուածներն էին Զեւս (Արամազդ), երկնքի աստուածն էր, որա հայրն էր Քրոնոս (Կրօնօս)։ Արամազդի կինն էր Հրէա,

լուսինի դիցուհի, և Թագուհի կանանց. Արէս՝ փոթորիկի և պատերազմի աստուածը. Հէփայստոս կրակի աստուածը. Աթենէ (Աթենաս) գիտութեան աստուածը. Հերմէս՝ քաջերի աստուածը և բանբեր Արամազդի. Ապոլոն՝ արևի և բժշկութեան աստուածը. Արտեմիս՝ (Անահիտ) աղբիւրի և որսի դիցուհին. Աֆրոդիտէ (Վէնիւս) սիրոյ և գեղեցկութեան դիցուհին։ Յոյները հաւատում էին թէ այս բոլոր աստուածների խումբը բնակւում է Ոլիմպոս լերան վրայ։

Ջրերի աստուածութիւնները հպատակւում էին Պոսիդոնի ծովերի աստծուն, իսկ ստորերկրեայ ոգիները՝ Հադէսի (Պղատոնի)։

Երկրիս գլխաւոր աստուածութիւնն է Դեմետր (Դեմետրէ)՝ դիցուհին հունձքերի, իր աղջիկը Բերսէփոնէ՝ դժոխքների աստծու ամուսինն էր:

Յոյները բազմաստուածեան ժողովուրդ էին, հաւատում էին իրենց աստուածների անմահութեանը, սակայն միևնոյն ժամանակ թէ նրանք էին տառապում, վշտանում, սիրահարւում, նախանձում և վիրաւորւում և այլն։

Հռոմայեցիների աստուածները.—Հռոմէացիք՝ Յոյների հաւատալիքներն ու ծէսերը ընդունել էին։ Նրանք պաշտում էին մեռելների հոգին և ուրուականներին հաւատում։

Հռոմէացիք Քաղդէացիների նման աշխատում

էին ապագան գուշակել և մասնաւոր բաղդահըմայներ ունէին։

Իշխանութիւնը՝ պէտն էր Սիբիլեան գրքերի (յունարէն լեզուով գրուած), որին դիմում էին վտանգի ժամանակ։

Քրիստոսից 200 տարի առաջ թէև մի խումբ արևելեան ժողովրդների հաւատալիքները Հռոմի մէջ մուտք գործեցին, սակայն շուտով իրանք իրանց վերացան։

Քրիստոնէութիւնը Իտալիայի մէջ թափանցեց առաջին դարում, նախ հալածանքներ կրեց, բայց յետոյ 311-ին Վալերիանոս կայսրի թոյլտւութեան հրովարտակով ճանաչեց քրիստոնէութեան ազատ կրօնը. վերջապէս 325-ին Կոստանդիանոս կազմակերպեց քրիստոնէական եկեղեցին:

Դրուիդների կրօնը.—Այս կրօնը դաւանում էին Գոլուացիները, ոչ կուռք ունէին և ոչ էլ տաճար, պաշտամունքները կատարում էին կաղնի անտառների խորքերը։ Տարւայ առաջին օրը Դրուիտները (կրօնական պաշտօնեայ) հանդիսաւոր կերպով կաղնի ծառերի վերայից ոսկի դանակով հաւաքում են մի տեսակ կիլ կոչւած սունկը։ Այս ժամանակներից մնացած է Դոլմէն, Մանճիր կոչւած ահագին անտաշ քարերի շարքը, որոնք ամբողջ տարածութիւններ էին ծածկում:

Բրահմականութիւնը.—Բրահմականութիւնը երբէք հիմնադիր չէ ունեցել։ «Մանուի օրէնքները» միակ գիրքն է, որը այս կրօնի ամենազուտ արտայայտութիւնն է։

Հնդիկ Բրահմինների սրբազան գրքերի մէջ առաջին տեղն է գրաւում Վէտան՝ որը Բրահմականութեան Աստուածաշունչն է։ Յետոյ գալիս են Մանավա-Դարմա-Սաստրա (Մանուի օրէնքը) և մեծ դիւցազներգութիւններ՝ Մահապ, Արաթա, Ռամայանա, վերջապէս Պուրանա-ները։

Մի քանի հեղինակներ դիտել են տալիս թէ բարի և չարի՝ երկու աստուածների աւանդութիւնը նմանում է Զրադաշտի դաւանանքներին։ Նոյնպէս հին Գերմանացիները իրենց իբր նախահայր ընդունում էին Մանիսը, Հէլլէններն էլ իրենց Մինօս աստուծովը համանմանութիւն էին ունենում Հնդիկների Մանուին։

Մանուի օրէնքները.—Ամբողջ հատորը գրուած է Աստուծոյ ներշնչումով՝ ինչպէս որ Եփրայեցիների օրէնքները Աստուած տուել էր Մովսէսին Սինա լեռան վերայից։ Հնդիկների աստուածաշունչի առաջին մասը շատ նմանութիւններ ունի Ծննդոց գրքի հետ. սրանից երևում է թէ ամենահին ժամանակներում հրէաներն ու արիաները միևնոյն ցեղին են պատկանում։

Այս առաջին մանուին յաջորդում են վեց ու-

րիշներն էլ, որոնցից իւրաքանչիւրը արարածների նոր սերունդ էր ստեղծում իր աշխարհ կառավարած ժամանակում։ Այդ, իւրաքանչիւր Մանուի՝ տասն և մէկ աստուածների կեանքի տևողութեան չափ ապրել է, իւրաքանչիւր աստուած՝ 32000 տարի կեանք է ունեցել։ Այստեղ տեսնում ենք, որ Հնդկական աւանդութիւնը ահագին ժամանակի տևողութիւն է տալիս աշխարհին և թէ նրա ստեղծման ու զարգացման համար, ինչ որ համապատասխան է արդի գիտութեան կարծիքներին։ Նկատելի է նաև այս վեց մանիների թիւը, որին համապատասխան է աշխարհիս ստեղծման օրերին։ Այժմ եօթներորդ Մանուն է, որը տիրում է հնդիկ կրօնի մէջ։

Այժմեան բրահմականութեան մէջ Բրահմա (ստեղծող աստուած), Վիշնու (պահպանիչ) և Սիվա (աւերիչ աստուած)։ Սրանք կազմում են հնդիկ երրորդութիւն։

Յետոյ գալիս է Սարբի, Բրահմայի կինը՝ Արեանների դիցուհին՝ պաշտպան գեղարուեստի և խաղաղութեան։

Սիվայի կինն է Պարվաթի, լեռան աղջիկը, պատերազմների դիցուհին և աւերածների ոգին։

Երջանկութեան ու բարերարութեան դիցուհին է Լաքմի կամ Կրի՝ Վիշնուի ամուսին, որ ծնունդ է առել ալիքների ծոցից։

Հնդիկը սոսկալի ապաշխարանքների է ենթարկում ինքն իրեն. կամաւոր մարմնական տանջանքներ է կրում, իր գործած մեղքերը քաւելու համար։

Բուդդայութիւն. — Երկրագնդիս բնակչութեան քառորդ մասը բուդդայադաւան է։ Քրիստոսի թւականից 7 դար առաջ Հնդկաստանի մէջ այս կեանքը քարոզել է Սակեամունի իշխանը՝ մականւանեալ Բուդա իմաստուն (լուսաւորեալ)։ Բուդդայականութիւնը շուտով տարածուեց Հնդկական ցամաքակղզու մէջ, որտեղից էլ վերջերս արտաքսուեցին և շուտով ընդունուեցին Չինաստանի, Յապոնիայի, Ցէյլոնի, Ճավայի, Կոչինչինի. Բիրմանիայի, Տիպէթի բնիկների և Մոնղոլների ու Թաթարների երկրի մէջ։

Սակեամունիի օրէնքները երկու օրինակ են գրւած, մինը սանսկրիտ լեզւով, որը Հօտլսն գըտաւ Նեբօլի մենաստանի մէջ, իսկ միւսը գտընւում էր Ցէյլոնի քուրմերի ձեռքը և Պալի լեզւով գրւած։

Բուդդայականութեան մէջ ամեն բան երկու գլխաւոր գաղափարների վերայ է դառնում հոգեփոխութիւն՝ որը անվախճան ապաշխարանքի գաղափարն է, և որը նկատւում է իբր միակ նշանակութիւնը կեանքի գոյութեան մէջ։ Յետոյ Նիրվանայի գաղափարը՝ որ իբր գերագոյն հա-

տուցումի և տառապանքների վախճանի գաղափարի յղացումն է։

Բուդդայական վարդապետութեան հիմքը կազմում են չորս գերագոյն ճշմարտութիւններ. որոնք բոլոր հաւատացեալներից ընդունւած են։

Առաջինն այն է, թէ ցաւը անբաժան է կեանքից. որովհետև ծերութիւնը, հիւանդութիւնն ու մահը բաժին են ապրող էակին։

Երկրորդը՝ ցաւը բաղձանքի զաւակն է, որովհետև մարդիկ կապւում են նիւթին, երիտասարդութեան, առողջութեան, կեանքին։

Երրորդ ճշմարտութիւնը մի տեսակ մխիթարութիւն է բերում առաջիններին, թէ կեանքն ու ցաւը կարող են դադարել Նիրվանայով (էութեան ոչնչացումը)։

Չորրորդ՝ Նիրվանային հասնելու համար. պէտք է իր էութեան մէջ ջնջել բաղձանքը և հեռացնել բոլոր արգելքները, որոնք ընդդիմանում են ես ից հրաժարւելուն։

Մեծ Լամայի (բուդդայականութիւն) դաւանանքի ծէսերն ու հանդիսաւորումները խիստ նմանութիւններ ունին հռոմէական եկեղեցու ունեցածին։ Թաթարների մէջ արդարև տեսնւում են մեծ քահանայապետներ, հոգևոր իշխանութիւն ունեցող նահապետներ, Լամաների մի ընդ. ժողով, որի մէջ ընտրում են կրօնապետ,

վանքեր և միաբանութիւններ, մեռելների համար աղօթք անել (հոգեհանգիստ), գաղտնի խոստովանանք, սրբերի բարեխօսութեան կոչում, ծամապահութիւն, ոտնալուայ, թափորներ, օրհնեալ ջուր։ Այս էլ կարող ենք մեկնել, որ եթէ ինկատի ունենանք թէ այն ժամանակները, երբ Թաթար հայրապետները հաստատուեցին Տիբէթի մէջ, շրջակայ երկրները լցուած էին քրիստոնեայ բնակչութիւններով։

Բրահմականութիւնը և Բուդդայականութիւնը գրեթէ 750 միլիոն հաւատացեալներ ունին։

Մովսիսականութիւն. — Եբրայական կրօնի հիմքը այնքան ամուր է եղել, այնքան հրէաները փարած են եղել իրենց հաւատալիքներին, որ 18 դարերից իվեր ցրուած է եղել ժողովրդի մէջ և դեռ հաստատ մնում է այն։

Մովսիսականութեան սկզբունքներից միայն մնում է Հնգամատեանը՝ որ բաժանուած է Ծննդոց գրքի, Ելից գրքի, Ղևտականների, Թւոց և Երկրորդ Օրինացի։

Ղևտական ցեղը միայն կարող է կատարել կրօնական պաշտամունքները և հսկել Տապանակ Ուխտի վրայ, որի մէջ կային պահուած տասնաբանեայ պատուիրանքի երկու քարէտախտակները։

Թալմուտը բովանդակում է Եբրայական ա-

ւանդական օրէնքները և կամ ռաբբիների տըւած բացատրութիւնները՝ Մովսէսի գրած օրէնքի վերայ։

Մովսէսական կրօնին հաւատացողների թիւը գրեթէ 5 միլիոնի է հասնում։

Մազդեզականութիւն.— Զօրօաստրի կրօնը կոչւում է Մազդէզականութիւն կամ համաշխարհային գիտութիւն և իբրև օրէնագիրք ունի Աւեստան, որի մի մասը միայն Վանդիդատ (սատանաների դէմ գիրք), մնում է Բարսիս կոչուածը՝ ժողովրդի ձեռքին։

Զօրօաստրը Քրիստոսից 25 դար առաջ էր ապրում, և Որմիզդի ձեռքից ընդունեց օրէնքների գիրքը (Ավէստա)։ Որմիզդ՝ բարի հոգին էր, իսկ Ահրիմանը՝ չար։

Ծէսերի ամբողջութիւնը կայանում է տաճարի կրակը վառ պահելու և պաշտելու մէջ։ Որմիզդը ոչ արձան ունէր, ոչ տաճար, իր միակ պատկերը կրակն է։

Մինչև այսօր դեռ կան Հնդկաստանի մէջ ժողովուրդներ (ինչպէս պարսիները), որոնք սոյն կրօնին հաւատարիմ պաշտողներ են։

Ն. Պալէրեան

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Դոկտ. Բօսի, որ այժմ 117 տարեկան է, իր մի բարեկամի հետ խօսակցելիս ասաց.

«Ոչ մի առողջապահական կանոնի չեմ հետևել. իմ սկզբունքս է ամեն բան գործածել, բայց չարաչար գործ չածել։ Ծնուել եմ 1793 թ. և ծնածս օրից երբէք հիւանդ չեմ եղել։

Ամառ, ձմեռ առաւօտը ժամը 7-ին վեր եմ կենում և ինքս ինձ ածիլում։ Յետոյ անմիջապէս դուրս եմ գնում բժշկական այցելութիւններս կատարելու։ Ամեն բանի մէջ չափաւորութիւն, ահա երկարակեցութեան գաղտնիքը։ Այս պատւէրը ստացել եմ հօրիցս, որ 108 տարեկան հասակում մեռաւ։ Տեսնում էք, որ որև տկարութիւն չունիմ։ Միայն ձախ աչքս եմ կորցրել։ Թերևս այն էլ պահած լինէի, եթէ իմ պատւական արհեստակիցներիցս մէկը պարապ համարած չլինէր իմ աչքիս վարագոյրը հանելու և տեսողութեանս կէսից զրկելու համար։

—

Երկարակեցութեան տասնաբանեան

1. Ամեն չափազանցութիւններից, մանաւանդ ուտելու և խմելու մէջ շատ զգոյշ եղիր։

2. Կեր ապրելու համար, և ոչ թէ ապրիր՝ ուտելու համար։

3. Մարմինդ սնուցանելու յարմար ուտելիքներ ընտրէ։

4. Մաքուր, և միմիայն մաքուր օդ ներշնչէ։ Մինչև անգամ գիշերներն իսկ մաքուր օդ թող մուտք գործէ ննջարանդ։

5. Մարմնով և մտքով մաքուր եղիր։ Մաքրութիւնը վահան է հիւանդութիւնների դէմ։

6. Հանդարտ ու անխռով պահէ միտքդ։ Սրտատանջութիւնն ու յուզումը մահ է փչում։

7. Միշտ ժիր ու աշխատասէր եղիր։ Զբաղւիր մարմնով և մտքով, միշտ օգտակար և համեստ գործերով։ Սակայն չափազանց մի յոգնիր։

8. Վաղ անկողին մտիր և աշխատիր բաւականաչափ քուն վայելել։

9. Բարկութիւնը, կիրքը հեռու պահիր քեզանից, եթէ ոչ մահացու հարուած կը ստանաս նրանցից։

10. Վնասակար է մարդուն առանձին կամ միայնակ լինել։ Այս աստուածային պատգամ է։ Ուստի կեանքի յամար մի ընկեր գտիր։

—

Տասն կանոններ լողացողներին

1. Հոգեկան յուզմունքներից յետոյ, ջուրը մի մտնիր։

2. Երբ լինքդ քեզ տկար զգաս և կամ տևողական անհանգստութիւն ունենաս, երբէք ջուրը մի մտնիր։

3. Երբ գիշերը անքուն անցկացնես կամ չափազանց աշխատես, չլինի թէ ջուրը մտնես, պիտի մի քանի ժամ հանգստանաս։

4. Չափազանց շատ ուտելուց և խմելուց յետոյ ջուրը մի մտնիր։

5. Լողանալու գնալու ժամանակ ծանր քայլէ։

6. Լողարան հասնելու պէս՝ ջրի բարեխառնութեան, խորութեան, և յորձանքի մասին տեղեկութիւն առ։

7. Խիստ դանդաղ հանուիր, բայց շուտով մտիր ջրի մէջ։

8. Գլխիդ կողմից ջուրը նետուիր, եթէ ոչ շուտով մտիր ջրի մէջ։

9. Ջրի մէջ շատ մի մնար, մանաւանդ եթէ այնքան ամրակազմ չես։

10. Ջրից դուրս գալուց յետոյ, կանոնաւոր կերպով մարմինդ շփէ արեան շրջաբերութեան համար։ Շուտով հագիր և չափաւոր շարժումներ արա։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՆԱՆԵԱՆ

(Տես երես 264)

«ՇԻՐԱԿ» 1910 թ.

Առողջապահիկ խրատներ

Աչքերդ պաղ քամիներից հեռու պահեցէք:

Առաջներդ չիշտակի լոյս եղած ժամանակ, խուսափեցէք աշխատելուց:

Գունաւոր լուսամփոփ (ապա-ժուռ) կանթեղի վերայ մի գործածէք:

Տաք տեղից յանկարծ ցուրտ տեղ մի մտնէք:

Լողացած ժամանակ աչքերդ փակեցէք, մանաւանդ երբ ջուրը աղի է լինում:

Աչքերդ որևէ ուժով լոյսի մի ենթարկէք, ինչպէս օրինակ էլէքտրական լոյսի:

Տկար լոյսով կարդալուց, գրելուց, կամ կար անելուց աչքերդ մի յոգնեցնէք:

Եթէ աչքերդ բորբոքուած է, սառը ջրով մի լուացէք, ընդհակառակը որքան ջուրը տաք լինի, այնքան օգտակար է:

Ատամնաբոյժի խրատները

Ատամների գործունէութիւնն ունի մարդու կազմւածքի վերայ մեծ ազդեցութիւն, որովհետև ատամները ջարդելով և մանրացնելով կոշտ կերակուրները դարձնում են փխրամարս: Եթէ ատամները չնախապատրաստէին կոշտ կերակուրը, կարելի չէր լինի կերակուրը կուլ տալ, իսկ եթէ մի որևէ կերպով կուլ գնար, այնուամենայնիւ

ստամոքսը մեծ դժւարութեամբ կը մարսէր, որ կարող է պատճառ դառնալ զանազան տեսակի և աստիճանի բորբոքման, ուրեմն վերջնականապէս անկարելի կլինէր կերակրել:

Փտելուց կամ ծերութիւնից, կամ զանազան հիւանդութիւններից ատամները թափւում են և մարդս անկարող է լինում կանոնաւոր ծամել և մարսել սովորական կերակուրները: Այսպիսիները պէտք է գործածեն արւեստական ատամներ:

Ատամների փճանալը: Ատամները փճանում են գլխաւորապէս կերակուրների թթւելուց, երբ կերակուրների մասերը երկար ժամանակ մնում են ատամների արանքներում: Ատամներին շատ են վնասում բոլոր թթու կերակուրները, օրինակ՝ քացախը և մանաւանդ քաղցրեղէնները (շաքար, մեղր): Իսկ ծխախոտ ծխելն, ընդհակառակը պահպանում է ատամները փճանալուց: Մի ատամի փճանալը ոչ միայն ցաւ է պատճառում, այլև վնասակար է այն կողմից, որ միւս ատամներն էլ սկսում են փճանալ:

Ատամները փճանալուց պահպանելու համար, ամենալաւ միջոցն է կանոնաւոր և նպատակայարմար կերպով մաքրել բերանը և ատամները (տես «Ատամների մաքրելը»): Եթէ մի ատամ փուճ է, այսինքն ծակւել է, ամենալաւ միջոցն է այդ ատամը կապարել (пломбировать) տալ,

որը ինչքան շուտ լինի, այնքան աւելի յաջող է լինում: Բայց մարդ չի կարողանում վաղօրօք իմանալ, թէ երբ ատամներն սկսում են փճանալ և ուշադրութիւն է դարձնում միայն այն ժամանակ երբ ատամներն սկսում են ցաւել, այդ պատճառով խորհուրդ ենք տալիս, որ երբեմնապէս ատամները ցոյց տան ատամնաբուժին, որպէսզի կարելի լինի վաղօրօք տեսնել փուճ ատամները և կապարել: Իսկ եթէ փուճ ատամը նշմարւում է ուշ և կապարելը այլևս անկարելի է լինում, այն ժամանակ պէտք է հանել տալ: Եթէ այդ տեսակ ատամը հանել չեն տալիս, ատամնացաւը շարունակւում է, բերանում գարշահոտութիւն է առաջ գալիս և միւս անվնաս ատամներն էլ սկսում են վարակւել ու փճանալ:

Կաթնատամների կապարելը նոյնպէս հարկաւոր է, ինչպէս շափահասների ատամներ կապարելը: Կապարած ատամները պէտք է նոյնպէս խնամքով մաքրել, ինչպէս անվնաս ատամները:

Ատամնաքար: Ատամների վերայ թուքից առաջացած հողային մասերի (կրային աղեր) կիտումին անւանում են ատամնաքար: Ատամնաքարից լնտերը գրգռւում են և այդ պատճառով ատամներն իրենց տեղում թուլանում, շարժւում են: Ատամները պահպանելու համար պէտք է երբեմնապէս (տարին 1—2 անգամ դիմել ատամ-

նաքսուժին և խնդրել, որ նա ատամներից վերցնի ատամնաքարը։

Ատամներ մաքրելը։ Ատամները պէտք է վրձինով մաքրել ամեն օր, առաւօտ և երեկոյ, բայց չպէտք է վրձինը տանել այս ու այն կողմը, այլ պէտք է տանել լնդերից դէպի ատամների ծայրը (ատամնապսակը)։ Ուրեմն ներքևի ատամները մաքրելու համար պէտք է վրձինը տանել ներքևից դէպի վերև, իսկ վերևի ատամները մաքրելու համար պէտք է վրձինը տանել վերևից ներքև։ Չպէտք է մաքրել ատամները միայն արտաքին, այլև ներքին, այսինքն լեզուի կողմից։ Մաքրելու համար գործ ածիր այնպիսի փոշի, որ լինի հակաթթուական և հակափտողական ինչպէս օրինակ «ոստրէի պատեանքի փոշին— (порошокъ скорлупи устрицъ), ածխաթթուական մագնեզիա (углекислая магнезія) կամ թէ հասարակ ածուխի փոշին։ Ատամնափոշին հոտաւէտ և համեղ դարձնելու համար ածիր փոշու վերայ մի քանի կաթիլ արքայատանձի իւղ կամ անգլիական անանուխի (Англійская мята) տերևների իւղ կամ մի ուրիշ հոտաւէտ իւղ։ Հասարակ փայտի ածուխի առաւելութիւնն այն է, որ ատամներին տալիս է սպիտակ գոյն և միևնոյն ժամանակ ներգործում է հակափտողական կերպով, դրանով էլ պահպանում է ատամները փտե-

լուց և ոչնչացնում է բերանի վատ հոտը։ Ատամնափոշու տեղ կարելի է գործ ածել ամեն մի լաւ սապոն (օր. իւրաքանչիւր դեղատանում ծախւում է «բժշկական սապոն»), քսելով վրձինի վերայ։ Այն ժամանակ պէտք է սապոնը նախադասել փոշուն, երբ երկար ժամանակ վրձինով մաքրելուց ատամների մինչէն կամ կիտուածը (эмаль) մաշուել է և կամ թէ ատամները սրբելուց ստացել են իրենց մակերևոյթի վերայ ակոսներ։ Այսպիսի դէպքում պէտք է գործ ածել փափուկ վրձին։ Եթէ սովոր են ատամները մաքրել քչփորիչով (зубочистка), պէտք է քչփորիչը լինի փայտից և ոչ մետաղից։ Բացի այդ, ուտելուց յետոյ ողողիր բերանդ ջրով, որպէսզի հեռացնես բերանիցդ կերակուրների մնացորդը։ Եթէ բերանիցդ վատ հոտ է գալիս, ողողիր բերանդ ամենայն առաւօտ ուռխտական թթուտով (солин. натр.) կամ թէ մի բաժակ ջրով, որի մէջ ածած լինի 1—2 թէյի գդալ հետևեալ դեղից (1/2 թէյի գդալ վերմանգանական կալի (марганцово кислый кали, լուծուած մէկ շիշ ջրում)։ Լաւ է ատամները մաքրել եռ կաւիճի փոշիով։

Հիւգօ-Պօլ

Թող վազեն տղաները

Թոյլ տուէք, որ տղաները շարժւեն, այս ու այն ու կողմ վազեն, տապլկւեն: Երբ դուք տեսնում էք, որ երեխաները հանդարտ նստած են, մի կարծէք թէ խելօք են, զգուշացէք, մի գուցէ հիւանդ են. Նրանց շարժումներին արգելք չը դառնաք, եթէ ոչ նրանց աճման կվնասէք, նրանց փոքրիկ անդամները կարօտ են շարժման: Դիտէցէք կատուի ձագերին, ինչպէս են շարժւում ու խաղում:

Ամեն մի կենդանի արարածի աճման համար շարժումը մի էական նշանակութիւն ունի:

Մաքրութիւն

Մաքրութիւնն առողջութեան համար մի էական պայման է: Վտանգաւոր և տարափոխիկ հիւանդութիւնների միակ պատճառը անմաքրութիւնն է: Մաքուր ջուր, մաքուր օդ, արեգակի լոյս և մաքուր ու առողջարար սնունդ. առողջութեան համար բացարձակապէս անհրաժեշտ տարրեր են:

1. Մարմիններդ մաքուր պահեցէք, նրանք փոքրիկ ծակոտիկներ ունեն՝ որոնք արտաշնչութիւնն ու անմաքրութիւնը հեշտութեամբ ներս են քաշում և հիւանդութեան տեղիք են տալիս: Սրա

համար հարկաւոր է խնամքով լւացւիլ և հագուստները մաքուր պահել և յաճախակի բաղնիք գնալ:

2. Մարմնի անմաքրութեան չափ վնասակար է նոյնպէս հագուստների անմաքրութիւնը, որը պատճառ է դառնում հիւանդութեան: Մարմինը ծածկող սպիտակեղէնները՝ վերմակը, սաւանը և այլն ամեն օր բաց օդի մէջ պէտք է թափ տալ և յաճախ էլ փոխել:

3. Ամենից կարևոր բանն է մաքուր օդ շնչել. անմաքուր օդը թոյն է, և եթէ շատ շնչես այն, մահ է պատճառում, իսկ եթէ քիչ. առողջութեանդ է վնասում: Անվերջ սենեակի լուսամուտները բացէք, որ օդը մաքրուի:

4. Վատ հոտերից ես զգուշացէք: Ձեր տան պատուհանները, տախտակամածն ու սանդուխները և վերջապէս ամեն մի առարկայ մաքուր պահեցէք: Ոչ ջուր և ոչ աշխատանք խնայեցէք: Ձեր տան մօտերը խուսափեցէք զանազան աղտեղութեան կոյտեր դիզելու, մանաւանդ բուսական մնացորդներ՝ սոխերն են կաղամբի. պրասի կոճղներ, սեխի, ձմերուկի կեղևներ և այլն: Դրանք բոլորը թունաւոր գոլորշի են տալիս, որը ջերմ է պատճառում:

ԻՆՉ ԵՆՔ ՕԳՏՎՈՒՄ ՄԵՆՔ

Կեղծիքն ու խարեբայութիւնն այն աստիճան խոր արմատներ է ձգել մեր շուկայում, առհասարակ և յատկապէս ուտելեղէնների և խմիչքների մէջ՝ որ սովորական մարդը, որն առանձնապէս չէ պարապել ուտելեղէնների ու խմիչքների հարցով, գործնականապէս չէ հմտացել մթերքների ընտրութեան մէջ՝ անխուսափելիօրէն ընկնում է խարեբայ ու կեղծարար առևտրականների ցանցը և առնում է ամբողջովին անպէտք մթերքներ:

Օգտուելով լրագրներում եղած և մեր անձնական տեղեկութիւններից՝ կթւենք առևտրականների կատարած կեղծիքները ուտելիքների և խմիչքների վերաբերմամբ:

1. Հացահատիկներ: Հացահատիկների քաշն աւելացնելու համար խառնում են աւազ, վնասակար բոյսերի սերմեր, չորացրած և փշրած կաւ, կիր՝ աշխատելով խառնուրդի գոյնը նմանեցնել մաքուր հացահատիկների գոյնին.—այսպէս՝ ցորենին խառնում են սովորական ցորնագոյն կաւ, գարուն՝ կիր և այլն: Բացի խառնուրդներ աւելացնելը՝ հացահատիկների ծանրութիւնն աւելացնելու նպատակով՝ պարբերաբար սրսկում են ջուր կամ ամբարը խոնաւցնում են:

2. Ալիւր: Ալիւրի քաշն ևս աւելացնելու համար խառնում են աւազ, գիպս, կաւիճ, սպիտակ կաւ, փայտի թեփ, կիր, սպիտակ հող և այլն: Խառնում են շատ յաճախ բացարձակապէս թունաւոր նիւթեր: Բացի այդ՝ երբ ալիւրն սկսում է փչանալ (խոնաւութիւնից), նրան լաւ տեսք տալու համար խառնում են այնպիսի թունաւոր նիւթեր, ինչպէս ծծմբաթթւային ցինկ, պղնձի արջասպ, շիպ և այլն:

3. Թխած հաց: Թխած հացի քաշն աւելացնելու համար հացթուխները փուռը խիստ տաքացնում են, որի պատճառով խմորն անմիջապէս դրսից կարմրում և նոյն իսկ այրւում է, իսկ ներսից մնում է բոլորովին հում և թաց: Այդպիսով հացի միջուկը քիմիական այն փոփոխութիւններին չի ենթարկւում, որից կրախմալը պէտք է փոխուէր դեքստրինի, շաքարի և այլն, ուստի՝ այդպիսի հացը խիստ ծանր է լինում մարսողութեան համար և անխուսափելիօրէն աղիքային — ստամոքսային հիւանդութիւններ է առաջացնում: Սակայն հացի հմութիւնից աւելի վնասակար է նրա մէջ զանազան խառնուրդներ մտցնելը: Ձեզանից ով չէ տեսել շրջող մուրացիկների, որոնք ամենայն սիրով ընդունում են իրանց տւած հացի կտորները՝ որքան էլ վերջիններս հին, չորացած, խղոտ, կերակրոտ, ճարպոտ անմաքուր լի-

լինեն. ո՞վ չէ նկատել ձեզանից թէ ի՞նչպիսի սիրով են մուրացիկները պահում իրենց տոպրակում ուտելու համար կատարելապէս անպէտք հացի այդ կտորները։

Ձեր մտքից անցե՞լ է արդեօք թէ ի՞նչի են գործադրւում դրանք և մանաւանդ՝ երբ և իցէ մտածե՞լ էք, որ նոյն այդ հացի կտորները նորից ձեզ են հրամցնում... Այո՛, հէնց այդպէս էլ լինում է. հացթուխներն էժան գնով մուրացիկներից առնում են մնացորդ հացերը, չորացնում, ծեծում են և խմորին խառնելով՝ նոր հացի ձևով նորից ծախում են մեզ վրայ իբրև թարմ հաց... Եւ ի՞նչպիսի տեղերից ասէք. որ մուրացիկները հաց չեն ստանում — հիւանդանոցներից՝ հիւանդների մնացորդները, անառականոցներից՝ վեներական և այլ հիւանդութիւններից վարակւած մարդոց աւելցուկները, բնակարանների աղբի միջից հաւաքւած հացի կտորներ և այլն և այլն։

4. Կանդիտերների կեղծիքները: Կեղծիքն ու խարեբայութիւնը ոչ մի տեղ այնպիսի հսկայական չափերի չէ հասնում՝ ինչպէս կանդիտերսկիների մէջ։ Այստեղ թունաւոր ու վնասակար նիւթերը աւելի շատ են գործածւում, քան պիտանի նիւթերը. անելինը. որ ստացւում է քարածուխի ձիւթից և պէտքական է բացառապէս իրրև ներկ, մարգարինը, սախարինը, ամենացածր

տեսակի օղուց պատրաստած իւղը, բազմաթիւ տեսակի հոտաւէտ սապոններ, որոնք նշանակւած են լւացքի համար և մեծ մասամբ թունաւոր նիւթերից են պատրաստւած, զանազան էսսէնցիաներ, ներկեր, պղնձաներկեր, արճիճ, մկնդեղ, և ամեն տեսակի այլ թոյներ — ահա դրանք են, որ քաղաքի բնակիչը վայելում է կանդիտերսկիներից գնւած քաղցրահամ ու գեղեցկատեսիլ մթերքների՝ պիրօժնիների, բուլկիների, կանֆէտների, մարոժնիների, մուրաբաների, տօրտերի, ռուխարիների և խմիչքների հետ... Մեզանից ո՞վ չի կարող թւել մի քանի դէպքեր, երբ իր ծանօթները թունաւորւել են կանդիտերսկիներում և յաճախ մահացել։ Իսկ ո՞րքան դէպքեր մնում են անյայտ և չբացւած, ո՛րքան մարդի թունաւորւում են աստիճանաբար, առանց զգալու այդ։

4. Կաթի կեղծիք: Կաթին խառնում են ջուր —բայց դա ամենալաւ կեղծիքն է, որովհետև թւել անգամ չի կարելի այն վնասակար ու թունաւոր նիւթերը՝ որոնք ծառայում են իբրև կաթը շատայնելու միջոցներ։ Յիշենք այստեղ կաւիճը, գիպսը, բորակը, սօդան, կիրը. սպիտակ հողը. ալիւրը, ճարպը և այլն, և այլն։

Անհրաժեշտ է յիշել, որ կեղծիքներից ո՛չ մէկն այնքան կործանարար չէ մարդկութեան համար. որքան կաթի կեղծիքը, որովհետև՝ չէ՞ որ

կաթն է մանուկ սերնդի գլխաւոր ուտելիքը, կաթըն է, որ իբրև ամենադիւրամարս ու սննդարար նիւթ, տրւում է հիւանդներին։ Եթէ հնարաւորութիւն ունենայինք հաշւելու թէ ամեն տարի քանի հոգի են մեռնում վատ կաթից՝ գործ պէտք է ունենայինք միլլիոնների հետ... Եւ եթէ հարց տրւէր ո՞րն է մարդկութեան ամենամեծ թշնամին՝ թերևս այդպիսին անվիճելիօրէն կեղծած կաթը համարուէր։ Այսպէս օրինակ՝ նկատուած է արդէն, որ մօր կաթով կերակրուող երեխաների միայն 15% է մահանում, մինչդեռ՝ մօր հիւանդութեան կամ այլ պատճառով չը կեղծուած, մաքուր կովի կաթով մեծացող երեխաներից 90% և նոյն իսկ աւելին մահանում է մինչև երկու—երեք տարեկան դառնալը։ Իսկ եթէ միաժամանակ կաթը կեղծած և թունաւոր կամ վնասակար նիւթեր ունենայ խառնած՝ հասկանալի կը լինի թէ ինչպիսի ջարդ կառաջացնէ մանուկ սերնդի մէջ։

Բացի այդ՝ որպէս յայտնի է, կաթը հանդիսանում է իբրև բարեբեր միջնոլորտ՝ վնասակար բակտերիաների զարգացման համար, իսկ դա մի հանգամանք է, որն սպառողի կեանքը մշտական վտանգի տակ է դնում, քանի որ մեզ լաւ յայտնի է այն կեղտն ու անմաքրութիւնը, աղտոտութիւնն ու անհոգութիւնը, որոնց մէջ աշխատում են կաթնեղէնները պատրաստողները և վաճառող-

ները։ Շատ փաստերով ապացուցուած է, որ բազմաթիւ վարակիչ հիւանդութիւններ՝ տիֆի, ծաղկի, սկարլատինի. դիֆտերիայի աճեցման ու տարածման միջոցը կաթն է եղել, որի մէջ յարմար բոյն են գտել իրենց համար բակտերիաները։ Յայտնի է նաև, որ շատ յաճախ կովն է լինում վարակուած այս կամ այն հիւանդութեամբ և նրա կաթից հիւանդանում են մարդիկ։

6 Իւղ: Իւղի կեղծիքը կաթից յետ չի մընում։ Ալիւր, կիր, նաւթի իւղ, և բազմաթիւ այլ նիւթեր իւղը շատացնելու միջոց են ծառայում։

Ամերիկայից բերուած «իւղը» ամբողջովին պատրաստուած է բամբակներից և իւղէղէնի նշոյլ անգամ չի պարունակում իր մէջ։ Իսկ եթէ թւենք այստեղ մարգարինի զանազան տեսակները, որոնք անթիւ կեղծիքների են ենթակայ, սկսած սատկած անասունների ճարպից, մինչև անասունների կղկղանքի (արտաթորումների) խառնուրդ ունենալը, հասկանալի կլինի «մարգարին» (ճարպի իւղ) անունով վաճառւող նիւթի ինչ լինելը։

Ռուսաստանում մարգարինն ստացւում է նաև Ամերիկայից և հաւաքւում է Ցարսկոյէ Սէլոյում, որտեղից արդէն ուղարկւում է զանազան քաղաքներ։

Մտէք առաջին պատահող խանութը և պա-

հանջեցէք կարագ ու իւղ. հարցրէք դրանց գինը, եւ ինչո՞ւ չէք զարմացել, երբ ձեզ ասել են իւղի ֆունտն արժէ 40 կոպ. իսկ կարագինը—60 կ. ինչո՞ւ դուք ձեզ հարց չէք տուել.—չէ՞ որ իւղը ստացւում է կարագից, երբ վերջինս հալում են և բաժանում այսպէս ասած՝ աղինքից: Չէ՞ որ մի փութ կարագը հալեցնելուց յետոյ հազիւ 26—33 ֆունտ իւղ է տալիս: Ապա ինչպէս է պատահում, որ աւելի թանկագին կարագը հալեցնում են, պակասեցնում և աւելի էժան ծախում: Չէ որ վաճառողի համար աւելի ձեռնտու էր մի փութ կարագը 24 ռուբլու ծախել քան թէ հալել, դարձնել 30 ֆունտ իւղ և ծախել 16 ռուբլու... Այդ հաշիւներն արել էք երբ և իցէ և եթէ այս չէք գլխի ընկել, որ իւղի փոխարէն ձեզ ուտեցրել են մարգարին, ալիւր, ճարպ, նաւթ և այլն, և այլն: Մտէք ամենալաւ ֆիրմայի խանութը և կը տեսնէք, որ միշտ հալած իւղն աւելի թանգ է ծախւում այնտեղ, քան կարագը: Դա իւղի իսկականութեան գլխաւոր նշաններից մէկն է: Կարագը իւղից աւելի էժան ծախւելն այլ պատճառներ էլ ունի, բայց մեր յիշածը առաջնակարգ դեր է կատարում:

Ս. Տէր-Գրիգորեան

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Եթէ պարտէզ ունիք, շատ հեշտութեամբ կարող էք մի անկիւնում մեղուի փեթակ հաստատել, որը բացի գեղեցիկ զբօսանք պատճառելուց, փեթակի մեծութեան համեմատ՝ մաքուր մեղր է տալիս ձեզ: Փեթակի տեսակների մէջ ամենից աւելի յանձնարարելիներն են Հայանս-ի տեսակը քսան շրջանակով, կամ Դատանի տեսակը:

Մինչև ապրիլի 15-ը պէտք է փեթակը առնած լինի: Փեթակը այնպէս պէտք է լինի, որ կարողանաք սնուցիչ յարմարեցնել վերան, որը փայտէ կամ մետաղէ շինուած մի տեսակ ընդունարան է, որը փեթակի շրջանակների վերայ են դնում և որտեղ մեղուները պէտք է գնան շաքարի օշարակը խմելու, երբ իրենք բաւականաչափ մեղր չունեն իրենց սնուցանելու համար: Մի փեթակը իր բոլոր մեղուներով գրեթէ 15—20 ռուբլի արժէ, այս գումարի վերայ պէտք է աւելացնել հետևեալ ծախքերը՝ մի քող, փքոցաւոր ծխոց, վրձին և մի դանակ:

ՓԵԹԱԿԸ ՏԵՂԸ ԴՆԵԼԸ

Փեթակը կտանէք իր յենարանի վերայ հաստատուած պարտէզի այն անկիւնը, որտեղ դուք էքը նտրել: Շրջանակները բռնող փայտի շերտե-

րի մեխերը հանեցէք և մեղուներին ազատ թողէք։ Փեթակի համար լաւագոյն յենարանն է մի չորս ոտքով պատւանդան, որը գետնից 40 հարիւրերորդ մետր բարձր է լինում։ Որքան կարելի է աշխատեցէք փեթակի դուռը արևելեան կողմը լինի, բայց միևնոյն ժամանակ կէսօրեայ արեգակի ջերմութիւնից պաշտպանելու է ծառի կամ մի որևէ պատի ստուերով։ Փեթակը պէտք է պահպանել նոյնպէս հարաւի դէմ եղած ճառագայթներից։ Պտղատու ծառերի մեղրանիւթից օգտուելու համար գարնանը մեղուներ շատ պէտք է ունենաք։ Ապրիլի սկզբին ձեր մեղուները բաժանեցէք իրենց սնուցիչի մէջ և մի անգամից երկու կիլոգրամ շաքարի օշարակ տւէք, որ կարելի է պատրաստել երկու մաս փոշի շաքար մի լիտր ջրի մէջ մեղմ կրակի վերայ եփելով, և ինչ որ շատ դիւրին է։ Այս գարնանային սնուցանելու նպատակն է փութացնել թագուհու ածքը, բացի սրանից, եթէ մեղուների պաշարը նուազ է, չափազանց օգտակար է լինում թէ իրենց համար և թէ գոյութիւնն է ապահովում։

ԱՆՈՒՇԱՀՈՏ ՄԵՂՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կամենո՞ւմ էք ընտիր և անուշահոտ մեղր ունենալ։ Ձեր պարտիզի շուրջը ցանեցէք ամենից աւելի մեղրաբեր գարնանային ծաղիկներ. ինչ-

պէս՝ շահպրակ, թաւրնջակ, յափրուկ և այլն, նոյնպէս և իշառւոյտ (սոնջա)։ Ցանեցէք մի անկինում, միևնոյն ժամանակ աճեցրէք ձեր պտղատու ծառերի թիւը, հաղարջենիները, սրանք մեղուներին մեղր ու բեղմնաւորիչ փոշի են տալիս. միևնոյն ժամանակ ծաղկաքաղիկների՝ ծաղկի վերայ այս աշխատութեան արգասաւորութիւնն էլ է դիւրացնում, որով կրկնակի օգուտ է լինում. վերջապէս ձեր մեղրին սքանչելի անուշահոտութիւն տալու համար վայրի մրփենի էլ տնկեցէք, որի գեղեցիկ ողկուզաձև ծաղիկները բացի իրենց անուշ հոտից, զարդ են կազմում։ Որքան հոտաւէտ ծաղիկներ շատ ունենաք ձեր պարտիզում, այնքան անուշահոտ կլինի ձեր ունեցած մեղրը, և այդ բանի մէջ է կայանում լաւ մեղւաբուծի գաղտնիքը։

ՄԵՂՐ ՀԱՒԱՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արեգակ եղած մի գեղեցիկ օր քաջութիւն ունեցէք և բնաւ չվախենաք ձեր մեղուներից։

Քօղը գլուխներդ անցկացրէք, ծխոցը պէտք է մխայ, այս ծխոցը մի տեսակ փքոց է, որ ծառայում է գործիքի մէջ դրւած կրակը արծարծելու, այս գործիքի վերայ դրւած է լինում խոշոր քուրջ, որ կամաց կամաց ծխում է։ Քուրջը կարելի է մի քիչ էլ ալքոհոլով թրջել։ Ծու-

խը բարձրանում է ծխանից առաւել կամ նւազ թանձր փուքի տրւած զարկի համեմատ: Մեքենայական փքոցները որ զսպանակով են գործում, բաւականին դիւրին է: Հարկաւոր է ծուխը չափաւոր կերպով մեղուների վերայ տալ, որպէսզի չափազանց չը կատաղեն և անհանգիստ չլինեն: Ծուխը պէտք է միմիայն մեղուներին թմրեցնելու ծառայէ, որպէսզի չը վնասեն: Երբ մեղուները սկսում են իրենց թևերին խփել, պէտք է հասկանալ, որ ծխումը դադարեցնել է հարկաւոր: Ծխումը վերստին շարունակելու է այն ժամանակ միայն, երբ մեղուները սպառնում են շրջանակի բոլորը ցատկել: Վրձինը և դանակը ձեռքերիդ, մօտեցէք և ծուխ տւէք փեթակի դռանը, վերցրէք փեթակի վերի մասի կափարիչը, որի նպատակն է տաքութիւնը փեթակի մէջ տարածել: Երբ բոլորը ճշտութեամբ կատարեցիք, զգոյշ կերպով ծուխ տալով վերցրէք տախտակներից մէկը և լաւ դիտեցէք պաշարը, որ իւրաքանչիւր շըրջանակ անպայման լցւած լինի 9 ֆունտ: Այնպէս արագութեամբ շարունակեցէք ձեր քննութիւնը, որ ամեն ժամանակ ձեզ յայտնի լինի մեղրի քանակութիւնը 36—45 ֆունտ պէտք է թողնել փեթակի մէջ, մնացածը ձերն է: Եթէ առանց արտահանիչի կամենում էք մեղր առնել, դանակով խորիսխի երեսների կնիքները բացէք և ձգեցէք

մի ամանի մէջ. որ մեղրը կաթէ. տաք տեղում հետևեալ օրը միևնոյն բանը կրկնեցէք միւս երեսի համար: Դատարկ շրջանակների վրայ դրէք փեթակ, նրանք մաքրում են: Եթէ չափից աւելի մեղր էք վերցրել, ծնուցիչի մէջ շաքարով օշարակ լցնել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Մեղուներին աջող կերպով կառավարելու համար անհրաժեշտ են մի քանի գործնական խրատներ մեղւաբուծների համար: Սկսնակները պէտք է գիտենան որ՝ հակառակ շատ գիւղացիների ունեցած կարծիքի մեղուն իր տէրոջը չի ճանաչում: Ուստի նրանց հետ պէտք է միշտ զգուշութեամբ վարւել, առանց բուռն ընթացքի պէտք է միշտ չափաւոր շարժումներ անել, արագ շարժումներ երբէք հարկաւոր չեն: Եթէ վերայիցդ անուշ հոտ է բուրում, երբէք մեղուներին մի մօտենաք, դարձեալ չպէտք է մօտենաք և այն ժամանակ, երբ քրտնած էք: Եթէ տիկինները իրենց վերայ մի որևէ հոտ են քսել, բնաւ չմօտենան մեղուներին: Կենդանիները՝ մանաւանդ որսկան շները պէտք է փեթակից հեռու պահել: Շատ անգամ մեղուները այցելուների մազերի մէջ են խուժում և սոսկալի կերպով խայթում են, պատճառը լինում է նրանց գլխին քսած իւղադեղը,

քացախէ կամ գլխին քսած մի որև է հեղուկ։ Երբ օդը փոթորկալից է, լաւ չմերձենալ մեղուներին։ Հարկաւոր չէ նրանց անհանգիստ անել անձրևի ժամանակ և վերջապէս իբրև վերջին յանձնարարութիւն՝ չպէտք է մի սկսնակ առանց դէմքը ծածկելու փեթակին մօտենայ։ Մեղուներին ազդած վախը չափազանցուած է։ Նրանք ամէն բանով աշխատաւորներ են, որով չեն կամենում, որ մէկը իրենց աշխատութիւնը խանգարէ և այս պատճառով նրանք իրենց անհանգստացնողներին գիտեն արժանաւոր պատիժ տալ։

....

ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԴՈՒՐՍ ԴՆԵԼ.

Երբ ձիւնը դաշտից վերանում է. օրերը այնքան տաքանում են և մեծ ցրտեր էլ չեն սպասւում, տուն դրած մեղուներին պէտք է դուրս դնել և բոլորին մի անգամից։ Ընտրել տաք և հանգիստ օր և գործը սկսել հէնց առաւօտեանից, որպէսզի նրանք կարողանան օրւայ ընթացքում թռիչք գործել մաքրւելու համար։ Նախապէս պէտք է պատրաստել փեթակների տեղը։

Փեթակները պէտք է դնել բոլորովին հօրիզոնական դիրքով, իրենց անցեալ տարւայ տեղը, գետնից ոչ շատ բարձր՝ ագուռների կամ փայտերի վերայ, իրարից այնքան հեռու, որ

մեղւապահը աշխատելիս կարողանայ ազատ շարժուել։ Դուրս դնելու ժամանակ փեթակի արկանոցը պէտք է ծածկած լինի, բաց անել, երբ նրանք հանգստացած կլինեն, մօտաւորապէս կէս ժամից յետոյ։ Մեղուների մաքրւելուց յետոյ, հարկաւոր է փեթակների արկանոցները փոքրացնել՝ փեթակի մէջ տաքութիւն պահելու և գողութեան նախազգուշութեան համար։ Յաջող ձմեռած ընտանիքները անմիջապէս դուրս են թռչում մաքրւելու և շուտով հանգստանում են։

Այն ընտանիքները, որոնք թռիչք գործելուց յետոյ չեն հանգստանում և մեղուները դուրս ու ներս են անում, կարծես մի բան որոնելիս լինեն, նշան է, որ մայր չունեն։ Կարող է պատահել և այնպիսի ընտանիքներ, որոնք սովից թուլացած լինեն, դրանց հարկաւոր է տաք շաքարաջրով սրսկել, պաշար տալ. փակել արկանոցը և դնել գոլ սենեակում, մինչև ոյժի գալ։ Անհրաժեշտ է հէնց նոյն օրը հարևանցիօրէն վերևից նայել բոլոր փեթակներին՝ ստուգելու պաշարի քանակութիւնը։ Որտեղ պաշար չը կայ, պէտք է տալ մեղրահաց կամ դնել շրջանակների վերայ՝ քաթանի տակից, շաքարի կտոր՝ չոր կամ ջրի մէջ թաթախած մօտաւորապէս 2—3 ֆունտ։

Ս. Բարխուդարեան

ԹՌՉՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Մեզանում՝ Անդրկովկասում մինչև օրս գիւղատնտեսութեան այնպիսի ճիւղը, որպիսին թռչնապահութիւնն է, բոլորովին անուշադիր է թողնուած: Շատ անգամ լսում ես, թէ թռչնապահութեան օգուտը կայանում է հէնց նրանում, որ իրենք տէերը գործ են ածում թարմ ձուերը, իսկ վաճառք հանած արդիւնքները, իբր թէ շատ անգամ չեն ծածկում նոյն իսկ թռչունների կերակուրի վրայ արած ծախսն և դրա վերայ գործ դրած հարկաւոր սարք ու կարգի ծախսերը:

Այս կարծիքի սխալ լինելը աչքի է զարնում մանաւանդ երբ մենք ծանօթանում ենք այն թւերի հետ, որոնք ցոյց են տալիս թէ ինչ չափերի է հասել Ռուսաստանից Եւրոպա, մանաւանդ Անգլիա և Գերմանիա արտահանւող թռչնապահութիւնից ստացուած մթերքները: Այսպէս՝ օրինակ արտահանուած են թռչնապահական մթերքներ՝

1870 թւին	. .	1000,0000 ռուբ.
1880 »	. .	$3^{1}/_{0}$ միլ. ռուբ.
1880 »	. .	19 միլ. ռուբ.
1890 »	. .	42 միլ. ռուբ.
1905 »	. .	72 միլ. ռուբ.
1907 »	. .	75 միլ. ռուբ.

Միմիայն 1905 թւին 72 միլիոն ռուբ. արտահանութեան ընդհանուր գումարը զանազան

մթերքների վերաբերմամբ բաժանուած է եղել այսպէս —

Ձուեր արտահանուած է 61 միլ. ռուբլու.

Թռչուններ կենդանի և մորթած $9^{1}/_{0}$ մ. ր.

Աղւամազ (դու) և փետուրներ, 600,000 ր.

Դուրս է գալիս, որ թռչնապահական մթերքների արտահանութեան շատութեան կողմից Ռուսաստանը աշխարհիս առաջին պետութիւնն է: Սրանից հետևում է այն, որ եթէ թռչնապահութիւնը ձեռնտու պարապմունք չլինէր, հազիւ թէ նա այս 37 տարւայ մէջ կարողանար այսքան զարգանալ:

Մեզանում թռչնապահութեան անշահաւէտութեան մասին տարածուած սխալը կայանում է նրանում, որ մենք խորթ աչքով ենք նայում այդ ճիւղի վերայ, կատարելապէս անծանօթ ենք այդ թէև փոքրիկ, բայց գիւղատնտեսութեան մէջ կարևոր պարապմունքի հետ: Օրինակի համար Ֆրանսիայում այժմ բազմաթիւ գիւղեր և շէներ կան, որ վաղուց արդէն թողած երկրագործութիւնը, ապրում են միմիայն թռչնապահութեամբ (օրինակ Դուդան, Մանս և ուրիշները): Հիւսիսային Ամերիկայում կան շատ ու շատ տնտեսութիւններ, որ միմիայն թռչնապահութիւնից տարեկան մի քանի տասնեակ հազար ռուբլի մաքուր եկամուտներ են ստանում: Այդպիսով

տնտեսութիւններից մէկի տէրը՝ թռչնապահ Լաուլինը տարին տասներկու ամիս պահում է 3000 հատ ձու ածող թռչուններ, որից 2400 ը յատկապէս ձու ածող տեսակներից, որոնց ձուերը մշտապէս վաճառք են հանւում և 600 հատ էլ ուրիշ խոշոր թռչուններ՝ մսացուի տեսակէտից, որոնց ձուերը գնում են միմիայն արհեստական կերպով ճուտեր հանելու վրայ: Ամեն օր՝ տարւայ ընթացքում նրա թռչունները բերում են 300 ճուտ, իսկ ձուածեր թռչուններից միջին հաշւով օրական նա ստանում է 150 դիւժին կամ 1800 հատ ձու: Այս գործի վերայ Լաուլինը դրել է 120 հազար րուբլի և այժմ ստանում է տարեկան 28000 րուբլի մաքուր եկամուտ, այսինքն ծախսուած գումարից մի շատ մեծ տոկոս:

Բայց այդ բոլորի համար անհրաժեշտ է գիտութիւն, հմտութիւն, սէր դէպի գործը և ձեռներէցութիւն: Մեզանում այդ կողմից կլիմայական պայմանները ձեռնտու են, թռչունների կերակուրը համեմատաբար էժան, ուստի և ամենայն յաջողութեամբ և շահաւէտութեամբ կարելի է պարապել թռչնապահութեամբ:

Նա, ով որ միջոց և հնարաւորութիւն չունի այս գործը ուսումնասիրել լաւ դրւած թռչնապահական տնտեսութեան մէջ, այսպիսին կարող է սկզբում դրա հետ ծանօթանալ տեսականապէս

ձեռնարկներից, գրքերից և ապա հետզհետէ ըսկսելով գործը փոքր ծախսերով, կարելի է ձեռք բերել բաւականին փորձառութիւն և հմտութիւն, որոնցով նա կարող է առանց վախի գործը ընդարձակել:

Նրանց, որոնք ցանկանում են ուսումնասիրել արդիւնագործական թռչնապահութիւնը գործնականապէս կարող ենք խորհուրդ տալ մտնել Ռուսաստանում գտնւող յատուկ թռչնապահական դպրոցներ՝ Օ. Մ. Օրլովի (Ст. Боровика, Николаевск. дороги) և Մ. Անդրէեվի դպրոցը (Ст. Лихая Юго-Вост. ж. д. станція Каменская): Այդ դպրոցների դասընթացքները անցնելու համար հարկաւոր է 3 ամսից մինչև երկու տարի. դրանք երկուսն էլ կառավարութիւնից նպաստ ստանում և դրանցից առաջինը, որպէս ամենահինը, բաց է թողել բազմաթիւ հմուտ թռչնապահներ:

Ս. Դերոգլավ

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթնատու կովերի նշանները: Լաւ կաթնատու կովը ունի հաճելի տեսք, քնքոյշ կազմուածք, բարակ ոսկորներ և փափուկ ու առաձգական կաշի, որը կարելի է իմանալ սեղմելով երկու մատների մէջ պոչի վերին և վզի կողմի կաշին: Մարմինը երկար և ոտները կարճ ու մանր, նեղ և երկար գլուխ, բարակ և մանր պոզեր, կաշւի տակի ճարպը և առհասարակ մկանունքները շատ քիչ զարգացած են և այդ պատճառով ոսկրային մասերը աւելի են աչքի ընկնում։ Լաւ կովի կուրծը լինում է մեծ և երկարացած դէպի ըստամոքսը, կուրծը ծածկուած է լինում բարակ և քնքոյշ մազմզուկով. ինքը՝ կուրծը կթելուց յետոյ պէտք է դատարկուի, փոքրանայ և կախ ընկնի։ Պատահում է որ կուրծը թէև մեծ է լինում, բայց շատ քիչ կաթ է տալիս և կթելուց յետոյ շատ չէ փոքրանում, դա նշան է որ կուրծի մեծութիւնը առատ կաթ լինելուց չէ, այլ ուղղակի ինքը կուրծը մսալից է, ճարպային մասերը աւելի զարգացած են և մէջը քիչ կաթ է տեղաւորւում. Կրծի պտուկները պէտք է դասաւորուած լինեն կանոնաւոր և քառանկիւնի ձևով, միջին մեծութեամբ և ոչ կոշտ. երիտասարդ կովերը հա-

մեմատաբար աւելի մանր պտուկներ ունեն, քան մի քանի անգամ ծնած կովերը, որովհետև շարունակ կթւելով, նրանք զարգանում են։ Բարակ և երկար պտուկները լաւ նշան չեն։

Կովեր ընտրելիս պէտք է ուշադրութիւն դարձնել նաև կաթնաջղերի և կաթնափոսի վերայ: Այն երակները, որոնց միջով կրծքի արտաքին մասերով արիւն է հոսում, միանում են և կազմում երկու աւելի խոշոր ճիւղաւորութիւն, որոնք կաշւի տակով անցնելով, մտնում են փորի միջին գծի մօտ գտնուած մի փոսի միջով ներս, ապա այդ փոսը կոչւում է կաթնափոս: Լաւ կաթնատու կովերի կրծի վրայի երակները և կաթնաջղերը հաստ և ուռած են լինում, մանաւանդ մի քանի անգամ ծնող կովերինը. իսկ երիտասարդ կովերինը շատ քիչ է նկատելի լինում։ Կաթնափոսը բաւական լայն է լինում, այնպէս որ կաշւի վերայից մատի ծայրը հեշտութեամբ ներս է մտնում։

Կովի կաթնատուութիւնը կարելի է իմանալ նաև նրա նայելուց. կրծքի յետևի մասը և մի փոքր բարձր դէպի պոչը ծածկուած է բարակ և նուրբ մազերով, ծայրերը ուղղուած դէպի վեր, իսկ մարմնի միւս մասերի մազերը ուղղուած են դէպի ցածր, այդ պատճառով էլ յիշուած տեղը որոշ և նկատելի գծերով աչքի են ընկնում, ահա այդ

տեղը կոչւում է կաթնային հայելի։ Հայելին իր սահմանագծերով զանազան ձևեր է ընդունում, երբեմն ուղիղ ամբողջ լայնութեամբ բարձրանում է. երբեմն էլ նրա տեսքը վերևի կողմից ճիւղաւորւում, երկու մասի է բաժանւում և այլն։ Այդ հայելին երբեմն նկատելի է լինում միայն կրծի վերայ, երբեմն էլ բարձրանում է—շատ բարձր դէպի պոչը։ Որքան մեծ լինի հայելու տարածութիւնը, այնքան կովը աւելի կաթնատու կլինի։

Առհասարակ պէտք է աչքի առաջ ունենալ, որ վերոյիշեալ նշաններով կովի կաթնատւութիւնը կարելի է իմանալ մօտաւորապէս. սխալներ կարելի է պատահել, քանի որ կան կովեր, որոնց կաթնատւութեան նշանները, թէև պարզ չեն երևում, սակայն լաւ կաթնատու են և ընդհակառակը. մեծ մասամբ նշանները արդարանում են և ճշտւում կթելուց. պէտք է գործնականապէս վարժւել, այնպէս որ փորձւած կաթնատնտեսը կովին նայելով առանց քննելու նրա նշանները, կարող է իմանալ թէ ինչ տեսակ կովի հետ գործ ունի։ Աւելի վստահօրէն և հեշտ կարելի է իմանալ ծնւած կովի յատկութիւնները, որը արդէն կաթ է տալիս, բաւական է երկու օր կթել և ամեն անգամ կշռելով իմանալ թէ օրական որքան կաթ է տալիս։ Մէկ օր կթելը բաւական չէ, քանի որ կովը ծախողը դիտմամբ կարող է նախ-

ընթաց օրը չկթել և փորձի օրը պատահմամբ կաթ շատ կը ստացւի։

Երբ կաթնատնտեսը կաթը գործ է ածում իւղ շինելու համար, պէտք է առնելուց փորձնական կթելու ժամանակ կաթը կաթեցնէ մատի եղունգի վերայ, ջրալի կաթը եղունգի վերայ չի մնայ, բաժակում կաթ ածելուց և յետ թափելուց բաժակի պատերի վերայ հետք չի թողնի, ջրալի համ ունի և կապտագոյն է լինում, իսկ թանձր—իւղալի կաթը ընդհակառակը եղունգի վերայ մնում է կաթիլաձև, բաժակի պատերի վերայ թողնում է թանձր, սպիտակ հետք և իւղալի համ ունի։

Յ. Մէլիք-Բախտամեան

~~~~~

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

«Կաթը կովի լեզուի վերայ է» ասում է ռուսաց առակը։ Կերակուրն է որ արտադրում է կաթ. մի մասը ընդունած կերակուրի ծախսւում է կենդանու մարմինը պահպանելու, իսկ միւսը կաթի փոխւելու, եթէ կերակուրը բաւականաչափ սննդարար և առատ չը լինի, որ չը կարողանայ պահպանել կովի մարմինը, առաւել ևս անկարող կը լինի արտադրել կաթ։ եթէ կովերը խիստ կե-
~~~~~

ըակրենք, այն ժամանակ մի մասը կը գնայ նրա մարմինը պահպանելու, մի մասն էլ կաթ արտադրելու, իսկ աւելորդ սնունդը կը փոխուի ճարպի. կովը կսկսի գիրանալ. իսկ այն դէպքում երբ կովը սկսում է չաղանալ, կաթի քանակութիւնը հետզհետէ պակասում է, ուրեմն լաւ կաթնատու կովը պէտք է կերակրել բաւականաչափ և հաշւով։ Կովը ծնելուց, երբ արդէն սկսում է կաթ տալ և մինչև ցամաքելը, երբ մօտենում է հետեւալ ծնունդը, ունի երեք կաթնային շրջան. առաջին շրջանը, որը տեւում է մօտ երեք ամիս, կաթը շարունակ աւելանում է. երկրորդ շրջանում արտադրած կաթի քանակութիւնը մնում է նոյնը՝ ինչքան էլ առատ կերակրելու լինէք. այս շրջանը տեւում է նոյնպէս մօտ երեք ամիս։ Երրորդ և վերջին շրջանում կաթը հետզհետէ պակասելով կովը ցամաքում է մինչև հետեւեալ ծնունդը, որի տեւողութիւնը լինում է երկար կամ կարճ, նայած կովի տեսակին։ Հասարակ կովը ծնելուց դեռ 2—3 ամիս առաջ է ցամաքում, իսկ եթէ ընտիր տեսակի է, կաթ տալիս է գրեթէ մինչև ծնելու նախընթաց շաբաթը։

Կաթնատւութեան այս երեք շրջանները աչքի առաջ ունենալով, ըստ այնմ էլ պէտք է շատ կամ քիչ կերակրել։ Այսպէս՝ ծնելուց յետոյ պիտի հետզհետէ կերակրել աւելի ու աւելի առատ,

մինչև որ կովի կաթը աւելանայ, երբ եկաւ այն շրջանը, երբ այլևս կաթի քանակութիւնը մնում է նոյնը, պէտք է կերակրել և առատ չափով, իսկ երբ կովը սկսում է պակասեցնել կաթը, պէտք է տւած կերակուրն էլ պակասեցնել։ Երբ կովանոցում շատ կովեր կան, պէտք է նրանց բաժանել երեք խմբի, շատ կաթ տւողների, միջակ կաթ տւողների և քիչ կաթ տւողների և կամ ցամաքածների։ Առաջին խմբի կովերին պէտք է աւելի խիստ կերակրել, երկրորդ խմբին՝ միջակ և երրորդ խմբի կովերին՝ աւելի պակաս։ Եթէ նոր ծնած կովը լղար է, պէտք է աւելի կերակրել, քան մի ուրիշը, որ ծնելուց ուժասպառ չէ եղել և չաղ է։ Սակայն պէտք է աւելացնել, որ կովը ծնելուց անմիջապէս յետոյ՝ 1—2 օր պէտք է չափաւոր կերակրել. հակառակ դէպքում ստամոքսի խանգարում կարող է առաջ գալ։ Կովերը երեք խմբի բաժանելու համար հարկ չկայ նրանց տեղափոխել, քանի որ անհանգստութիւնը և տեղը փոխելը պատճառ է լինում կաթը պակասելու. բաւական է, որ մսուրքի վերայ իւրաքանչիւր կովի գլխին նշանակել համարներ 1, 2 և 3 և այս համարներով էլ առաջնորդւել կերակրելիս։ Կաթնատու կովերին բացի խոտից պէտք է տալ ալրով հարուստ կեր. օրինակ՝ հացահատիկներ, թեփ և այլն։

Պէտք է աչքի առաջ ունենալ նաև կովի մեծութիւնը և քաշը. մեծ կովին պէտք է աւելի կերակրել, քան փոքրին. օրինակ տեղական լեռնային տեսակի կովերը աւելի քիչ պահանջ ունեն, քան դաշտային և ընտիր տեսակի մեծ կովերը: Կովերը պէտք է կերակրել, իւղի կամ կաթի, այսինքն ստացած կաթից իւղ կամ պանիր պէտք է շինե՞լ, թէ՞ բնական կաթ պէտք է ծախել: Առաջին դէպքում տալիս են չոր կերակուրներ, օր. չոր խոտ, ալիւր, թեփ և այլն, իսկ երկրորդ դէպքում, բացի չոր կերակրներից, նաև ջրալի կերակուրներ, օր. օղիի և գարեջրի գործարանների մնացորդով (եփած ցորեն կամ գարի) ճակընդեղ, գետնախնձոր (կարտոֆիլ) ևայլն:

Միջին մեծութեան տեղական կաթնատու կովին պէտք է տալ 1) 25—30 ֆ. չոր և լաւ խոտ, կամ 2) 20 ֆ. խոտ, 6 ֆ. դարման՝ խառնած 4 ֆ. թեփով, կամ 3) 15 ֆ. խոտ, 15 ֆ. ճակընդեղ կամ գետնախնձոր, 6 ֆ. դարման, 3 ֆ. թեփ և 1 ֆ. կանեփի քուսպ կամ 4) 15 ֆ. խոտ, 20 ֆ. գարեջրի եփած գարի, 6 ֆ. դարման և 1 ֆ. քուսպ և այլն:

Կովերի կերը պէտք է տալ կանոնով և որոշ ժամերին, օրական երեք անգամ, հաւասար ժամանակամիջոցներին՝ առաւօտեան ժամի 4-ին, ցերեկուայ 12-ին և երեկոյեան ժամի 8-ին:

ՅՈՎ. աւ. քահ. ՏԷՐ-ԴԱԼՍՑԵԱՆ

(Տես երես 265)

«ՀԻՐԱԿ» 1910 թ.

Անհրաժեշտ է կովերին տալ աղ, սրա համար պէտք է քար աղը դնել մսուրքի մէջ կամ աւելի լաւ է մի փոքրիկ արկղի մէջ դրած և կամ թոկով կախել մօտը։ Կովերին ջուր խմացնել պէտք է օրական 2—3 անգամ, չոր կերակուր ուտելիս ջուր աւելի շատ է պահանջում. Ջուրը պէտք է մաքուր լինի և ոչ շատ սառը. ցանկալի է հոսող գետակի կամ առուի ջուր, բայց ոչ խոկոյն աղբիւրի մօտ։ Կովերը կանաչ խոտի քշելու պէտք է սպասել մինչև խոտը կը ցամաքի ցօղից, շատ շոք ժամերին պահել հով տեղերում։ Միանգամից ամբողջ արօտը ոտքի տակ չը փչացնելու համար, աւելի խելացի կլինէր բաժանել մասերի և հետզհետէ արածացնել. մինչև վերջին մասը արածելը, առաջին բաժանմունքների խոտը արդէն դուրս եկած կլինի։ Չոր կերից կանաչ խոտի փոխելու և կամ արօտից չոր կերի կապելը պէտք է կատարել զգոյշ և աստիճանաբար, այսինքն գարնանը կանաչ խոտի քշելուց չպէտք է չոր խոտը միանգամից կտրել և ընդհակառակը՝ աշնանը չը պէտք է կանաչ խոտից միանգամից զրկել։

Ց. Մելիք-Բախտամեան

ԿՈՎԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԿԹԵԼ

Կովերին կթելու համար մեծ վարպետություն է հարկավոր, պետք է այնպիսի պայմաններում կթել, որ թե կաթ շատ տայ և թե ընտիր լինի. որովհետև կթելու եղանակը թե կաթի յատկութեան և թե քանակութեան վերայ մեծ ազդեցութիւն ունի։

Այս ասածներիս վերայ նոր փորձեր արդէն կատարուել են և ահաւասիկ նրանց կէտերը՝

Տասը պատվիրան կով կթողներին

1. Չափազանց խուսափեցէք կամաց կթելուց, եթէ ոչ սերի մի մասը կը կորցնէք։

2. Կթել մինչև վերջին կաթիլը, իմացած եղէք, որ ամենից վերջը եկող կաթը շատ ընտիր է։

3. Ամեն օր միևնոյն ժամին կթեցէք։

4. Հարկաւոր է խաչաձև կթել, այսինքն մի անգամ առաջի կողմից, քիչ էլ ձախ կողմից և այդպէս փոխադարձաբար։ Այս կերպ կթելով աւելի կաթ կստանաք, քան զուգահեռաբար։

6. Հինգ մատով պէտք է կթել, ոչ թէ միայն ցուցմատով, ինչպէս շատ կով կթող մարդիկ ու կիներ անում են այդպէս։

6. Կթելու մեքենաներ բնաւ հարկաւոր չեն։

7. Անհանգիստ կովերին կթելու համար, հարկաւոր է նրանց առաջի մէկ ոտքը գետնից բարձր բռնել, այդ ժամանակ միայն հանգիստ է կանգնում։

8. Կթողի ձեռքերը միշտ մաքուր պէտք է լինի, մաքուր պէտք է լինի նոյնպէս ծծի պըտուկները, կթոցը և կթելու ամեն մի գործիքը՝

9. Կթելու ժամանակ սաստիկ զգուշացէք, որ կովերն մի որևէ բանից չը յուզւեն։

10. Կթան կովին յամենայն դէպս պէտք է հանդարտութեան մէջ պահել։

ԵՂՋԻՒՐԱՒՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՈՐԻ ՓՔՈՒԼԸ (տիմպանիտ)

Եղջիւրաւոր կենդանու փորի փքւիլը շատ անգամ ամառն է պատահում, երբ անասունը ագահաբար արածում է ցողապատ, անձրևոտ կամ եղեամով ծածկած խոտը։ Երբեմն այս հիւանդութիւնը երևում է նաև մեծ քամիների ժամանակ էլ, որի միջոցին անասունը արոտի հետ ըստիպւած է լինում կուլ տալ նաև օդի մեծ հոսանք։ Փորի փքւիլը պատահում է նաև գոմում կապած ժամանակն էլ, երբ տալիս են նոր քաղած և իրար վրայ դարսած տաքացած (վառւած) թարմ խոտ, նոյնպէս և կաղամբի, բազուկի, կարտոֆիլի և ուրիշ սրանց նման բոյսերի

փքած. հատած ու բորբոսնած տերևները ուտել, որանք փքացաւ (տիմպանիտ) են առաջացնում, նոյնպէս փքացնում է կանաչ առւոյտը (եօնջա), կոնգանր, կանաչ արտը և գուտ կարլի կամ ցուբենը, մանաւանդ՝ երբ կուշտ ուտելուց յետոյ անմիջապէս վրէն ջուր էլ խմէ:

Հիւանդութեան նշանները: Հիւանդութիւնը յանկարծ է երևում, դրա նշաններն են անասունի փորը սաստիկ փքւում—ուռչում է, մանաւանդ ձախ բդակողմը (пахъ). երբ ձեռքով թխկացնում ենք, թմբուկի ձայն է հանում, շնչառութիւնը արագանում է, աչքերը արիւնակալւում, ճեպռոտում են, կենդանին տնքում է ու կանգնած է ոտքերը չռած, մէջքը ծռւում է ու պոչը քիչ վեր բարձրացած, բերնիցը լորձունք է ծորում:

Բժշկութիւնը: Պէտք է ամեն հնարք գործ դնել. որ հիւանդացած կենդանին քամի դուրս թողնի, որ փորի մէջ ժողոված գազերը անհետական կերպով դուրս հանուեն. դրա համար 1, լեզուն բռնում՝ դուրս են քաշում, կամ թէ փաթաթում են կենդանու դունչը ճրագւում, կամ դաթրանում, սապնաջրում կամ սրանց նման սուր և կենդանու համար անախորժ հոտ ունեցող հեղուկում թրջած հայահատիկների ծղոտի (բէլումի) ճօպանով (ոլորած չւանաձև), ճօպանի ծայրերը ամրացնել եղջիւրներին և ստիպել. որ

շատ ման գայ: 2, Ձեռներով տրորել ձախի բդի թուլակողը, փորի վերայ սառ ջուր ածել, մանաւանդ ձախ կողմը. մինչև անգամ լաւ կը լինի, որ հիւանդին քշեն—լողացնեն գետի կամ լճի մէջ. իսկ խմացնում են հետևեալ բաներից մէկն ու մէկը.

1, Մի հացի գդալ նաշատիրնի սպիրտ խառնել մի շիշ հասարակ ջրի կամ սապնաջրի հետ, խմացնել մի ժամւայ մէջ երկու անգամ, ամեն կէս ժամից յետոյ կէս շիշ:

2, 2—3 հացի գդալ սկապիդարը խառնում են կէս շիշ արաղի հետ ու ածում մէկ շիշ ջրում և խմացնում:

3, Մէկ-մէկ չայի գդալ դաթրան կամ թէ նաւթ, խառնում են մէկ շիշ ջրի հետ ու միանգամից լցնում փորը, եթէ մի ժամից յետոյ թեթևութիւն չերևայ կրկնել նոյնը:

4, 5—6 մսխալ սկապիդար 1 և կէս—2 շիշ կրաջրի հետ խառնել ու խմացնել: Կրաջուրը պատրաստւելու է այսպէս. մէկ շիշ ջրում լցնել 2 չայի գդալ չրացած կիր, երբ կիրը ջրում լաւ բացւեց ու շիշի տակը նստեց, վերցնել պարզած ջուրը, խառնել սկապիդարի հետ ու խմացնել:

և 5, Լաւ օգնում է նաև սխտորը. վերցնել 2—3 գլուխ սխտոր, հաւանկում ջարդել կամ դանակով մանր կտորել. եփել 2 շիշ կաթում ու

ամեն $^1/_4$ ժամը տալ շինած դեղից $^1/_4$—մինչև կէսը։

Իսկ եթէ այս դեղերից ոչ մէկն էլ չօգնեց, և տեսնում էք, որ կենդանին վտանգաւոր դրութեան մէջ է, պէտք է շուտով ծակել կենդանու ձախ թուլակողը, յետի բդի հէնց մէջ տեղը. ծակելու է նոր կամ շատ մաքուր սուր զմելիով (գրչանի դանակով), դանակը խրել ծուռ՝ դէպի վեր և ցած, ու վէրքի մէջ պիտի պահել այնքան ու պտտացնել, մինչև որ գազը շշուկով դուրս գայ. ի հարկէ, գազը մի անգամից դուրս չի գայ, այլ կամաց-կամաց, եթէ միանգամից և առատ հոսանքով դուրս գայ, կարող է կենդանին ուղեղի սակաւարիւնութիւնից սատկել։

Ծակում են գլխաւորապէս դրա համար յատուկ շինած խթանով (троакаръ). երկաթէ գործիքներ ծախող խանութներում կարելի է ճարել և ամեն մի անասնատիրոջ համար պէտքական բան։ Տրօակարով ծակելիս վէրքը խողովաձև է լինում, և գազը ընդմիջումով դուրս գալով, վէրքի բերանը բացւում—փակւում է։

Կենդանու փորի փքւիլը շուտ-շուտ երևացող դէպք է. պէտք է զգոյշ լինել և աշխատել դրա առաջն առնել, այն է, ա. չթողնել կենդանուն արածել այնպիսի տեղ, որից կարող լինի փքւիլ (եօնջատեղում կամ կանաչ արտերում), բ. արօտ

դուրս հանելուց առաջ կերակրել նրան չոր խոտով և գ. հնձած կանաչ խոտը երար վրայ դարսած երկար չպահել, որ տաքանայ և հիւանդացնէ կենդանուն, այլ պէտք է նոր հնձած խոտը փռել, շուտ-շուտ շուռ տալ, որ թէ ցամաքի և թէ տաքանալուց, վառւելուց ազատ մնայ։

Ոչխարի փորը որ փքւում է, տալիս են 1 չայի գդալ սկապիդար՝ խառնած 2—3 հացի գդալ արաղի հետ կամ թէ կամֆօրնի սպիրտի հետ, ամեն քառորդ ժամը 2 չայի գդալ։

Մ. Ա. Գալկին

ԴԱԲԱՂԻ ԴԷՄ ՄԻՋՈՑ

Հէնց որ եղջիւրաւոր կենդանիների վրայ երևում են դաբաղի սկզբնական նշանները, այն է՝ բերանիցը սկսում է ծորել լորձունք (թուք), կենդանին գլուխը կախ, կարծես մտածողութեան մէջ է ընկնում. ակամայ, կամ թէ բոլորովին դադարում է արօտ անելը. այս դէպքում պէտք է ուտեցնել նրան աճառի չոր ալիւր (ржная мука), մի բաժակ ալիւրի հետ խառնել մէկ գդալ բոված շիբ։ Կրկնել այս դեղը պէտք չէ. մի անգամն էլ բաւական է, կենդանին մէկ—երկու օրից յետոյ բոլորովին կառողջանայ։

Գիւղերում երբ չգտնւի բոված չիր (квасцы
պէտք է դիմել գեղատներին։

Ոչխարի կճղակի դաբաղ եղած դէպքում պէտք է նրան լաւ լւանալ սովորական ջրով, յետոյ 2 բաժակ եռման ջրին խառնել 1 թէյի գդալ բոված չիր, սառեցնել և գրանով լւանալ հիւանդ կճղակը. այս անել օրը մէկ կամ երկու անգամ. յետոյ չոր չորով լաւ փաթաթել, որպէս զի կճղակի մէջ ցեխ կամ հող չը լցւի։ Բացի այն հարկաւոր է վերցնել 1/8 դեղատան փեյլին բոյսից, եփ տալ ինչպէս թէյ, խառնել պաղ ջրի հետ և խմացնել ոչխարին, ինչքան ուզում է թող խմէ (նա յօժարութեամբ կը խմէ). մէկ երկու օրից յետոյ կենդանին կառողջանայ։

Առհասարակ դաբաղ հիւանդութիւնը բժշկւում է ամեն տեսակ տտիպ նիւթեր կամ ախտահանիչ միջոցներ գործածելուց։

Պէտք է հիւանդ կենդանուն պահպանել կոշտ և փուշոտ սնունդից։

Ուրեմն ախտահանութիւնը տտիպ դեղերը և մաքրութիւնը միակ միջոցներն են դաբաղի դէմ։

Земледѣлецъ

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ

Համառօտ խրատներ

1. Շերամի սերմը չպէտք է արկղի մէջ պահել, այլ պէտք է պահել այնպիսի սենեակում, որտեղ ցուրտ և չոր օդ լինի։

2. Եթէ մնում է 20 օր սերմը զարթեցնելու ժամանակին, մի 10 օր պէտք է կարօրկէն բաց անել, սերմը փոքրիկ մէշօքից հանել և լցնել կարօրկի մէջ, դնել այն սենեակում և թողնել մինչև 10 օր, որտեղ իրենք ձմեռը ապրել են։

3. 10 օրից յետոյ պէտք է մի փոքրիկ սենեակում վառարան վառել, սենեակի տաքութիւնը պէտք է լինի 16—17 աստիճան, դնել սենեակում մի սեղան՝ վառարանից 3—4 արշին հեռու, սեղանի երեսը թուղթ փռել, սերմը փռել թղթի վերայ այնպէս, որ մէկ սերմը միւսի վերայ չլինի և ձեռք չտալ մինչև զարթնելը։

4. Զարթնելուց յետոյ սերմի վերայ տերև չպէտք է դնել, այլ սերմի վերայ մի կտոր չիքիլա (մարլա) փռել, ճճուները չիքիլայի ծակերից կբարձրանան նրա վերայ փռած տերևների վերայ, յետոյ սրբելով տերևները ոչ թէ ձեռքով, այլ մի փոքր մաշայով պէտք է վերցնել և դնել առանձին մի թերթ սիօմկայի վերայ։ Ջերմաչափը պէտք է դնել սեղանի վերայ, որտեղ տաքու-

թիւնը պէտք է լինի 17—19 աստիճան։ Այդ տաքութիւնը պէտք է պահել մինչև բօժօժի հաւաքելը։ Օրական 4—5 անգամ պէտք է կերակրել թթի մաքուր և կոտորած տերևներով, առանց ճիւղերի. միւս օրը պէտք է նոր սիոմկայի վերայ փոխել և առաջին օրւայ տւած տերևի տականքը մաքրել և ջերմատանից շատ հեռու ձգել և այնպէս շարունակել մինչև չորրորդ քնից զարթնելը։

5. Անհրաժեշտ է պահպանել ճիճուներին էտաժերկայի վերայ մինչև բօժօժ հաւաքելը, բայց ով յարմարութիւն չունի, գոնէ պէտք է մինչև երրորդ քնից զարթնելը պահէ այնպէս, որ որթերը սեննակի յատակից մէկ արշին բարձր լինեն, որ գետնի խոնաւութիւնը որթերին չփչացնի։

6. Չպէտք է թաց կամ սառը տերևով կերակրել, որ վտանգաւոր է, այլ պէտք է կերակրել չոր տերևով և տերևի տաքութիւնը սեննակի տաքութեան հետ հաւասար պէտք է լինի և այսպէս շարունակ կերակրել մինչև վերջը։ Եթէ որթերը պահւեն այս խրատներով, անպատճառ մէկ մսխալ սերմից կարելի է վերցնել ամենապակասը 30 փունտ բօժօժ։

Ջերմապահ՝ Ղ. Տէր-Աբրահամեան

ԿՕՕՊԵՐԱՏԻՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մեզանում այլ կազմակերպութիւնների շարքում, վաղուց արդէն զգացւում է կօօպերատիւ միութիւնների պահանջը։

Մեր շուրջը լիքն է տնտեսական անկանոնութիւններով։ Կեանքը քանի գնում թանգանում է, աշխատաւորի նիւթական դրութիւնը ծանր է, իսկ հոգեկան պահանջներին բաւարարութիւն տալու մասին նա մտածելու հնարաւորութիւն անգամ չունի։

Զրկւած աշխատաւորին օգնութեան կարող է գալ կօօպերացիան, որ մի մարդու ոյժից վեր է. սա մի հասարակական գործ է, որի շնորհիւ միացած ոյժերով հնարաւոր է որոշ նպատակի հեշտութեամբ հասնել։

Կօօպերացիայի գաղափարը գոյութիւն ունէր դեռ Քրիստոսի ծննդից շատ դարեր առաջ։

Պետերբուրգում, 1907 թւի հոկտեմբերին «Տրուժենիկ» կոչւած սպառողական ընկերութեան հիմնադիրներից մէկը մի շատ սրամիտ օրինակ բերեց՝ թէ հնումը, արջի որսը լինում էր իսկական կօօպերատիւ հիմունքներով։

Սկզբում, ժողովւում էին առանձին ոյժեր (նոյն բաժնեվճարները), ինչպէս որսորդներ և երբ նրանց թիւը հասնում էր մի որոշ քանակու-

թեան, որ անհրաժեշտ էր գաղանին յաղթելու համար, սկսւում էր որսը. ուրիշ կերպ ասած, ժողովուած դրամագլուխը մեծնում էր շրջանառութեան մէջ։ Աշխատանքը, այս դէպքում նրանք բաժանում էին իրենց մէջ հաւասարապէս։

Ուշի ուշով դիտելով վերջին դարերը, մենք միշտ բոլոր ազգերի մէջ ևս, ամեն տեղ տեսնում ենք միևնոյն կօօպերատիւ գաղափարների սաղմը։ Մի շարք փաստաթղթեր ապացուցում են, որ տասնեակ հազարաւոր եգիպտացիք միացած ոյժերով կառուցել են հսկայական պիրամիդ, որ այժմ իսկ զարմացնում է և հիացնում այն ճանապարհորդներին, որոնք ապշած են այդ հսկայական մեծութեան առաջ։

Ինչպէս հռովմէական ստրուկները միացած ոյժերով կառուցել են այն հրաշալի ամփիթէատրոնը, որ մնացել է մինչև մեր օրերը։

Ինչպէս հին քրիստոնեաները, միևնոյն կօօպերացիայի օգնութեամբ հիմնել և կառուցել են Սուրբ Սոֆիայի հսկայական տաճարը, որի վերայ այժմ փայլում է կիսալուսինը։

Ահա այդ է կօօպերացիայի ոյժը, եթէ այն հիմնուած է աշխատաւորների սերտ միութեան վերայ։

Միացած ոյժերով՝ կօօպերատիւ գործունէութեան արդիւնքները սքանչելի են, հսկայական,

մինչև իսկ հրաշալի։ Դժւարութեամբ է մարդ հաւատում, բայց միայն միութեան տիտանական ոյժը կարող էր այդ գլուխ բերել։

Թէ կօօպերատիւներն ինչ միջոցներով կարող են հասնել առաջադրած նպատակին, այդ հարցի պատասխանը մասամբ տւել էին անգլիական խեղճ ջուլհակները 19-րդ դարի կէսում Ռօչդելու հիմնելով առաջին սպառողական ընկերութիւնը։

Այդ ընկերութեան պատմութիւնը շատ հետաքրքիր է, շատ անգամ է գրել այդ մասին առհասարակ մամուլը։

1843 թւականը առանձնայատուկ ծանր տարի էր անգլիական խեղճ դասի համար։ Ամբողջ ձմեռ սարսափելի անգործութիւն էր տիրում և բանւորների դրութիւնը բոլորովին անտանելի դարձաւ։

Սարսափելի անծայր կարիքից յուսահատւելով, Ռօչդէլեան ջուլհակները վերջապէս համոզւեցին—քանի որ մի կողմից նրանց գործարանատէրն էր ճնշում, իսկ միւս կողմից կողոպտում է խանութպանը, նրանք երբէք չեն կարող կարիքի դէմ կռւել։

Այն ժամանակ նրանցից մօտ 30 մարդ հաստատուն որոշում կայացրին, որ սկզբում գոնէ ազատւեն խանութպաններին ենթարկւելուց և

այդ նպատակով հիմնեցին իրենց համար սեփական սպառողական խանութը։

Օրական նրանցից իւրաքանչիւրը այդ նպատակի համար յետ էր գնում 8 կոպ., այսպէս խեղճ ջուլհակներն մի տարուայ ընթացքում կարողացան ժողովել մօտ 280 ր. և այդ գումարով 1844 թւի դեկտեմբերի 21-ին բացին, այն ժամանակ ամբողջ Եւրոպայում առաջին սպառողական խանութը։

Այդ սպառողական խանութի բացումը մեծ ծաղր առաջ բերեց իւր գրօշանոց ապրանքներով։ Հարևան խանութպանները, որ վաղօրօք համոզուած էին թէ, եթէ ոչ այսօր, վաղը ջուլհակները նորից գլուխները կծռեն իրենց առաջ, ամբողջ թափով ծաղրում էին խեղճ ու աղնիւ մարդկանց։

Բայց կոօպերատօրներն համարձակ ու հաւատով շարունակում էին իրենց մեծ գործը. տարեկան շրջանառութեան վերջին նրանք 7000 ր. աւելի ապրանքի տէր էին։

Հինգ տարի յետոյ մեր ջուլհակներն արդէն սեփական ջրաղացի տէր դարձան. յետոյ բացին մսի ու հացի խանութներ։

Վերջապէս 1859 թւին, այսինքն առաջին խանութը բանալուց 15 տարի անցած, նրանք բացեցին և թել մանելու գործարան, որով գոր-

ծարանատէրերին ենթարկւելուց ազատւեցին։

Այսպէս քայլ առ քայլ տնտեսական անկախութիւն ձեռք բերելով, Ռոչդէլեան ընկերութիւնը, չմոռացաւ և բարոյապէս բարձրացնել իւր անդամներին։ Իրենց գործունէութեան հէնց առաջին տարին, ջուլհակներն իրենց նշանաւոր խանութի կողքին մի ընթերցարան բացին, յետոյ դպրոց և վերջապէս գրադարան, որի մէջ այժմ կայ 20,000 հատոր գիրք....

Հէնց այս փաստերից կարելի է եզրակացնել, թէ Ռոչդէլեան աշխատաւորների գործը ինչ յաջողութիւն ունեցաւ միութեան շնորհիւ

Այդ յաջողութիւնը որոշ չափով բացատրւում է այն սկզբունքներով, որոնք այժմ ամեն տեղ յայտնի են Ռոչդէլեան անունով և որոնք բոլոր կոօպերատիւների համար հիմք պէտք է ծառայեն, ինչպէս լրացուցի կերպով որոշեցին անցեալ տարի ապրիլ ամսին Մոսկւայում տեղի ունեցած կոօպերատիւների համագումարի ժամանակ:

Չպէտք է մոռանալ, որ սպառողական ընկերութիւնը ոչ միայն խանութ է, այլ և ինքնավարութեան ու ինքնագործունէութեան մի դպրոց է։

Կոօպերացիան ոչ միայն առևտրով է պարապւում և կերակրում է, այլ ստեղծում է մի նոր կեանք:

Նա է առաջ տանում մի գործ՝ յանուն աւ-

խաւաճրի ազատութեան, յանուն նոր կեանքի։

Կօօպերատիւ ոյժի մեծութեան մասին գաղափար կազմելու համար տանք մի քանի թւեր յատկապէս Ռուսաստանի կեանքից։

1900 թւին Ռուսաստանում կային ընդամենը 577 սպառողական ընկերութիւններ, չորս տարի յետոյ, այսինքն 1904 թւին նրանց թիւր հասաւ 951-ի, իսկ մի չորս տարի յետոյ՝ 1908 թւին 1448-ի հասաւ։

Ութ տարւայ ընթացքում սպառողական ընկերութիւնների թիւը աւելացաւ 871-ով, այսինքն աւելի քան 150%։

Վարկային ընկերութիւնների թիւն աւելի արագ աճեց տաս տարւայ ընթացքում — 1897 թւից մինչև 1907 թիւը. պետութիւնը թոյլատրել էր բանալու 1520 ընկերութիւն, իսկ յետոյ, մի տարւայ ընթացքում թոյլատրւած վարկի ընկերութիւնների թիւը հասաւ 2315-ի։

Միայն մէկ տարւայ ընթացքում աճեցողութիւնն անցաւ 52%-ի։

Այս փաստերը բաւական են համոզելու համար, որ կօօպերատիւ շարժումը ներկայումս աշխատաւոր մասսաների մէջ գոյութիւն ունեցող շարժումներից ամենից զօրեղն է, որ այդ աչքաթող անել, կնշանակէ կեանքը չտեսնել։

Կօօպերացիան ոչ միայն զարգացնում է

անհատական արտադրող ոյժը, այլ և ստեղծում է մի կատարեալ ոյժ, մասսայական ոյժ. նա ձուլում, հոգեպէս բարձրացնում է մարդուն, նա պատ — ընկերակցական, հասարակական մի կազմակերպութիւն է։

Ամենից առաջ կօօպերատիւը կբարւոքի ժողովրդի նիւթական դրութիւնը, էժանացնելով ու լաւացնելով անհրաժեշտ պէտքերի արժէքն ու որակը, ստիպելով նոյն բանն անել և նրա հետ մրցող վաճառականներին։

Նրանք ներկայանում են ամենալաւ մարտիկներ կեղծած ու վատ ուտելեղէնների դէմ, որ բառիս բուն նշանակութեամբ թունաւորում են քաղաքացիներին։

Գործածութեան անհրաժեշտ պիտոյքների պատրաստելը յանձնելով աշխատաւոր մասսայի ձեռքը, նրանք զօրեղացնում են նրա տնտեսական ոյժը։

Շատ մեծ է նրանց հասարակական-կրթական նշանակութիւնը։

Բժ. Ա. Բուդուղեան

Ի՞ՆՉ Է ԶԵՄՍՏՎՕՆ

Դա նոյն ժողովուրդն է, որը միշտ հարկ է տալիս իր պէտքերի համար. ուսման, ճանապարհների, բժշկի, դեղի, պահապանի համար և տուած փողը մեծ մասամբ գնում է ուրիշ տեղ։

Զեմստվային տուրք, զեմստվային հարկ — սա միշտ էլ կար ու կար, բայց հարկը կար, փողը վճարւում էր, իսկ թէ ո՞ւր էին գնում դրանք, Աստուած է միայն յայտնի։

Եւ միշտ այդպէս կլինի, մինչև որ ինքը ժողովուրդը չգայ և իր տուած փողի տէր չլինի։

Այդ զեմստվօն է, որ տալիս է մեզ, այսինքն այն զեմստվօն, որը համ հարկն է ժողովում, համ էլ ժողոված փողը բաժանում, գործադրում նոյն այդ ժողովրդի տեղական պէտքերի վերայ։

Եթէ հարկը ժողովւում է մի գիւղից կամ մի քանի գիւղերից և գործ է ածւում այդ գիւղերի տեղական պէտքերի համար՝ դիցուք նոր տուն հանելու, դպրոց բացելու, ֆելդշեր պահելու, երկրագործական գործիքների պահեստ ունենալու, գիւղական շտեմարանի վրայ — դա արդէն մանր զեմստվո է։

Ժողոված գումարի հաւաքողն էլ, բաժանողն էլ այդ գիւղն է լինում կամ գիւղախումբը։

Իսկ եթէ գործը վերաբերում է դիցուք մի մահալի կարիքներին, դիցուք Զանգիբասարի, Գառնի-Բասարի. Աբարանի, Շիրակի և Ձորագեալի պէտքերին, այդ դէպքում գիւղերի տուած հարկից մի որոշ տոկոս յետ է ձգւում, տրւում է այդ մահալի զեմստվօյին։

Ահա այդ մահալը դառնում է գաւառամասի (участковая) զեմստվօ—ինքնավարութիւն։

Եթէ բացի գաւառամասից կան ծախքեր, կարիքներ, որ պատկանում են ամբողջ գաւառին—կենդրոնական դպրոց, հիւանդանոց շուկայ, ամբար շինելուն, այն ժամանակ հարկի մի մասը հանւում է և տրւում այդ գաւառին և մենք ըստանում ենք գաւառական, կամ աւելի ճիշտ շրջանային (окружный) զեմստվօ։

Այսպէս գնալով զեմստվօն կարող է աւելի խոշորանալ դիցուք դառնալ նահանգական—ամբողջ նահանգի համար, կամ աւելի մեծ՝ Անդրկովկասեան — մեր երկրի բոլոր նահանգների համար։

Մի խօսքով, զեմստվօն կարելի է անել շատ մեծ և շատ փոքր։ Եւ փորձուած է, որ որքան փոքր է զեմստվօն, որքան քիչ թւով գիւղեր են մտնում նրա մէջ, այնքան դրանց արած գործը, ծախսած գումարը աւելի է իսկական գործին գնում, աւելի է օգնում ազգաբնակութեանը։

Ահա թէ ինչու ժողովրդի ցաւերի բոլոր բարեկամները և ինքը ժողովուրդը ամեն տեղ էլ խնդրում է տալ իրեն մանր զեմստվօ։

Զեմստվօյի կառավարութիւնը—հարկ ժողովողը և Դէ կարգադրողն ու ծախսողը լինում է ինքը զեմստվօն, որը ընտրում է յատուկ վարչութիւն իրենց միջից, լաւ, աղնիւ, գործունեայ մարդկանցից, դրանց էլ յանձնում է համ փող ժողովելը, համ էլ գործադրելը։

Ո՞վ է ընտրելու այդ մարդկանց – վարչութեանը։

Ի հարկէ, բոլոր նրանք, որոնք հարկ, փող են տալիս—լինի նա 10 կոպէկ տւող, թէ հազար մանէթ—միևնոյն է:

Բայց կան մարդիկ, որոնք թէև հարկ չեն տալ, որովհետև սեփականութիւն չունեն, օրինակ մի վարժապետ, բժիշկ, ֆելդշեր, ադվոկատ. բայց նա լաւ, շիտակ, գիտցող մարդ է։

Ի՞նչ անել, զրկե՞լ դրան ընտրելու և ընտրւելու իրաւունքից։

Ի հարկէ ոչ. ուսում առած, պէտքական մարդկանց թիւը այնքան քիչ է, որ մենք չպէտք է նրանց զրկենք ընտրելու և ընտրւելու իրաւունքից, ինչ է թէ նա հարկ չի տալիս։ Այդպէս անելով մենք զրկւած կը լինենք մեր երկրի ամենապէտքական մարդկանցից և մեր երկիրը առաջ չի գնայ։

Ահա այս բոլորը ունենալով աչքի առաջ, մենք ուզում ենք որ մեզ տան—

ա) մանր զեմստվօ.

բ) որ ամեն մարդ ընտրելու և ընտրւելու իրաւունք ունենայ.

գ) որ զանազան պաշտօնեաներ որչափ կարելի է քիչ խառնւեն տեղական գործերի մէջ։

Ա. Աթանասեան

ԶԵՄՍՏՎՕՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Քառասուն տարուց աւելի է, որ ռուսաց նահանգներում գործում է զեմստվային ինքնավարութիւնը և միայն ծայրերկրեայ գաւառներն են, որ զրկւած են դրանից։ Հանրային տնտեսական տեղական գործերը ամենից լաւ վճռել կարող են, ի հարկէ, տեղական ընտրեալ մարդիկը։ Այդ ճշմարտութիւնը հասկացւել է ամենքի կողմից և ներկայումս հերթական խնդիրը ծայրերկրեայ գաւառներում ևս զեմստվային հաստատութիւններ մտցնելու խնդիրն է։

Չնայած դրան, մեր երկրում քչերն են ճանաչում զեմստվօյի հաստատութիւնները ըստ էութեան։ Դրանց վրայ դրւած են նոյն պարտականութիւնները և նրանք կազմակերպւած են նոյն ձևով, ինչ և քաղաքային վարչութիւնները։

Այստեղ էլ, այնտեղ էլ, ազգաբնակութեան կողմից ընտրուած մարդիկը հոգում են տեղական բարեկարգութեան մասին։ Տարբերութիւնն այն է, որ մինչդեռ քաղաքային վարչութիւնները վարում են իրենց քաղաքների գործերը, զեմստվօյի հաստատութիւնները վարում են ամբողջ մի նահանգի կամ գաւառի գործերը, գլխաւորապէս գիւղական բարեկարգութիւնը։

Շնորհիւ այն բանի, որ մինչև հիմայ չկան զեմստվօյի հաստատութիւններ, մեր գիւղը գտնւում է անօգնական դրութեան մէջ։ Մենք չունենք ոչ բաւական թւով գիւղական ուսումնարաններ, ոչ էլ գիւղական բժիշկներ, հիւանդանոցներ, դեղատներ, կարգին ճանապարհներ։ Այդ բոլորը շատ ժամանակից ի վեր կայ ռուսական գիւղում, շնորհիւ զեմստվօյի հաստատութիւնների։

Մեզանում եթէ նոյն իսկ երևում էլ են մարդիկ, որոնք բարեացակամ վերաբերմունք ունեն դէպի գիւղական ազգաբնակութիւնը, սրանք մենակ, առանց կարգին կազմակերպութեան ոչինչ չեն կարող անել։ Կազմակերպութիւնը զեմստվային հաստատութիւններն են տալիս և միայն դրանք են, որ կարող են գիւղական բարեկարգութեան գործում զգալի հետևանքներ հանել։

Ռուսական զեմստվօները իրենց քառասնամեայ

գոյութեան ժամանակամիջոցում չեն սահմանափակուել ուսումնարանների, հիւանդանոցների և ճանապարհների շինութեամբ։ Նրանք մի շարք միջոցներ են ձեռք առել գիւղատնտեսութիւնը և առհասարակ գիւղական բնակչութեան տնտեսական բարեկեցութիւնը բարձրացնելու համար։

Նորերս լոյս է տեսել Բօրիս Վեսելովսկու ռուսերէն գրուած «Զեմստվօյի քառասնամեայ պատմութիւնը»։ Այս ընդարձակ աշխատութեան հեղինակը մանրամասն կերպով քննում է զեմստվօն է ցոյց է տալիս նրա գործունէութեան մէջ շատ պակասութիւններ։ Բայց և այնպէս այդ գրքի մէջ կարելի է գտնել շատ փաստեր, որոնք վկայում են զեմստվօյի շատ և շատ օգտակար գործունէութեան մասին։

Իբրև օրինակ յիշենք ագրօնոմի պաշտօնի հաստատումը շատ գաւառներում։ Այդ ագրօնոմները ման են գալիս գիւղից գիւղ և հողի մշակութեան լաւագոյն ձևերի մասին ազգաբնակութեանը օգտակար խորհուրդներ են տալիս։ Նոյնպէս նրանք, զեմստվօների միջոցներով, սերմ են բաժանում և վարձով են տալիս երկրագործական մեքենաներ, սովորեցնում են թէ ինչպէս պէտք է օգտուել այդ մեքենաներից, հաստատում են փորձնական դաշտեր (показательная поля), օգնում ճահիճներ ցամաքեցնելու և ջուրը դաշտերի մի-

ջով անցկացնելու գործում, անտառներ են աճեցնում, կռւում են վնասակար միջատների՝ մորեխի դէմ և այլն: Կազմակերպում են պանիր շինելու գործարաններ և ընկերակցութիւններ, ազնւացնում են անասունների տեսակը, մտցնում ապահովագրութիւն կարկուտի և կենդանիների կոտորածի դէմ և այլն:

Շատ տեղերում զեմստվոները բաց են անում գիւղատնտեսական ընկերութիւններ, իսկ գոյութիւն ունեցող ընկերութիւններին նպաստներ տալիս, կազմակերպում են գիւղատնտեսական և արհեստաւորական ուսումնարաններ, իսկ գոյութիւն ունեցող ուսումնարաններին կից բաց են անում գիւղատնտեսական բաժանմունքներ:

Զեմստվօն շատ է աշխատել նոյնպէս տնայնագործական արդիւնաբերութիւնը օժանդակելու համար: Զեմստվօն հիմնում է ընկերութիւններ տնայնագործական գործւածքներ և գիւղատնտեսական մթերքներ արտադրելու և շուկայում նրանց լաւագոյն կերպով ծախելու համար:

Նա հիմնել է տնայնագործական մուզէյներ և պահեստներ, տնայնագործական գործարաններ և արհեստանոցներ: Զեմստվօն ունի սեփական տնայնագործ տեխնիկներ և գործակալներ. որոնք մի կերպ աջակցում են տնայնագործական արհեստների զարգացմանը և տնայնագործական

արդիւնքների լաւագոյն տեսակի վաճառմանը:

Ոչ նուազ զեմստվօն աշխատել է նաև գիւղական ազգաբնակութեանը էժան փոխատւութիւն մատակարարելու գործում: Առանձնապէս ուշադրութեան է արժանի տնայնագործական-արդիւնաբերական (кустарно - промышленной) բանկը, որ հիմնել է Պերմի զեմստվօն: Բանկը նպատակ ունի փոխ տալ 1) առանձին տնայնագործներին. 2) տնայնագործ համարեստաւորաց ընկերութիւններին (куст.-артели). 2) տնայնագործական առևտրական պահեստներին՝ զեմստվոների կողմից հիմնւած:

Արդէն պատրաստ ապրանքները գրաւ են դրւում զեմստվօյին և վերջինս փոխ է տալիս՝ յետագայ գործւածքների նիւթը ձեռք բերելու համար: Այդ գործւածքները ընդունւում են պահելու համար նաև մի այլ նպատակով, այն է նրանց վաճառումը դիւրացնելու համար:

Ուշադրութեան արժանի է Կրեստեցի զեմստվօյի հացի լոմբարդը, Ելեցի հացի լոմբարդը և այլն: Գիւղացիական Պետական բանկը հիմնելուց առաջ զեմստվօն փոխ էր տալիս (ссуда) սակաւահող գիւղացիներին՝ հողատէրերից լրացուցիչ հողաբաժիններ առնելու: Նոյնպէս այդ բանկը բացւելուց յետոյ էլ փոխառութիւնը մի քանի դէպքերում չէր դադարում. գիւղերում հիմ-

նում էին փոխատու խնայողական, որպէս և վարկային ընկերութիւններ։

Զեմստվօյի հիմնած խոշոր բանկերից ուշադրութեան արժանի են Պետերբուրգի գաւառական զեմստվօյի Փոխադարձ վարկի ընկ. և Խերսոնի Հողային բանկը։ Առաջին բանկից ստացւող արդիւնքի մի որոշ տոկոս նշանակւած է բաւարարելու զեմստվօների կարիքները, իսկ երկրորդ բանկից ստացւող արդիւնքի նոյնպէս մի որոշ տոկոսը ծառայում է հողատէրերին տրւող կրէդիտը էժանացնելու։ Այդ տոկոսները երբեմն շատ խոշոր գումարներ են կազմում։ Այստեղ մի առ մի համարածը նոյն իսկ հարիւրերորդ մասն էլ չի կազմում այն ամենի, ինչ որ արել է զեմստվօն Ռուսաստանի ներքին նահանգների համար։

Մենք այստեղ առաջ բերեցինք միմիայն ամենատեսանելի փաստերը։ Եւ մենք պէտք է ցանկանք, որ զեմստվօն մեզ մօտ էլ մտցւի և այն էլ ամենամօտիկ ապագայում։

Գ. Թումանեան

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԱԶԵՐԸ

Մազը մարդու գլխի վերին յետևը և երկու կողմերի մորթն է ծածկում. Նրա յատկութիւնը, երկարութիւնը, մեծութիւնը, ձևը, կարծրութիւնը, բուսնելու եղանակը, ուղղութիւնը, կորութիւնը, ինչպէս նաև գոյնը՝ ցեղերի համեմատ փոխւում է։

Չափահասների մազը՝ ծերերի ու նորածին մանուկների մազերից առատ է լինում։ Մազը որքան բարակ լինի, այնքան շատ կլինի նրա քանակութիւնը։ Վիլսոն, որ շատ ուսումնասիրութիւններ անի այս խնդրի վերաբերմամբ, նա ասում է, եթէ գլխի մորթու ամեն մի քառակուսի մատն, 1066 մազ է պարունակում, եթէ գլխի տարածութիւնը միջին հաշւով 120 քառ. մատնաչափ ընդունենք, այս հաշւով մի մարդու գլխի վերայ գտնում ենք 234520 մազ։ Մազերի երկարութիւնը երեք հարիւրերորդամետրից մինչև երկու մետրի է հասնում. զանգուր մազերը աւելի կարճ են լինում հարթ մազերից, սրանց մեծութիւնը տարիքի, կտրած կամ ածիլած լինելու համեմատ է փոխւում, ինչպէս նաև ձևերը, որոնք կլոր կամ տափակ են լինում։ Կլոր մազերը միշտ ողորկ են և ձգողութեան օրէնքին հա-

մակերպւելով գլխի բոլորից են կախւում։

Մազերի գոյնը կլինի սև, խարտեաշ և սպիտակ, այս տարբերութիւնը մազերի մէջ գտնւած բիկմանի (մազերին գոյն տւող նիւթ) քանակութիւնից կախում ունի. Նրանք բարակ կամ հաստ են լինում և խոնաւութիւնը իրենց են քաշում։

Մազերի թափումը երկու տեսակ է լինում, մէկը գիպւածով՝ հերաքափի, իսկ միւսը ծերութեամբ և կամ ժամանակից առաջ՝ ճաղատութիւն:

Հերաքափը մի հիւանդութիւն է, որ առաջ է գալիս մորթու ախտային փոփոխութիւնից, մինչդեռ միւսն այս անպատեհութիւնը չունի։ Հերթափքն լինում է ընդհանուր և մասնաւոր, և առաջ է գալիս զանազան պատճառներից, ինչպէս գլխի անմաքրութիւնից, պօմադ-ների գործածութիւնից, գրգռիչ ներկերի ու ջրերի լւացւելուց, կաշու հիւանդութիւնից, օձախտից և այլն, որը պատահում է տևողական տենդի, ծաղկախտի, հարսանիթի, կարմրախտի և այդ տեսակ հիւանդութիւններին ենթակայ եղող անձանց։ Նաև այս տեսակ մազերի թափումը առաջ է գալիս դժւարին ծննդաբերութիւնից, մարմնի չարաչար աշխատութիւնից, ստամոքսի ցաւերից, շաքարախտից և այլն։

Ահա սրանք յայտնապէս ցոյց են տալիս թէ որքան շատ են հերաթափքի պատճառները, հետեաբար, եթէ այս հիւանդութիւնները դարմանենք, այս բոլոր չարիքների առաջը կարող ենք առնել։

Ճաղատութիւնը, ինչպէս արդէն վերևն ասացինք, տարիքի յառաջացումից կախում ունի, բայց այն ժամանակ է հանդիպում, որի պատճառները մինչև այսօր անյայտ են. սա էլ նոյնպէս զանազան ախտերի հետևանք է, ինչպէս յաճախ նկատւում է։ Ընտանիքի մի անդամը իրեն մազերը կորցնում է 25 – 30 տարեկան հասակում։ Նշանաւոր մորթաբան Պազէն յայտնում է, թէ ճաղատութիւնը յօդացաւ (ревматизмъ) ունեցող մարդկանց շատ է պատահում։

Խորին տարփանք, վիշտ, բարոյական տրխութիւն, մտաւորական գրաղմունքի շատութիւն, յաճախակի քնատութիւն, նոյնպէս բարձր գլխարկները, որոնք բացի գլխին ճնշում տալուց, նաև արգելում են օդ թափանցելուց, և դրանից մազերի թափում է առաջ գալիս։

Ճաղատութիւնը գլխի գագաթից է սկըսւում և հետզհետէ տարածւում է միւս կողմերը. միակ մազէ շրջանակ է գցում գլխի բոլորը, որ մինչև մահ մնում է։

Մազերի թափումը կանանց մօտ քիչ է պատահում, նրանց շատ հազւագիւտ է լինում ամբողջական թափումը։ Հակառակ զանազան գա-

դափարների, ճաղատությունը անբուժելի է: Այդ մարդկանց մազերը 35—40 տարեկան հասակի մեջ է սկսում սպիտակել, իսկ կանանց մազերը ավելի վաղ։ Առաջին անգամ ականջների առջևի մազերը իրենց արմատներով սկսում են սպիտակել, այս սպիտակությունը առաջ է գալիս այն պատճառներից, որոնք փութացնում են մազերի ժամանակից առաջ թափվելուն։ Գլխավորապես մազերի սպիտակելու պատճառը այն է, որ նրանց մեջ բիկմանի չի գտնվում։

Մազերի սպիտակիլը գրեթե առաջ է գալիս տարիքից, ընդհանուր կամ տեղական հիվանդություններից, որոնք բոլորը կենդանային անդրադարձում է, սակայն յանկարծակի ջղային փոփոխումներից է առաջ գալիս. օրինակ՝ սաստիկ յուզումից, ինչպես Թոմաս Մորիսի, Անգլիայի նախարարապետի մազերը մեկ գիշերում սպիտակեցին։ Լուի Սֆորձային էլ նույնը պատահեց։ Սակայն մազերի այս տեսակ յանկարծակի սպիտակացումը շատ հազվադեպ է: Կան և մարդիկ, որոնց մազերի միայն մի մասն է սպիտականում։ Օէսթերլին, մազերի մասին գրում է իր մի նշանավոր աշխատության մեջ՝ թե մի անակնկալ տեսարանում յանկարծակի մազերը սպիտակեցին, բայց քիչ ժամանակից յետոյ դարձեալ ստացան իրենց բնական գույնը։ Մազերի սպիտակելը ան-

բուժելի, է միայն ներկով կարելի է գունավորել նրան։

Գլխի վերայ անդադար ժողովվում են քըրտինքից առաջ եկած նյութեր, թեփեր և կաշու փոփոխմամբ մնացած մասնիկներ. սրանք կաշու պաշտօնները խանգարում են և կարող են բորբոքումներ յառաջ բերել։ Բնականից մազերը խառնելու ենթակայ է, այս պատճառով էլ ծննդաբերությունից և հիվանդությունից վեր կացողները երկար անհոգությունից յետոյ, երբ սկսում են սանրել. մազերը սկսում են թափել։

Եթէ կամենում էք մազերին ույժ տալ, պէտք է ամեն օր սանրել և խոզանակել, բայց զգուշացէք սանր խիստ ամուր գործածելուց. որով հետև մազերը կը խլէ և թեփոտ մազերի վերայ բորբոքումն է առաջացնում։ Պէտք է գործածէք նոսր սանրեր, խոզանակը մարդուս բնութեան համեմատ քիչ կամ շատ կարծր պէտք է լինի։ Գլխի զարդի համար գործածուելիք ամեն մի նիւթ պէտք է մաքուր լինի։

Խիստ վատ սովորություն է գլուխը սապոնով կամ պարզ ջրով լվանալը. ըստ Էլլինկէրի, այս սովորությունը մազերի թափվելու գլխավոր պատճառն է. որովհետև ջրի գործածությունով մազերի արմատները ուռչում են, և վերջ ի վերջոյ չորանալով թափվում են։

Ինչ էլ որ լինի, նրանք, որոնք իրենց մազերի թափվելուց վախենում են, պէտք է ջրի գործածութիւնից զգուշանան, իրենց գլուխը տաք ջրի մէջ չը ընկղմեն։ Հարկաւոր է ամիսը մի կամ երկու անգամ գլուխը գաղջ ջրով լուանալ, որի մէջ աւելացնել նաև հաւկթի դեղնուց, նոյնպէս մի քիչ էլ բորաքս։

Կօսմէտիք և զանազան տեսակ պօմատներ իրբէք մի գործածէք, նրանց ջուրը նեխում է, մազերի վերայ մնում է մածուցիկ, որը միանգամայն բորբոքիչ հիւթ է։

Իւղերը մասամբ վնասակար են, մանաւանդ հնդկական իւղը որ շատ ուշ է նեխում։ Գլիցերինը աւելի օգտակար է. որովհետև իր մէջ պարունակում է իւղերի ֆիզիքական լաւ յատկութիւնները և մազերին տալիս է փայլ ու քնքշութիւն, նոյնպէս և գեղեցիկ գոյն է տալիս։

Գլիցերինի գործածութեան համար պէտք է 100 գրամմ հին ռօմի, կամ 90 աստիճան ալքոհոլի մէջ 10 գրամմ գլիցերին լցնել և վերան աւելացնել 3—4 կաթիլ բէրգամօտի կամ լիմոնի հիւթից։

Գ. Զ.

ՅՈՎ. Դ. ԽՈՒԴԱԴԵԱՆ

(Տես երես 266)

«ՃԻՐԱԿ» 1910 թ.

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՓՈԹՈՐԿԻՑ

—

Փոթորիկ եղած ժամանակ շատ անգամ անզգուշութեամբ և կամ անգիտակցութեամբ շատերը շանթահար են եղել. հետեւաբար հետեւեալ միջոցներն ու կանոնները շատ օգտակար կարող է լինել։

1. Բաց դաշտում եղած ժամանակ պէտք է ծառերից, խոտի դէզերից, անասուններից հեռու կենալ։

2. Նոյնպէս բաց դաշտի և հրապարակի մէջ մարդ պէտք է զգուշանայ, որ բարձր տեղ կանգնած չը լինի, որովհետև փոթորկալից ամպերին աւելի մօտիկ լինելով, կարող է շանթահար լինել։

3. Փողոցի միջով գնալիս՝ աւելի լաւ է հէնց փողոցի մէջ տեղից գնալ, քան թէ տների մօտով, մանաւանդ այն տներից հեռու քայլել, որոնց կտուրներից ջուր է վազում։

4. Տան մէջ պէտք է զգուշանալ որևէ մետաղեայ շղթայով կախուած ջահի տակ կանգնել, կամ խոհանոցի մէջ ծխանի (օջախ) մօտ, որովհետև շատ շուտով մուրը դէպի իրեն է քաշում կայծակը։

5. Տան մէջ ամենայարմար տեղն է սենեակի մէջ տեղը նստել. վառարանից, հայելիից և առհասարակ երկաթեայ իրերից հեռու կենալ։

6. Աւելի լաւ է տան ներքին յարկը նստել, քան թէ վերայի յարկը։ Փոթորկի ժամանակ սենեակների պատուհանները բաց թողնել։

7. Եթէ վառարանի մէջ կրակ կայ, իսկոյն պէտք է հանգցնել, որովհետև ծխանից դուրս գալող ծուխը կայծակն իրեն քաշելով ներս է հաղորդում։

8. Փոթորկի ժամանակ խուսափեցէք ձեզ մօտ մետաղեայ իրեր պահելուց։

~~~~~

ԿԱՅԾԱԿ

—

Փայլակը կայծայկ կազմող էլէքտրական արձակման կայծն է: Որոտումը այդ կայծից առաջ եկած աղմուկն է։ Տարբեր տեսակ փայլակներ կան. 1) Զիգզագ կայծակներ, որոնք ըստ ժողովրդական հաւատքի, ամենից վտանգաւորներն են. 2) Տարածուն փայլակ, որ ամպերի չուրջն ու երկնքի մի մասն է լուսաւորում. 3) Գնդաձև փայլակներ. 4) Զարգմանակ փայլակներ՝ որոնք հեռաւոր ամպերից առաջ գալով հորիզոնի վրայ են երևում։

Լոյսի և ձայնի տարբեր արագութիւն ունենալու պատճառով է, որ մենք նախ տեսնում ենք, ապա նրա ձայնը լսում։ Ձայնի արագու-

թեան երկվայրկեանը 340 մետր լինելով՝ թէ լոյսի երևալուց մինչև ձայնի իմացւելը անցած երկվայրկեանը համարենք և այդ թիւը ձայնի արագութիւնը ներկայացնող 340-ով բազմապատկենք, այն ժամանակ կարող ենք իմանալ՝ թէ փոթորիկը մեզանից որքան հեռու է. օրինակի համար, եթէ փայլակի որոտումը երևալուց 7 վայրկեան յետոյ լսենք, փոթորիկը տեղի կունենայ 7 անգամ 340=2390 մետր հեռու։

Երբ կայծակը մի ծառի է խփում, նախ նրա վերին ճիւղերին է դիպչում, ապա հետզհետէ իջնում է կոճղը։

Ընդհանրապէս ծառի վերին ճիւղերը չեն վնասւում, մինչև անգամ նրա բոյսերն ու թերաչուններն էլ անվնաս են մնում։ Ուրեմն ծառի վերայ եթէ գտնւի մարդ աւելի քիչ կը վնասւի, քան թէ գետնի վերայ գտնւած ժամանակ, իսկ ընդհակառակը, եթէ այդ մարդը ծառի բնի մօտ լինի, կայծակը իսկոյն ծառին թողնելով, յարձակւում է նրա վերայ, որովհետև աւելի լաւ հաղորդիչ է մարդը քան թէ ծառը։

Մասնաւորապէս մայրիները, երբ գտնւում են տների մօտ, կարող են բնական շանթարգելների դերը կատարել։ Սակայն չպէտք է ծառի կամ տան մօտերը ջուր գտնւեն, ինչպէս գետ, լիճ և այլն, որովհետև կայծակը այրելով անցնում է
~~~~~

գրանց միջից դէպի այդ մօտակայ գտնուող ջրերը։

Բնագէտ Դանիէլ Գօլատոնը խորհուրդ է տալիս բնակարանների մօտ գտնուող ծառերի կողքին կից դնել մի մետաղեայ ուժ ունեցող ձող, աւելի լաւ կլինի այդ ձողը թաղել հողի մէջ։

Վերջին փորձերը հաստատում են, որ օսլա պարունակող ծառերը, որոնց վերայ ճարպ քիչ է գտնւում, օրինակի համար՝ կաղնի, կաղամախի, (ղաւաղ), ուռի, կնձնի, գիհի, հացի չանթահարութեան աւելի ենթակայ են լինում, քան ճարպային ծառերը՝ մայրի, ընկուզի, թմբի։ Ուղիղ է, այս ծառերից առաջինները միւսներից աւելի քիչ ընդդիմութիւն ցոյց են տալիս էլէքտրական կայծերի դէմ։

Մետաղները չափազանց լաւ հաղորդիչ են։ Մարդկային մարմինը ծառերից ու շէնքերի պատերից աւելի լաւ հաղորդիչ է։ Թաց հագուստների վերայից կայծակը սահում է։ Աւելի լաւ հաղորդիչ են չոր հագուստները։ Ուրեմն փոթորկի ժամանակ օգտակար է հագուստները թրջել։ Փոթորկի ժամանակ զանգակ խփելը շատ վտանգաւոր է, եթէ կայծակը զանգակատան վերայ խփէ, այն ժամանակ զանգի լարի միջոցով չանթահար է անում զանգակահարին։

Կայծակը զարմանալի քմահաճոյքներ ունի, նախ մի գաւառ չափազանց շատ ենթակայ է

կայծակի, քան միւսը, մի ուրիշն էլ բոլորովին զերծ է մնում այս վտանգից։ Երկրորդ՝ տղամարդիկ աւելի են ենթակայ լինում կայծակին, քան թէ կանայք։ Երեսուն տարուայ դիտողութիւններից երեւում է, որ կայծակից մեռած ու վիրաւորուած 3269 անձերից, 2322 տղամարդ է, իսկ 947 կին։ Նկատուած է, որ դաշտի մէջ այր ու կնոջ միասին աշխատած ժամանակ, կայծակը իր հարուածի համար ընտրել է տղամարդուն։ Անշուշտ կայծակից այսքան քաղաքավարութիւն չէինք սպասում։ Մարդն էլ կենդանիներից քիչ է ենթակայ լինում։ Շատ անգամ պատահում է, որ կենդանիները չանթահար են լինում, մինչդեռ նրանց պահապանները անվնաս են։ Կայծակը խորին յարգանք է տածում երկաթուղով ճանապարհողների նկատմամբ. պատճառը, որովհետեւ հոսանուտը հեշտ կերպով հոսում է կառքի բազմաթիւ մետաղեայ մասերի, երկաթէ գծերի վրայից։

Կայծակահար եղած անձերի վերայ պէտք է գործ դնել խեղդուածների համար արհեստական շնչառութեան մեթոդը։ Եթէ առանց ժամանակ կորցնելու գործադրւի այս միջոցները, կայծակահարին կենդանացնելը շատ հաւանական է։

Լ. Ատրունի

Ա. ՖՕՐԻԶՄՆԵՐ

—Ինքնիշխանության մէջ է կայանում Ազատութիւնը։ Ռէյնալ

—Ազատութիւնը դատող, խորհող և ընտրող իմացականութիւն է։ Փլուտանս

—Մեզ համար հաճոյ եղած բանը եթէ կատարենք՝ բնական ազատութիւն է. իսկ ուրիշներին վնաս պատճառենք մեր գործերը կատարելով՝ քաղաքական ազատութիւն է։

—Ամենից աննշան ու անտոհմ մարդն էլ սիրում է ազատութիւնը: Շատօբրիան

—Սանձարձակ ազատութիւնը թանգ կը նստի մարդու վրայ։ Ֆր. Բաքոն

—Ազատութիւնն էլ անմեղութեան ու առաքինութեան նման է, որոնց արժէքը գիտենք այնքան ժամանակ, որքան նրանց վայելում ենք, կորցնելուն պէս մոռանում ենք ամեն ինչ։

Ժ. Ժ. Ռուսսօ

—Ազատութիւնը բարիքից, արդարասիրութիւնից և կարգապահութիւնից կախում ունի։

—Երբ ազատութիւնն իր սահմանները պահպանել չկարողանայ, իսկոյն կը դառնայ մի ըմբոստութիւն, որ ոտնատակ կտայ ճշմարտութիւնը։

—Ազատութեան սաշխճանով է չափւում կառավարութեան հարստութիւնը։ Վիլհելմ

—Յաճախ ազատութիւնը ձեռք է բերւում յեղափոխութեամբ, բայց նրա անմիջական արդիւնքը չէ։ Ջէյմ

—Եթէ կայ նւիրական, մշտատև և անսահման իրաւունք, որը տարիների երկար շարքը չի կարող ջնջել, և որը օրէնքներով չի կարելի նարոդ խառնել, մեր ազատութիան անկապտելի իրաւունքն է այն։ Վոլտեր

—Չհնազանդւել ոչ մի կրքի, ահա այստեղ է ճշմարիտ ազատութիւնը։ Տասիտ

—Ազատութիւնը հոգու կարողութիւնն է՝ մի բան գործադրելու որոշողը, գործը վախճանին և իր բնական վիճակին հասցնողը, առանց դիմադրութեան կամքի մարզանքը, ընտրութիւնը հաստատող կամեցողութիւնը։

Մեծն Ֆրիդրիխ

—Ազատութիւնը բարու կամ չարի կամայական որոշողութիւնն է: Լա Պրիւյէր

—Ազատութիւնը մի հիւթալի սնունդ է, բայց դժւարամարս, ուստի մարդիկ պէտք է երկար ժամանակ վարժւեն դրա համար, որ կարողանան ընդունել այն:

Ժ. Ժ. Ռուսսօ

—Ամեն տեղ ազատութիւնը աւելի շատ վախ

ունի իրեն ծառայողների կրքերից, քան թէ իր թշնամիների յարձակումներից։ Սէկիւռ

—Ազատութիւնը մի բան անելու կամ չանելու կարողութիւնն է կամքի որոշման համաձայն։

Լօկ

—Բռնակալութեան բարեկամների սուրը միշտ բթանում է դիպչելով ազատութեան բարեկամների վահաններին։

*

—Օրէնքին հնազանդւելով միայն մարդ կարող է ազատ լինել։

*

—Աշխարհիս մէջ ամենից ազատ մարդը նա է, ով միմիայն Աստուծոյ և իր բանականութեանն է հպատակւում։ Ֆէնըլոն

—Ամենից ազատ մարդը նա է, որի համար երբէք հարստութիւնը նշանակութիւն չունի։

*

—Ամենից քիչ ազատ մարդը նա է, ով շատ գերիներ ունի։

*

—Ամենից ազատ ազգը գոհացուցիչ կերպով երբէք վստահութիւն չունի իւր ազատութեան վրայ։

*

—Ազատութիւնը բռնապետութեան հոգէառ հրեշտակն է, այն պայմանով որ այցելէ։

Եա

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՏԱՆՏԻԿԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամեն մի տանտիկին անշուշտ պէտք է գիտենայ հետևեալ օգտակար բաները։

—Աղը կաթը կտրում է, հետևաբար կաթնապուրի և կամ կաթով պատրաստուած համեմունքի մէջ, աղը պէտք է վերջը լցնել։

—Եռացած ջուրը պտուղների մեծագոյն մասի բծերը հանում է. երբ նկատում էք որ բիծը երևում է, իսկոյն տաք ջուրը ածեցէք վերան, միայն աշխատեցէք ամբողջ կերպասը չը թրջել, այլ կեղտոտուած տեղերը։

—Հասած պամիտօրի ջուրը հանում սպիտակեղէնների և ձեռքի վրայ գտնուած մելանի ու ժանգի բծերը։

—Մոխրաջրի մէջ եթէ մի կերակրի գդալ բեւեկնի ոգի (սկապիտար) լցւի, իսկոյն շորերը ձիւնի նման սպիտականում է։

—Եփուած օսլայի մէջ եթէ մի քիչ արաբական խէժ կամ կէտ ձկի սպիտակուց լցւի, շափազանց ընտիր է լինում։

—Արդուկը որքան էլ ժանգոտած լինի, կարելի է մաքրել, ապակու նման փայլեցնել մեղրամոմով ու աղով։ Շորի մէջ մի կտոր մեղրամոմ փաթաթեցէք և երբ արդուկը տաքանում է, նախ

այդ մոմով շփեցէք, ապա թղթով, որի վրայ աղ ցանուած լինի։

—Հաւասար քանակութեամբ իրար խառնուած սնդկախառն կապոյտ իւղ և քարիւղ, մահճակալներին և սենեակի զանազան մասերին պէտք է քսել, ազդու միջոց է մլակների դէմ։

—Բենզոլը մեղմացնում է ջրից կարծրացած կօշիկներն ու հողաթափները, նրանք դառնում են այնպէս, ինչպէս նորերը։

—Բենզօլը արծաթի նման փայլեցնում է անագուած ամաններն ու գործիքները։ Մի բրդեղէնի կտորի քիչ բենզօլ լցնել, և նրանով մետաղը շփել։ Բենզօլը մաքրում է նաև ջրդեղուած կալասինների վրայ գտնուած բծերը։

—Անձրևի ջուրը և մի քիչ էլ սօդա խառնեցէք իրար և քսեցէք մեքենաների իւղէ բծերի վերայ, նոյնպէս կարելի է քսել այն կերպասաների վերայ, որոնց լուանալ անհնար է։

—Լիմոնի ջուրը երկար ժամանակ պահելու համար պէտք է լցնել շիշի մէջ մինչև բերանը և վերան աւելացնել մի քիչ ձիթաիւղ։

—Տան միջի մանր-մունր բաները դեղնագոյն ներկելու համար, սոխի կեղևները շիբի լուծման մէջ թաթախելուց յետոյ պէտք է եփել ջրով և ներկուելիք մետաքսեայ կամ բրդեայ շորերը այդ ջրի մէջ դնել, մինչև որ առարկան դեղնի։

—Եփած շոր լոբիի ջուրը մի յատկութիւն ունի ներկուած կտաւների վերայ. եթէ նրանք կեղտոտ են, կարելի է մաքրել վերոյիշեալ ջրով։

—Մի անգլիացի ջրհանկիր ծխից չխեղդուելու համար տալիս է պատուէր։—Թրջած շորը քթի և բերնի դէմ բռնել, որով կարելի կլինի հանգստութեամբ շունչ քաշել ծխով լցուած սենեակի կամ խոհանոցի մէջ։

—Այրած մագնեզիան բենզինով թրջել և սրբել ապակիները։

—Երբ երեխաների քթից արիւն է հոսում, պէտք է նրանց ձեռքերը վեր բարձրացնել և թաց թաշկինակը դէմքի վերայ դնել։ Մի կամ երկու թէյի գդալ հասարակ աղ տաք ջրի մէջ հալեցնելով, ռնգունքների միջոցով վեր քաշել։

—Խիստ մանր ջարդուած գետնախնձորները ջրով շիշի մէջ լցնել և մի լաւ ցնցել, անհետանալուց յետոյ մի անգամ էլ շիշը մաքուր լուալ։

—Երբ քացախ էք գնում, անհրաժեշտ համարեցէք առաջուց կրակի վրայ փոքր եփ տալ· սրանով երկար ժամանակ քացախը առանց փչանալու մնում է։

—Մրջիւնները հեռացնելու համար օշինդրի ճիւղեր պէտք է դնել մրջիւն եղած տեղերը։

—Միջատներին շաքարի ամաններից հեռու պահելու համար պէտք է տուփի եզերքի վերայ

կուրծի նշան անել, որից խոլոյն հեռանում են։

—Կօշիկները ջրից անթափանց անելու համար պէտք է հնդկական իւղ քսել, եթէ չէք ուզում որ քայլած ժամանակներդ ձայն հանէ, կօշիկի տակը մի մեխ խփեցէք։

—Ճիչերը հեշտութեամբ կմաքրւի տաք ջրով ու ածուխի փոշիով։

—Ծխնելոյզը եթէ բռնկւում է, մի բուռ աղ կամ ծծումբ ձգեցէք վառարանի մէջ։

—Լամպի շիշերը լաւ կը մաքրւեն լրագրների թղթով։

—Լամբարը լցած ժամանակ մի քանի կաթիլ քարիւղ քաթեցրէք շորի վրայ և նրանով մաքրեցէք ապակին, մինչև որ լաւ մաքրւի։

—Մժեղներին հեռացնելու համար կաղնի մեծութեամբ քափուրի կտոր բռնել լամբարի վերայ, մինչև որ վերջանայ։

—Գարասինները մաքրելու համար, նախ պէտք է կարասինները եռացրած կտաւատի իւղի մէջ թաթախած շորով շփել, յետոյ շորացնել և մաքուր ֆանելայով շփել։ Նոյնպէս պէտք է աշխատել, որ իւղը լաւ մաքրւած լինի, եթէ ոչ վերան շուտով փոշի է վերցնում։

—Ոսկեզօծ շրջանակները կմաքրւեն բենզինի իւղի մէջ թաթախւած սպունգով, որը պէտք է առաքկաների շրջանակներին քսել։

—Իւղի բծերը հանելու համար՝ պէտք է բիծ եղած տեղը բենզինի իւղով թրջել և կերպասի տակն ու վերան ծծուն թուղթ դնել և սեղմել. այսպէս թուղթը ծծելով, իւղը լուծւում է, բիծը կերպասի վերայից բոլորովին անյայտանում է։

—Մազերը գեղեցիկ կերպով մաքրւում է հետևեալ բաղադրութեամբ. 3 ֆունտ անուշ ջուր, 8 գրամմ սօդա և 2 գրամմ կրեմ տարտար, այս դեղերով պէտք է մազերը լուանալ։

—Երկաթէ ժանգի բծերը շորերի կամ սպիտակեղէնների վրայից հանելու համար պէտք է բիծը գտնւած տեղը լիմոնի ջրով և աղով թըրջել և արևին դնել, սովորաբար հարկաւոր է մի երկու անգամ կրկնել այս բանը։

—Մուշտակները և բրդեղէնները ցեցերից պաշտպանելու համար պէտք է մի լաւ թափ տալ, փայտով խփել, յետոյ թղթէ պարկի մէջ դնելով կախել, եթէ պարկի մէջ ցեց և ցեցի ձւիկներ չկան, մուշտակները ապահով են։

—Ներկի բծերը կարելի քլօֆօրմով հանել. երբ որև է թթու կերպասի գոյնը փչացրել է, նախ պէտք է ամօնեաք քսել թթուն չէզոքացնելու համար, յետոյ երբ քլօֆօրմ քսւի, կերպասը նախկին գոյնը կը ստանայ։

Ա Յ Լ Ե Ւ Ա Յ Լ Ք

—

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆԸ

Միջատներից ոմանք մի քանի ժամ են ապրում միայն, կան և շաբաթներ ապրող։ Դիղոշը 15 տարու չափ ապրում է։ Ծածան.—Բիւֆոն ասում է, որ Մօրէպայի կոմսի աւազանի մէջ տեսել է մի ծածան, որ 150 տարի առաջ այնտեղ դրւած է եղել։ 1497-ին Հէյլբրոնի մօտ, լճի մէջ մի գայլաձուկ բռնեց, որի վերայ մի պղնձեայ օղակ կար և վերայի թւանշանից երևաց, որ այդ գայլաձուկը 1230-ին լիճն են ձգել։ Տան մէջ թռչուններ և հաւեղէններ ընդհանրապէս 12—15 տարի են ապրում։ Թութակը և արծիւը 100-ական տարի են ապրում։ Ուղտը 40 տարի է ապրում։ Ձին՝ 30։ Եզը՝ 20։ Շունը՝ 12։ Կատուն 10։ Ոչխարը՝ 9։ Ճագարը՝ 8։ Փիղը՝ 200 — 300։ Կէտը 400 տարի է ապրում։

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Հունգարացի Պէտր Ցարտան՝ 1539-ին ծնելով 1724-ին մեռել է, 185 տարի ապրելով։ Թովմաս Պար անունով մի անգլիացի 169 տարեկան հասակում է մեռել Շրօբշայրի մէջ. այդ տարեքի

մէջ էր նոյնպէս Կարլոս Ա., որ պալատում հացկերոյթի ժամանակ մեռաւ։ Մեռնելուց յետոյ պրօֆ. Հարվի կատարած քննութիւններից երևաց, որ եթէ այդ օրը շատակերութիւն արած չը լինէր, դեռ էլի շատ տարիներ կապրէր։ Ձվէրօլ ծնւեց 1786 թ. օգոստ. 31-ին, մեռաւ 1889 թ. ապրիլի 10-ին, կարճ հիւանդութիւնից յետոյ։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՅՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ

Մսակեր անասունների մէջ յղութեան ժամանակամիջոցը աւելի կարճ է, քան թէ բուսակեր անասունների մէջ։ Մսակերների ձագերը ծնւած օրից նուազ են լինում, մի քանի օրից յետոյ միայն աչքերը բանում են։ Բուսակեր կենդանիներից՝ փիղը 20—21 ամսից է ծնում։ Ընձուղտը՝ 14 ամսից։ Ուղտը՝ 12 ամսից։ Գոմէշը՝ 12 ամսից։ Էշը՝ 12 ամսից։ Ձին՝ 11 ամիսը անցած։ Ռնգեղջիւրը՝ 9 ամսից։ Կովը՝ 9 ամսից։ Ոչխարը և այծը՝ 5 ամսից։ Խոզը՝ 4 ամսից։ Կրծող կենդանիներից՝ Կուղբը՝ 4 ամսից։ Առնէտը՝ 31 օրից։ Ճագարը 30—31 օրից։ Սկիւռը և Մուկը՝ 28 օրից։ Մսակեր կենդանիներից արջը՝ 6 ամսից Առիւծը՝ 108 օրից։ Կատուառիւծը՝ 72 օրից։ Աղուէսը և գայլաշունը՝ 62—63 օրից։ Կատուն՝ 55

—56 օրից: Պարկաւոր կենդանիներից Արեգնագը՝ 39 օրից: Պարկերից՝ 26 օրից: Կիտայգիներից կէտը՝ 10 ամսից: Կապիկը՝ 7 ամսից: Զւածիններից՝ սագը թխսում է 30 օրից: Կորապը՝ 42 օրից: Հաւը՝ 21 օրից: Բադը՝ 30 օրից: Հնդկահաւը՝ 28 օրից: Դեղձանիկը 14 օրից: Աղաւնին՝ 21 օրից: Թութակը՝ 40 օրից:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Փիղը, ուղտը և ձին հազիւ թէ մէկ հատից աւելի ծնեն: Առիւծը 1, յաճախ 2—3, երբեմն 5 կամ աւելի: Ընտանի ճագարի արգասաւորութիւնը հրաշալի է, 6 ամսական ճագարը, տարին 7 անգամ ձագ է ծնում, ամեն մի անգամին 4 – 12 հատ, երբեմն էլ աւելի: Հաշւած է, որ մի զոյգ ճագարի սերունդը չորս տարւայ մէջ $2^{1}/_{4000000}$-ի է հասել: Աւստրալիայի մէջ մի զոյգ ճագարը այն աստիճան է շատացել, որ նրանց ջնջելու համար որոշ օրէնք է սահմանւած:

ՆԹՈՎԲԱԿԱՆ ՄԵՂՈՒՆ

Նթովբական մեղուն, որին «թաղմա» են անւանում, մեղրի պաշարը պատրաստում է առանց մեղրամոմի: Յիշեալ մեղուն հսկայ մժեղի կերպարանք ունի և իր տւած արտադրութիւնը տանում պահում է հողի տակ. այդ տեղի բնակիչները

շատ են որոնում որ գտնեն, իբրև դեղ կոկորդի հիւանդութեան:

Հնդկաստանի մէջ մեղուներ կան, որոնք փողոցի դռան մեծութեամբ կախում են ծառի ճիւղերից իրենց փեթակները:

Գւատալուպի մեղուները իրենց մեղրը շինում են տատրակի ձուի մեծութեամբ մեղրամոմի բըշտիկների մէջ: Այս մեղուները չափազանց փոքր ու սև են. խայթոց չունեն. արտադրած մեղրերն էլ ձէթի նման երբէք չի թանձրանում:

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅՈՒՂԱԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԱԶԳԵՐԻ ՄԷՋ

Գրէնլանդացիք, երբ նրանց մէջ երեխայ է մեռնում, նրա հետ թաղում են և մի շուն, որպէսզի նրան առաջնորդէ հանդերձեալ աշխարհը, ասելով՝ թէ շունը կգտնէ ճանապարհը:

Ռուսները մեռելի ձեռքի մէջ դնում են մի թղթէ վկայական, որ իր մէջ պարունակում է ննջեցեալի կենսագրութիւնը, որպէսզի Պետրոս առաքեալը երկնքի առաջ տեսնի այդ թուղթը:

Տարիներ առաջ Հնդկաստանում հաւատարիմ կինը իր ամուսնու մարմինը այրելու համար պատրաստւած փայտակոյտի վերայ բարձրանում և ինքն էր այրւում նրա տեղը:

Աւստրալիայի բնակիչները կապում են մեռելների մարմինը և հանում են նրա մատների եղունգները, որպէսզի մի գուցէ մեռելը եղունգներով փորէ գերեզմանը և ելնէ դուրս։

Հիւսիսային Ամերիկայի հնդիկները մեռելների հետ թաղում են ամանով զանազան իրեր, աղեղ, նետեր և մուճակներ, նաև եղջիւրի մորթ, մուճակները կարկատելու համար։

Չինացիք թղթէ կեղծ դրամներ են բաժանում գերեզմանի ճանապարհի վերայ, որպէսզի մեռելին հետևող չար ոգիները զբաղուեն այդ փողերովը և անծանօթ մնայ մեռելի գերեզմանի տեղը։ Նաև գերեզմանի վրայ քամուն տալով ցրուում են գահաւորակը տանող ծառաներին և ուրիշ սպասաւորներին էլ թղթէ պատկերներ, որպէսզի հասնեն հրաժարեալի հոգւոյն և ծառայութիւն մատուցանեն նրան։

ԳԱՐՍԻՑ ՇԱՀԸ

Պարսից շահը մի գլգլակ (Նարգիլէ) ունի, որը ադամանդներով, սոփակներով ու զմուխտներով զարդարուած է։ Արժէքն 2½ միլ. ֆրանկ։ Ձահի գլգլակը տասն անգամ աւել արժէ իր սրից, այս վերջինի գինն է 250,000 ֆրանկ։

Աշխարհի վերայ գտնուած ամենից լաւ, միակ

սուրն է Հնդկաստանի Մահաճարայինը։ Ձահի գլգլակի նման ադամանդներով ու գոհարներով զարդարուած է. արժէ հինգ միլիոն ֆրանկ։

Ջէնէզի Մահաճարանը պարծենում է իր միակ կառքով, որի նմանը չկայ։ Ամբողջը արծաթից է և բոյթերը ոսկեձոյլ են։

Մարօկկի շահապի մօտ գտնւում է մի եպենոսի դաշնակ, ոսկով զարդարուած, որի ամենափոքրիկ մասերն անգամ քանդւում են։ Արժէ 100,000 ֆրանկ։

ՀԱՅԵՐԷՆ — ՊԱՐՍԿԵՐԷՆ

Հայկական այն խօսքերը, որոնք շատ նման են պարսկերէնին. ինչպէս օրինակ.—

Ամուսին—ամուսնի. հազար—հէզար. գիտել—գիտեն. դահլիճ—դէյլիզ. գոյն—կիւյն. բարեկենդան—պէրսկենթան. դժուար—տիւշւար. կուշտ—քիւշտ. լախտ—լախթ. խաւար—խաւէր. խընդալ—խենտէ. ծեր—զեր. կով—կեավ. կոխ—զախ. նման—նիւման. շահեկան—շահկեան. պայզատ—պէյզատ. գէշ—քէժ. պինդ—պէնտ. սուգ—սուկ. շտապ—շիթապ. պայման—բէյման. շապիկ—շէպի. յափշտակել—ապիշթէն. վարժ—վէզ. նշխար—նիշխար. հնար—հիւնէր. ամբար—էնպար. աշակերտ—շակիրտ. անգամ—հէնկեամ. նըկար—նիկեար. համար—հէմար. թանգ—թէնգ.

քանդեն—քէնտեն. տաճար—թէճեր. փիղ—բիլ. ասպար—խսպէր. աւանդ—ավէնդ. ածուխ—ադէխ. պայման—բէյման. պատուհան—պատխան. անյապաղ—յենապաղ. կամար—քէմեր. կապուտ—քէպուտ. կերպաս—քիրպաս. շապիկ—չէպի։

~~~~

ՍՈՒՍԱՆՑ «Ա» ՏԱՌԻ

Բոլոր գրքերից միայն Սաղմոսաշունչն է, որ առանց «ա» տառի հատուածներ ունի։ Նոյնպէս Սաղմոսի մէջ էլ պարունակւում են այդ տեսակ հատուածներ. ինչպէս.—

«Ի Քէն է գովութիւն իմ, Տէր, յեկեղեցիս «մեծս օրհնեցից զքեզ։ Ցոյց մեզ, Տէր, ողոր«մութիւնս քո և զփրկութիւն քո տուր մեզ։ Ոչ «երկիցես դու յերկիւղէ գիշերի և ոչ ի նետէ որ «թռչի ի տուէ։ Որպէս մեծ են գործք քո, Տէր, և «յոյժ խոր են խորհուրդ քո։ Եկեսցեն յիս գթու«թիւն քո և կեցից, զի օրէնք քո խօսք իմ էին։ «Զօրութիւն իմ և օգնութիւն իմ, Տէր, և եղև «ինձ ի փրկութիւն։

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՒ ՏՈՄՍԱԿԱԳԻՆ

Անդրկովկասեան երկաթուղիներ

ԲԱԹՈՒՄԻՑ—ԹԻՖԼԻՍ—ԲԱՔՈՒ

Կայարաններ	Երկարութիւնը վերստ.	Տոմսակների գները II կ. Ր.	Տոմսակների գները II կ. Կ.	Տոմսակների գները III կ. Ր.	Տոմսակների գները III կ. Կ.	10 փ. բագաժի գինը Ր.	10 փ. բագաժի գինը Կ.
ԲԱԹՈՒՄ							
Չաքվա	13	0	35	0	20	0	75
Կօբուլետ	22	0	58	0	33	1	27
Նօթանեբի	37	0	98	0	56	2	13
Սուփսա	51	1	35	0	77	2	94
Ջումաթի	59	1	58	0	90	3	45
Լանչխութի	70	1	88	1	07	4	09
Նիգօիթի	76	2	03	1	16	4	43
Սաջևախօ	90	2	37	1	35	5	18
Սամտրեդի	98	2	61	1	49	5	70
Կապիտնարի	110	2	89	1	65	6	33
Մուխեան	118	3	10	1	77	6	79
Րիօն	127	3	36	1	92	7	36
Աջամեթի	134	3	52	2	01	7	71
Սվիրի	143	3	78	2	16	8	28
Կվիրիլ	155	4	10	2	34	8	97
Ձորապան	159	4	19	2	39	9	15
Ձերուլի	168	4	34	2	48	9	66
Բէլոգորի	177	4	50	2	57	10	18
Մարելիսի	186	4	66	2	66	10	70
~~~~

Մալտա	192	4	78	2	73	11	10
Ցիպա	199	4	90	2	80	11	50
Վարվարինօ	207	5	03	2	87	11	91
Միխայլօվօ	214	5	17	2	95	12	37
Գօմի	225	5	34	3	05	12	94
Կարելի	239	5	59	3	19	13	75
Ակրա	248	5	76	3	29	14	32
Գօրի	256	5	87	3	36	14	72
Գրակալի	269	6	13	3	50	15	53
Կասպի	281	6	34	3	63	16	22
Քսանտկա	296	6	58	3	76	17	02
Մցխեթ	307	7	10	4	05	17	25
Աւճալա	317	7	10	4	05	17	25
ԹԻՖԼԻՍ	327	7	55	4	30	18	75
Նաւթուլուղ	333	7	55	4	30	18	75
Աղ-Թագլա	347	7	55	4	30	18	75
Կարա-Թափա	352	8	00	4	55	20	25
Կարաեազ	363	8	00	4	55	20	25
Բէյիւկ-Քեասիք	374	8	00	4	55	20	25
Աօգիւտ-Բուլ.	384	8	40	4	80	21	75
Ցալօգլի	392	8	40	4	80	21	75
Պօյլի	401	8	75	5	00	23	25
Ձաքարլի	409	8	75	5	00	23	25
Աղսթաֆա	415	8	75	5	00	23	25
Թաթլու	424	8	75	5	00	23	25
Թօուզ	434	9	10	5	20	24	75
Կօվլեար	446	9	10	5	20	24	75
Զեգամ	459	9	45	5	40	26	25
Դօլլար	472	9	45	5	40	26	25
Ձամքօր	481	9	80	5	60	27	75
Ալաբաշլի	491	9	80	5	60	27	75
Գանձակ	503	10	15	5	80	29	25

Ջագալի	512	10	15	5	80	29	25
Դալ Մամեթլի	519	10	15	5	80	29	25
Կօրուկ Չայ	532	10	50	6	00	30	75
Գերան	542	10	50	6	00	30	75
Մինգեչահէր	554	10	50	6	00	30	75
Եվլախ	566	10	85	6	20	32	25
Մալահ	579	10	85	6	20	32	25
Լեաքի	589	10	85	6	20	32	25
Ալիքենդ	600	11	20	6	40	33	75
Ուջարի	608	11	20	6	40	33	75
Բարգուշեթ	620	11	20	6	40	33	75
Մուսուսլի	633	11	55	6	60	35	25
Կարաբուջախ	642	11	55	6	60	35	25
Քիւրդամիր	652	11	90	6	80	36	75
Քերար	662	11	90	6	80	36	75
Սագիրլի	675	11	90	6	80	36	75
Փադար	686	12	25	7	00	38	25
Ղարա-սու	698	12	25	7	00	38	25
Մուղան	711	12	60	7	20	39	75
Հաջիկաբուլ	722	12	60	7	20	39	75
Պիրսօղատ	731	12	60	7	20	39	75
Նաւաղի	740	12	60	7	20	39	75
Աղ-Բուլախ	750	12	95	7	40	41	25
Ալաթ	763	12	95	7	40	41	25
Դուվանի	776	12	95	7	40	41	25
Սանգաչալ	785	13	30	7	60	42	75
Խվալինսկի	798	13	30	7	60	42	75
Փութա	809	13	30	7	60	42	75
Էյրաթ	817	13	65	7	80	44	25
Բալաջարի	828	13	65	7	80	44	25
Քիշլի	835	13	65	7	80	44	25
ԲԱԳՈՒ	841	13	65	7	80	44	25

ՄԻԽԱՅԼՈՎԻՑ—ԲՈՐԺՈՄ—ԲԱԿՈՒՐԻԱՆ

	վ.	ր.	կ.	ր.	կ.	կոպ.	
ՄԻԽԱՅԼՈՎՕ							
Սումբատով	12	0	32	0	18	0	69
ԲՈՐԺՈՄ	27	0	74	0	42	1	61
Դաբա	10	0	27	0	15	0	58
Ցագվերի	14	0	41	0	23	0	87
Ցեմի	17	0	48	0	27	1	04
Նիկոլաեվ	24	0	63	0	36	1	38
Սակոչավի	28	0	77	0	44	1	67
ԲԱԿՈՒՐԻԱՆԻ	36	0	98	0	56	2	13

ԹԻՖԼԻՍԻՑ—ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ—ԵՐԵՒԱՆ

	վ.	ր.	կ.	ր.	կ.	կոպ.	
ԹԻՖԼԻՍ							
Նաւթուլուղ	6	0	16	0	9	0	35
Սօղանլուղ	12	0	35	0	20	0	75
Ջանդար	34	0	90	0	51	1	96
Աշաղա Սերալ	47	1	25	0	71	2	71
Սադախլօ	61	1	63	0	93	3	57
Ախթալա	85	2	26	1	29	4	95
Սանահին	103	2	72	1	55	5	93
Կալագերան	119	3	14	1	79	6	85
Ճահալի	126	3	35	1	91	7	31
Ղարաքիլիսա	141	3	71	2	12	8	11
Համամլի	159	4	20	2	40	9	20
Նալբանդլի	169	4	36	2	49	9	72
Ղալթաղչի	178	4	52	2	58	10	24
Ջաջուռ	187	4	68	2	67	10	76
ԱԼԵՔՍ—ՊՕԼ	206	5	01	2	86	11	85
Աղին	230	5	43	3	10	13	23
Անի	248	5	76	3	29	14	32

	վ.	ր.	կ.	ր.	կ.	կոպ.	
Ալագեազ	266	6	06	3	46	15	30
Կարաբուլաւն	282	6	36	3	63	16	28
Արաքս	295	6	58	3	76	17	02
Սարդարաբադ	305	7	10	4	05	17	25
Էջմիածին	324	7	10	4	05	17	25
Ուլուխանլու	338	7	55	4	30	18	75
ԵՐԵՒԱՆ	351	8	00	4	55	20	25

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ—ԿԱՐՍ

ԱԼԵՔՍԱՆ-ԴՐԱՊՕԼ							
Կարաեալ	21	0	58	0	33	1	27
Բաշ-Քադլք.	41	1	09	0	62	2	36
Մազրա	58	1	56	0	89	3	40
ԿԱՐՍ	71	1	89	1	08	4	14

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

—

1. Ամեն գնացքի համար վաճառւում են տոմսակներ, որոնց վերայ նշանակւած են թէ քանի օր ույժ ունեն. որը հաշւում է կէս գիշերից մինչև հետևեալ կէս գիշերը։

2. Ճանապարհին որևէ կայարանում իջնելու դէպքում պէտք է տոմսակը ներկայացնել նոյն կայարանի նաչալնիկին, որ կնիք խփէ. դուրս գալուց առաջ ևս նոյն տեղում պէտք է կնիք խփել տալ։

3. Ամեն ճանապարհորդ առանց վարձի մի փութ բագաժ տալու իրաւունք ունի, իսկ երեխաները 20 ֆունտ։ Եթէ բագաժը պակասել է, կամ վնասւել, իսկոյն բագաժն ստանալիս պէտք է իմաց տալ կայարանի վարչութեանը, իսկ եթէ կորել է, պէտք է կորուստը պահանջել գրաւոր յայտարարութիւն տալով մի ամսւայ ընթացքում, հաշւած ուղարկած օրից։

4. Մինչև 5 տարեկան երեխաներից երկաթուղու տոմսակ չի պահանջւում. 5—10 տարեկաններից պահանջւում է տոմսի ¼ գինը։ 10-ից աւելի հասակաւորների համար պահանջւում է լրիւ տոմսակ։

~~~

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեւ ծով։ Տոմսակների արժէքը «Русское Общество»-ի նաւերի համար։

Բաթումից մինչև	Առանց ուտելիքի								Բագաժ 1 փ.
	Փոստ-մարդատար նաւերի վերայ				Ապրանքա-մարդատար նաւ				
	II կ.		III կ.		II կ.		III կ.		
	ր	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	կ.
Օդեսսա	19	85	9	80	15	90	5	50	60
Եւպատորիա	14	80	7	20	11	85	4	50	55
Սեւաստօպօլ	14	—	7	20	11	20	3	90	55
Եալթա	14	—	7	10	11	20	3	60	50
Ալուշթա	13	75	7	—	11	—	3	40	50
Սուդակ	13	75	7	—	11	—	3	40	50
Թէօդօսիա	13	—	6	40	10	40	3	40	50
Կերչ	11	—	5	20	8	80	3	—	40
Նօվօրօս.	8	70	4	—	7	—	3	25	25
Անապա	11	—	5	20	8	80	3	—	40
Ջուբգի	8	70	4	—	7	—	2	25	25
Տուապսէ	6	—	3	20	4	80	2	—	25
Սոչի	6	—	3	20	4	80	2	—	25
Ադլէր	6	—	3	20	4	80	2	—	25
Գուդաուտ	5	60	2	40	4	50	2	—	25
Նոր-Աֆօն	5	10	2	—	4	10	1	30	25
Սուխում	3	25	1	20	2	60	1	—	20
Օչեմչիրի	2	35	—	20	1	90	1	—	20
Փօթի	1	50	—	80	1	20	—	50	20
~~~

ՍԵՒ ԾՈՎ

«Российское Общество»-ի նաւերը Բաթումից հեռանում են՝ երեքշաբթի և ուրբաթ օրերը երեկոյեան ժամի 5-ին:

Բաթումից մինչև	II կարգ		III կարգ		1 փ. բագ.
	Ռուբլի	Կոպէկ	Ռուբլի	Կոպէկ	Կոպէկ
Փոթի	1	40	—	50	10
Օչեմչիրի	2	40	—	75	13
Սուխում	2	60	1	—	14
Նոր-Աֆօն	3	40	1	30	15
Գուդաուտ	3	60	1	40	18
Սոչի	4	—	1	60	20
Տուապսէ	4	50	2	—	20
Նովօրօս.	5	—	2	25	23
Անապա	6	—	2	75	25
Կերչ	6	50	3	—	25
Թէօդօսիա	7	50	3	40	30
Սուդակ	7	50	3	40	30
Եալթա	8	—	3	60	35
Սեաստօպօլ	8	50	3	90	35
Օդեսսա	12	—	5	50	45

ԿԱՍՊԻՑ ԾՈՎ

«Кавказъ и Меркурій» ընկերութեան նաւերը պտոյտ են անում Բագուից—Դերբենտ, Պետրովսկ, Աստրախան: Ընկերութիւնն ընդունում է ապրանքներ՝ մինչև Վօլգա, Կասպից ծովի նաւահանգիստները՝ Անդրկասպեան երկիրը և Մոսկւայ, Վարշավայ, Լօձ և Ռօստով հասցնելու համար:

Ընկերութեան գրասենեակը Թիֆլիսում, Բարեատինսկայա փ., № 8, տելեֆօն 415:

«Надежда» ընկերութեան նաւերը որոշ կամ անորոշ ժամանակներում պտոյտ են անում Պետրովսկ-Ուզունադա և Բագու—Ուզունադա գծերով:

Ընկերութեան գրասենեակը՝ Թիֆլիս, Դվօրցովայա փողոց, Վրաց. ազն. տան մէջ:

ԴԷՊԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ֆրանսիական «Мессажери Маритимъ» ընկերութեան շոգենաւերը կանոնաւոր կերպով երթևեկում են Լօնդոնի, Մարսելի և Բաթումի միջև: Լօնդոն գնացող նաւերը մտնում են նաև Կ. Պօլիս, Մարսել և Հաւր: Նոյն ընկերութեան նաւերով կարելի է գնալ և Եաֆֆա, Ալեքսանդրիա, Հնդկաստան, Չինաստան, Եապոնիա, Մա-

ղազասկար, Նաւա, Ցէյլոն, Աւստրալիա, Զանզիբար, Նոր-Կալեդոնիա և այլն:

Գործակալութիւնը Թիֆլիսում — Դվօրցովայա, Վրաց. ազն. տուն:

Ֆրանսիական «Н. Паке и К-°» ընկերութեան շոգենաւերը կանոնաւոր երթևեկում են ուղղակի Բաթումից—Մարսել և հակառակը Մարսելից Բաթում: Նաւերը մեկնում են իւրաքանչիւր երկու շաբաթը մի անգամ. Բաթումից, չորեքշաբթի օրը ժամը 4-ին, ճանապարհին մըտնում են Տրապիզոն, Սամսոն և Կ. Պօլիս:

Ամեն տեսակ տեղեկութիւններ ստանալ կարելի է Թիֆլիսում Գ. Օ. Բարեկենդանեանից:

Սիօնի փ. Խօջապ. քարվանսարայ:

Պօստային ճանապարհներ Կովկասում

Ախալցխայից—Բօրժօմ . .	50 1/4	վերստ
Ախալցխայից—Ախալքալակ .	66 1/4	»
Ախալքալակից—Ալէքսանդրապօլ	89 1/2	»
Արդահանից—Օլթի . . .	124 3/4	»
Ախալցխայից—Արդահան . .	72	»
Ախալցխայից—Բաթում . .	147	»
Ալէքսանդրապօլից—Զարիշատ .	52 1/2	»
Բաշնորաշէնից—Նախիջևան .	62 1/2	»
Բաթումից—Արդահան . .	150	»
Գանձակից—Հաջիքենդ . .	27 1/4	»
Դիլիջանից—Երևան . . .	63 3/4	»
Դիլիջանից—Ղարաքիլիսա .	19 1/2	»
Երևանից—Բաշնորաշէն . .	89 3/4	»
Երևանից—Էջմիածին . .	18 1/2	»
Թիֆլիսից—Ջալալ-Օղլի . .	135	»
Հաջիկաբուլից—Սալեան . .	50 1/2	»
Ղարաքիլիսից—Ջալալ-Օղլի .	50 1/2	»
Կարսից—Սարիղամիշ . .	58 3/4	»
Կարսից—Կաղզվան . . .	78 1/2	»
Կարսից—Օլթի . . .	102	»
Նախիջևանից—Օրդուբադ .	74 1/2	»
Շուշուց—Խանկենդ . . .	11	»
Սարիղամիշից—Ղարաղուրղան .	37 3/4	»
Սալիանից—Լէնքօրան . .	118	»

Ելենովկից—Նոր Բայազէտ	.	33	»
Էջմիածնից—Աշտարակ	. .	20	»
Նուխուց—Շամախի	. . .	$158\frac{1}{2}$	»
Նուխուց—Գոտկաշէն	. .	97	»
Եւլախից—Շուշի	. . .	$104\frac{1}{2}$	»
Թիֆլիսից—Մանգլիս	. . .	$70\frac{3}{4}$	»

Փոստային ճանապ. վճարը

Թիֆլիսից Վլադիկավկազ տանող (ռազմական) ճանապարհին պէտք է վճարել մէկ ձիու և մէկ վերստի համար 4 կոպէկ։

Թիֆլիսի, Գանձակի, Բագուի, Քութայիսի և Երևանի նահանգներում, Դաղստանի և Կարսի շրջանում և Զաքաթալայի վիճակում (օկրուգ) մէկ ձիու և մէկ վերստի համար պէտք է վճարել 3 կոպէկ։

Բացի այս վճարից ամեն մի ճանապարհորդ վճարելու է երբև պետական տուրք՝ իւրաքանչիւր ձիու պրագոնի համար 10 կոպէկ։

ԵՂԻՍԱ Դ. ՈՍԻԴԱՂԵԱՆ

(Տես երես 267)

«ՃԻՐԱԿ» 1910 թ.

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՇԸՂ ՋԻՒԱՆԻ

—

1909-ի փետր. 24-ին, Թիֆլիսում իր մահկանացուն կնքեց հայ ազգի երգիչ Աշըղ Ջիւանին։

Ժողովրդի հարազատ որդի և նրա հարազատ երգիչ Աշըղ Ջիւանին քառասնական թւականներին ծնւել է Ջաւախքի Կաղախ գիւղում, Կվլերթա թաղում։ Իր կրթութիւնը (գրել-կարդալ) ըստացել է ոչ կանոնաւոր դպրոցում. Նրա դպրոցը եղել է իր տաղանդը, հայ աշուղները և ինքը՝ կեանքի բնական ընդունակութիւններով օժտուած՝ նա 70-ական թւականներին հնչեցրեց իր քնարի լարերը Գուգարաց բարձունքներից և նրա այդ քնարի ձայները լսելի եղան շատ հեռուն, ամեն տեղ, ուր բնակւում են հայեր։

Եօթանասունական թւականներից Ջիւանին առաջին անգամ հնչեց.

«Քո փափագով վառւում եմ, արի սիրե-
կանս ո՞րտեղ ես,
«Երկնային ամպերու մէջ նստող ծիածա-
նըս ո՞րտեղ ես»։

Երգը, որ բերնէ բերան գնաց, և ամբողջ Ջաւախ-

քը երգում էր ու Ջիւանու անունը բարձրացնում։ Սակայն գիւղը՝ Կաղախը, ուր ծնւել էր Ջիւանին՝ նրա համար նեղ եկաւ, իր քնարի ձայները աւելի զօրեղ դարձնելու համար նրան հարկաւոր էր աւելի մեծ հասարակութիւն. դա փոքրիկ Ախալքալակ գաւառական քաղաքն էր, ուր գնաց նա երգելու. սակայն այստեղ էլ երկար չմնաց. Նրան սպասում էր մի աւելի բազմամարդ և պատրաստւած քաղաք. դա Ալէքսանդրապօլն էր, որ ամենայաւ միջավայրը դարձաւ երիտասարդ երգչի տաղանդի աճելուն։ Ջիւանին այստեղ ծանօթացաւ մի լաւ հայ ընտանիքի, նրանց օրիորդի հետ պսակւեց և այնուհետև սկսեց մէկը միւսի յետևից երգել ազգային ոգով, ընտիր իմաստով երգեր. այստեղ նա գրեց իր ազգայնական երգերը, որոնք մինչև օրս էլ բերնէ բերան են գնում, ինչպէս՝

«Ազգ իմ որքան նկուն մնաս,
«Սիրտս քեզանից չի գատւի,
«Հազար տեսակ չարչարանք տաս,
«Սիրտս քեզանից չի գատւի»:

Կամ.—

«Ով որ իւր ազգն ուրանայ,
«Երկու աչքով կուրանայ,
«Ցեռնեալ աղքատի նման՝
«Դռնէ ի դուռ մուրանայ»։

Եւ կամ.—«Ես մէկ ծառ եմ ծիրանի,
«Հին արմատ եմ անւանի,
«Պտուղներս քաղցրահամ,
«Բոլոր մարդկանց պիտանի»:

փոխաբերական երգը հայ ժողովրդի մասին:

Ալէքսանդրապօլում այն տխուր ու վհատած օրերին երգեց նա ժողովրդին հոգեպէս ամրապնդելու համար.

«Չախորդ օրերը ձմրան նման կուգան ու կերթան,
«Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.
«Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
«Որպէս յաճախորդ, շարւէշարան կուգան ու կերթան։

Որպիսի երգը վերջացրեց հետևեալ իմաստուն տունով.

«Երկիրը ուսեալ զաւակին փայփայում է մօր պէս,
«Անկիրթ ցեղերը թափառական, կուգան ու կերթան.
«Աշխարհը հիւրանոց է Ջիւան, մարդիկը հիւրեր,
«Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան։

Բացի զուտ պոյէտական և իմաստալից ու ազգայնական գրուածքներից, Ջիւանին ունի և հումորական ոճով գրուածքներ, ինչպէս օրինակ՝

«Անմիտ ճնճղուկը բաղէի ճանկից
«Ուզում է որս խլել, խելքի աչեցէք.
«Կարծես ձաֆձրացել է գլխից ու կեանքից,
«Պատերազմ է մտել, խելքի աչեցէք:
«Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
«Ասպարէզը համրակներուն թողած.
«Ջիւանն էլ կաղ իշով կարաւան մտած,
«Բանաստեղծ է դառել խելքի աչեցէք»:

Յաճախ Ջիւանին երգում էր մաքուր ընկերական կամ պատկերաւոր երգեր. ինչպէս օրինակ նա 80-ական թւականներին երգեց՝

«Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
«Որ փայլեցնէ արևի պէս պատկերը մարդու,
«Կեանքդ նուիրես ընկերի լաւին, քիչ է դարձեալ,
«Այնպէս հոգեկան լուսատու վառ լապտերը մարդուն:

Կամ «Այծեամը»

«Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին,
«Պտտւում են քո խեղճ անձիդ վնասին,
«Դամրաններով, բարակներով միասին.
«Փախիր այծեամ փախիր, որսկանն է գալիս.
«Ձագուկներդ տխուր, լալիս են լալիս:

Բայց այդ բազմաթիւ երգերը գրելով ու երգելով Ջիւանին միշտ միևնոյն տեղում (Ալէքսանդրապօլում) չէր մնում, նա շրջում էր բոլոր հայաբնակ քաղաքներում ու գիւղերում, երգում էր ամեն տեղ և ահագին ոգևորութիւն ու շարժում առաջ բերում իր շուրջը: Ջիւանին համարեա շրջել է Ռուսաստանի բոլոր հայաբնակ վայրերը և ամեն տեղ անջնջելի յիշողութիւններ թողել:

Բայց Ջիւանու ամենից շատ սիրած տեղը Թիֆլիսն էր, Ռուսաստանի այդ ուրախ և զւարճասէր քաղաքը, ուր ամեն ամառ Քուռի ափի այգիներում երգում ու նւագում էր իր ընկերների հետ, որպիսի երգը լսելու համար հաւաքւում էր այնտեղ ահագին բազմութիւն. ուսանողներ, ուսուցիչներ, ինտելիգենտներ և զանազան դասակարգի մարդիկ և ժամերով լսում նրան:

Ջիւանու մեծութիւնը բացի բանաստեղծ և երգիչ լինելուց կայանում է նրանում, որ նա առաջինը եղաւ, որ զարկ տւեց հայերէն երգի տարածման. մինչ այդ, թէև ունեցել ենք Սայաթնովա, Շիրին և այլն, բայց նրանցից ոչ մէկը չէ կարողացել այնպէս հայ երգը ժողովրդականացնել, ինչպէս Աշըղ Ջիւանին. Նա ռամիկ հային ցնել, ինչպէս Աշըղ Ջիւանին. Նա ռամիկ հային գուրս կանչեց իր խաւար հասկացողութիւնից, որ դուրս վանեց հայ երգը միայն թուրքերէն չի լինի, դուրս վանեց հայ երգը միայն թուրքերէն երգելու սովորութիւնը և կեանքից թուրքերէն երգելու սովորութիւնը և

նրա փոխարէն իր զօրեղ քնարի շնորհիւ տւեց հայ հոգով հայ երգ։ Այսօր ո՞ր քաղաքը և գիւղը հարցնէք, ո՞ր հայ աշուղներն տաէք, որ երգելիս չլինեն Ջիւանու երգերը։

Ջիւանին, կարելի է ասել հայ աշուղական-գրական ասպարիզում ստեղծեց մի նոր շկօլա։ գրական, ժողովրդին հասկանալի լեզւով ուղղութիւն, որը վարակեց շատերին, ինչպէս մի ժամանակ Սերվանտէսի և Դեֆօի օրինակը և շատ հայ աշուղներ սկսեցին նրան նմանել. սակայն, տարաբաղդաբար այդ գրողներից մէկը նրան չը հասաւ. դրանց բոլորի մէջ Ջիւանին մնաց մեծ և մեծ էլ մեռաւ, Թերևս վերջին շնչում երգելով՝ «Աշխարհը հիւրանոց է Ջիւան, մարդիկը հիւրեր, «Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան։

Ու գնաց հայ ազգի տաղանդաւոր երգիչ Աշըղ Ջիւանին, իրեն տեղը բաց թողնելով, ու իրեն համար անձեռագործ արձան կանգնեցնելով։

Մեռաւ Ջիւանին 40 երկար տարիներ իր սիրեցեալ ազգի համար Թղթեր ու կուրծք մաշելով, «իմ հարազատ, անուշ Հայաստան» երգելով, մեռաւ քաղցած, մեռաւ անապահով վիճակի մէջ, մեռաւ այնպէս, ինչպէս մեռնում են մեզանում հայ գրողներն ու գործողները...

Մեռաւ հայ ազգի ալիգ Աշըղ Ջիւանին։

ՄԷՆ-Ցիկ

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ

Կովկասահայ յայտնի բարեգործ, որի բազմաթիւ գործերից աչքի ընկնողներն են՝ Ներսիսեան Հոգևոր դպրանոցի նոր շէքնի համար՝ 200,000 ռուբ. նուիրելը. Պարիզի հայոց եկեղեցու կառուցումը. մշտապէս մի քանի տասնեակ որդեգրներ պահելու կանացան բարձրագոյն կրթարաններում. Թիֆլիսի վաճառականական դպրոցի հիմնարկումը. Ս. Էջմիածնի վերանորոգութեան համար 40,000 ռուբլի յատկացնելը. Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցու վերանորոգելը. Փոքրահասակ յանցագործների Աւճալայի ապաստանատան հիմնելը. Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին 20,000 ռ. նուիրելը. Թիֆլիսի Հայոց Դրամ. ընկ. 15,000 ռ. տալը, 3 հատ գիւղատնտեսական դպր. բաց անելու միտքը, որ յղացել է և անտարակոյս կիրականացնէ և այլն։

Բազմաքանակ մանր ու խոշոր բարեգործութիւններ, որ արել է և շարունակում է անել այդ այդ մեծ բարերարը և այն իր կենդանի ժամանակ իր աչքերով տեսնելով այդ գործերի արդիւնքներն ու համազգային յարգանք վայելելով։

Բացի իր ազգից, Ա. Մանթաշեանը արել է շատ նշանաւոր գործեր օտար ազգերի համար։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՆԱՆԵԱՆ

(† 1909 թ.)

Համակրելով Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան նոր մշակած կանոնադրութեան բոլոր նպատակները, առաւելապէս կրթականը, ի հաստատութիւն իր այդ համակրանքի դէպի այդ ընկերութիւնը, նուիրել է այդ ընկերութեանը քսան հազար ռուբլի կանխիկ գումար հետևեալ նպատակով:

1) Այդ գումարը պէտք է լինի անձեռնմխելի, իբրև նուէր իր անունից:

2) Գումարի տոկոսները պէտք է գործադրուեն յատկապէս կրթական նպատակների համար, գլխաւորապէս գիւղական դպրոցների վրայ, հիմնելով նոր դպրոցներ կամ օժանդակելով-նոր բացուելիք և գոյութիւն ունեցող հայ դպրոցներին:

3) Իցէ թէ ընկերութեան այժմեան կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկուի և շնորհիւ այդ հանգամանքի ընկերութիւնը անկարող լինի հայկական դպրոցներ հիմնել կամ այդպիսիներին օժանդակել, այդ դէպքում ներկայ գումարի տոկոսը ընկերութիւնը պէտք է գործադրի միւս հայկական և կանոնադրութեամբ թոյլատրուելիք կարիքների վերայ:

4) Իսկ եթէ ընկերութիւնը փակուի, այն ժամանակ այս գումարը յատկացնում է մի այլ հայկական հաստատութեան կամ նպատակի՝ ընդհանուր ժողովի որոշմամբ:

Նոր սերնդի բարոյական ու մտաւոր զարգացումից կախուած է հայ ժողովրդի ապագան: Բարոյագիտութիւնը դպրոցներում պէտք է անհրաժեշտութիւն ներկայացնի և այդ առթիւ ցանկալի էր, որ ընկերութիւնը հետևէր եւրոպային, գլխաւորապէս Գերմանիայի կենդանի օրինակին, ասում է բարերարը: Նա բացի այս քսան հազար ռուբլուց խոստացել է ապագայում իր կտակով ևս տասն հազար ռուբլի:

ՅՈՎ. աւ. քահ. ՏԷՐ-ԳԱԼՍՏԵԱՆ

Ախալքալակ գիւղում իր սեփական երկու քարէ տունը և մէկ այգին 20,000 ռուբլու գնահատութեամբ նուիրել է Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան հետևեալ պայմաններով. ա) Այդ կալուածները պէտք է շահագործուեն Ախալքալակ գիւղի հայ հասարակութեան կարիքների համար, գլխաւորապէս կրթական կարիքների. բ) Կալուածներից նոր մեծ տունը պէտք է ծառայէ դպրոցի շինութեան համար և անցնում է ընկերութեանը անմիջապէս, իսկ հին տունը և այգին անցնում են ընկերութեանը իր մահից յե-

տոյ։ Այս կալուածները յանձնուած են օրինական թղթով։

Աւելացուած է կտակում և հետևեալը։ Իցէ թէ Կ. Հ. Բարեգործական ընկերութիւնը փակւի կամ անկարող լինի, իրաւունքի տեսակէտից, պահպանել Ախալքալակ գիւղում մի որևիցէ ազգօգուտ հասարակական հիմնարկութիւն, այդ դէպքում կալուածները անցնում են տեղական լուսաւորչական ս. Կարապետ եկեղեցու սեփականութիւն։

ՅՈՎՀ. Դ. ԽՈՒԴԱԴԵԱՆ

Վախճանուած 26 ապրիլի 1897 թ., կտակով նւիրել է Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան իր համարեա ամբողջ կարողութիւնը, այն է՝

1. Երկյարկանի մի տուն (Երասարախեան հրապարակում), ուր այժմ զետեղուած է ընկերութեան որբանոցը։

2. Մի քարւանսարայ (Ակիմովսկի և Բուժէյնի փող. անկիւնում), որը ընկերութիւնը վերաշինեց և այժմ բաղկացած է 24 խանութից ու 4 նկուղից։

3. Բանկային արժէթղթեր և շարժական այլ կայք, որ նոյնպէս վերլուծել է արժէթղթերի՝ ընդամենը 57,803 ր. (ռենտաներ՝ 28,000 ռուբ.

Թիֆլիսի առևտրական բանկի 70 ակցիա՝ 28,000 ր., I և II խաղարկութեան տոմսեր՝ 1803 ր.)։

Հանգուցեալի յիշատակին և նրա նւիրած գումարներով ու յատուկ ցանկութեամբ որբ աղջիկների համար Թիֆլիսում պահւում է որբանոց։

ԵՂԻԱ Գ. ԲՈՒԴԱՂԵԱՆ

Բագուի առաջին կարգի վաճառական, 1907 թ. մայիսի 15-ին Օդեսայում վախճանուեց և թողեց մի կտակ, որը կազմուած է 25 ապրիլի 1897 թ. Բագու։ Հանգուցեալը իր այդ կտակում ազգային զանազան հաստատութիւններին գումարներ է նշանակել, ինչպէս նաև Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեանը 10,000 ռուբլի։

Երջանկայիշատակ բարերարի այրի Սոֆիա Անտօնեան Բուդաղեանը, դեկտ. 7-ին 1907 թ. մի գրութեան հետ ընկ. յանձնեց 10,000 ռուբ.։

Որովհետև նւիրատուն գումարի գործադրութիւնը թողել է ընկերութեան իրաւասութեան, ուստի ընկերութիւնը 1908 թ. ընդհանուր ժողովը ընդունեց յիշեալ գումարը և որոշեց գործադրել միմիայն նրա տոկոսները առայժմ գիւղական դպրոցների վերայ և ի յարգանս նւիրատուի յիշատակի, հանգուցեալի մեծադիր լուսանկարը կախել ընկերութեան խորհրդարանում։

ՏԻԳ. ԱՖՐԻԿԵԱՆ

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի տրամադրութեան տակ է դրել իւրաքանչիւր տարի վճարելու.

Տփխիսի հայոց դրամատիկական ընկերութեանը՝ տարեկան 1000 *ռ., Երևանի թեմական դպրանոցին՝ տարեկան* 1000 *ռ., Երևանի Մարիամեան Օրիորդաց դպրոցին՝ տարեկան* 200 *ռ., Զիրուխլի գիւղի ուսումնարանին՝ տար.* 500 *ռ., Ներքին-Ախտայի՝* 500 *ռ., Ինդամալի՝* 300 *ռուբ., Կարբիի՝* 900 *ռ., Բազարչայի՝* 500 *ռ., Նորաշէնի (Ճորագեալ)՝* 300 *ռ., Ուլիա-Նորաշէնի (Ճարուր-Դարալագեազ)՝* 300 *ռ., Նորագուղի՝* 300 *ռ. Ներքին Գեօզալդարայի՝* 300 *ռ., Օրդակլուի՝* 500 *ռ. Ցամաքաբերդի՝* 300 *ռ.: Ընդամենը* 6,900 *ռուբլի։*

(† 1909 *թ.*) ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՏԻՆԵԱՆ

Մօտ 15 *տարի հանգուցեալը ղեկավարել է հասարակական կեանքը Կովկասի մայրաքաղաքում՝ ամբողջապէս նուիրելով Թիֆլիսի ազգաբնակութեան շահերին։*

Այդ բաւական չէ. նա իր ամբողջ աշխատանքը, իր ամբողջ հարստութիւնը թողել է այն քաղաքին, ուր անցրել է իր կեանքի դժւար, բայց լաւագոյն օրերը։ Նա մօտաւորապէս 200 *հազար ռուբլի կտակել է Թիֆլիսի ազգաբնակութեան կրթական պէտքերի համար։*

Հայ էր նա, բայց մեծ մարդոց յատուկ վեհութեամբ նա խտրութիւն չի դրել Կովկասի ժողովրդների մէջ։ Նա սիրում էր բոլորին։

ՋԻԱՐՃԱԼԻ ԽԱՂԵՐ

Գետնի վերայ երկար ուղիղ գիծ են քաշում. մի քանի հոգի շարւում են այդ գծի երկարութեամբ և ծռելով աջ ձեռքերը աջ սրունքների տակից անցնում են ապա աշխատում են այդ գծին ուղղահայեաց մի գիծ քաշել։ Որի գծածը ամենից երկարը լինի, նա տարել է յաղթանակը։ Այս խաղը շատ էլ հեշտ չէ, որովհետև հաւասարակշռութիւնը հեշտութեամբ կորչում է։

—

Երկու հոգի $1^1/_2$ *արշինի չափ իրարից հեռու մի մի ոտների վերայ կանգնած են, իսկ միւս սրունքները օդի մէջ է և բռնած է մի ձեռքով. միւս ձեռքերին կայ մի մի մոմ, մէկը վառ, իսկ միւսը մարած։—«Թոյլ կտա՞ք, որ ճրագս վառեմ, հարցնում է մէկը.—«Սիրով, պատասխանում է միւսը»։ Իհարկէ ասելը հեշտ է, բայց կատարելը ոչ։ (Այս խաղի համար նաև հոգ տարէք, որ առաջուանից պէտք է գետնի վերայ փռել անպէտք լրագրի թղթեր, որ մոմի կաթիլները չը կեղտոտեն գետինը։*

—

Երկու հոգի աչքերը կապած դէմ առ դէմ պառկում են գետնի վերայ, մի մի ձեռքերով իրար բռնած, իսկ միւս ձեռքերի մէջ կայ

լրագիր կամ ուրիշ ծալած թուղթ:—«Պատրաստ ես» հարցնում է մէկը:—Այո՛, պատասխանում է միւսը և փոխադարձաբար սկսում են թղթով իրար գլխի խփել, միշտ աշխատելով հակառակորդի հարուածներից խուսափել: Այս խաղը աւելի զւարճութիւն կպատճառէ այն ժամանակ, երբ ներկայ եղողներից մի քանիսը թղթով երկու հակառակորդների գլխին խփեն փոխն ի փոխ:

—

Լւացքի զամբիւղի 2 բռնելիք տեղերից անցկացրէք աւելի կոթը, որի 2 ծայրը ամրացրէք 2 աթոռների վրայ: Թեթևաշարժ մէկին նստեցրէք աւելի կոթին՝ ձի նստելու դիրքով, երկու ոտքերն էլ զամբիւղի մէջ կախած: Այդ նստողը պարտաւոր է աթոռի վերայ դրուած չորս դրամները գետին ձգել: Տասից ինը՝ անկարող է յաջողեցնել, և դրամների տեղ ինքը գետին կը ընկնի:

—

Մի պարոն արծաթէ գլխով գաւազանը գետնին ուղղահայեաց իջեցրած ճակատը գաւազանի գլխի վերայ յենելով, անդադար արծաթեայ գլխին է նայում: Այս դիրքի մէջ հինգ վեց անգամ գաւազանի շուրջը պտուելուց յետոյ, եթէ նրան խնդրէք սրահի մէջ մի որևէ առարկայ բռնել, նա չը պիտի կարողանայ, որովհետև հարբածի նման չի կարողանում ոտքի կանգնել:

Ձախ ձեռքով աջ ոտքերդ բռնեցէք, իսկ աջ ձեռքերով էլ ձախ ականջներդ, յետոյ աշխատեցէք գետնի վերայից ատամներով լրագիր կամ մի այլ բան վերցնել:

—

Մի քիչ յարդ փռեցէք գետնի վերայ և մէկի հետ գրաւ բռնեցէք, որ յարդի վերայից ցատկի, միայն այն պայմանով, որ ոչ ոտքերը իրարից բաժանէ և ոչ էլ սրունքները ծալէ:

—

—Տիկնայք, այս երեկոյ մի տարօրինակ փորձ պէտք է կատարեմ ձեզ. ո՛չ սենեակի մէջ պէտք է գտնւիմ, ո՛չ էլ դրսի սրահը, բայց դուք ինձ պէտք է տեսնէք, ինչպէս հիմա էք տեսնում: Ո՛չ տախտակամածի վերայ պէտք է կենամ, ո՛չ պէտք է պառկեմ, ո՛չ նստեմ, ո՛չ պարեմ, ո՛չ ցատկեմ. վայր չպէտք է գնամ, ո՛չ էլ դուրսը սանդուխների վերայ կանգնեմ, բայց ձայնս պէտք է լսէք և ձեր ասածներին ես պատասխան պիտի տամ. ո՞վ գրաւ կբռնէ հետս»:

Գրաւը բռնելուց յետոյ, դուռը կը բանաք և շրջանակի մէջ կը կանգնէք. միայն հոգ տարէք, որ ոտներդ տախտակամածին չը դիպչի:

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

Խօքր մատով մի մարդ վերցնել

Սոյն պատկերը մի զարմանալի վարժութիւն ներկայացնում։ Գրագէտները կարող են փոր-

ձել և կտեսնեն, որ օտար չէ բնագիտական ըս-կզբունքից։ Մի փորձ, որ խօթը մատի մէջ է կայանում։

Երկու հոգի իրենց ցուցամատները անցնում են այն մարդու կօշիկների տակը, որին պէտք է վեր բարձրացնեն, միւս երկուսն էլ իրենց աջ ձեռների մատները դնում են վերոյիշեալ անձի տրմունկի ներքև, հինգերորդ անձն էլ իր ցուցամատը դնում է կզակի ներքև։

Մէկ, երկու, երեք, ասելուն պէս, ամեն ոք մի ուժգին ճիգ պէտք է անէ վարից վեր։ Իսկոյն այն անձը, որի վերայ սոյն փորձը տեղի է ունենում, զարմանալի դիւրութեամբ վեր է բարձրանում։

Սոյն փորձը իսկապէս զարմանք է պատճառում, բայց երբ մի փոքր մտածենք, կտեսնենք, որ սա մի ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ծանրութեան հաւասարապէս բաժանուած մի պարզ օրինակ։

Մի մարդ միջին հաշւով 180 ֆունտ ծանրութիւն ունի, ուրեմն իւրաքանչիւր մատ 25 ֆունտ ծանրութիւն պէտք է վերցնէ, իսկ սա էլ մի տարօրինակ բան չէ։

Փորձը զւարճալի է, և ընդհանրապէս տեսողների զւարթութիւնը գրգռելու առաւելութիւնն ունի։

Ինչպէս իմանալ մէկի տարիքը

Մէկի տարիքը գտնելու համար հարցրէք նրանից թէ ո՞ր սիւնեակի կամ ո՞ր սիւնեակների մէջ է գտնւում նրա տարիքի թւանշանը։ Երբ իմացաք, այդ սիւնեակների գլխի թւանշանները գումարեցէք իրար վրայ և կստանաք նրա տարիքը։ Օր. եթէ մէկի տարիքը 17 է, այդ թիւը կգտնէք առաջին և հինգերորդ սիւնեակի մէջ այս. սիւնեակների գլխի թւանշանների գումարը կլինի 17-ը։

1	2	4	8	16	32
3	3	5	9	17	33
5	6	6	10	18	34
7	7	7	11	19	35
9	10	12	12	20	36
11	11	13	13	21	37
13	14	14	14	22	38
15	15	15	15	23	39
17	18	20	24	24	40
19	19	21	25	25	41
21	22	22	26	26	42
23	23	23	27	27	43
25	26	28	28	28	44
27	27	29	29	29	45
29	30	30	30	30	46
31	31	31	31	31	47
33	34	36	40	48	48
35	35	37	41	49	49
37	38	38	42	50	50
39	39	39	43	51	51
41	42	44	44	52	52
43	43	45	45	53	53

ԶԻԱՐՃԱԼԻ ՎԻՃԱԿԱԽԱՂ.

2	3	7
8	5	9
1	6	4

ՀԱՐՑԵՐ

Ա. Առևտուրի մէջ աջողութիւն պիտի ունենա՞մ։
Բ. Մտադրած ամուսնութիւնը պիտի կատարւի՞։
Գ. Մեծ ձախորդութիւն պիտի ունենա՞մ։
Դ. Վիճակս փոխւելո՞ւ է։
Ե. Արդեօք սիրո՞ւմ է նա ինձ։
Զ. Կինս իմ ընտանիքիս պիտի սիրէ՞։
Է. Փողիս համա՞ր են յարգում ինձ թէ առաւելութիւններիս համար։
Ը. Բաղձանքս պիտի կատարւի՞։
Թ. Կինս գեղեցիկ պիտի լինի՞։
Ժ. Ժառանգութիւն պիտի ստանա՞մ։

ԲԱՆԱԼԻ

Ընտրեցէք հարցերից որը կամենաք և մտքերըդ պահեցէք նրա ձախ կողմում գտնւած տառը։

Քառակուսիների մէջ մատով նշանակեցէք որն է թւանշան (աւելի լաւ է աչքերդ խփած) ապա պատասխանների մէջ գտէք մտքում պահած տառի համապատասխան սիւնեակը և այնտեղ կարդացէք ձեր նշանակած թւանշանի դէմ գրւած պատասխանը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա.

1. Եթէ մի քիչ համարձակ լինիս:
Երբէք մի սպասիր, չես տեսնի:
3. Աջող կլինիս, միայն վերջին օրերդ:
4. Գործիդ կպչիր, և յուսա:
5. Եթէ քիչ խաբես:
6. Անպատճառ, և այն շատ մեծ աջողութիւն:
7. Ո՛չ:
8. Քեզ կգոհացնէ, միայն չես հարստանայ:
9. Անպայման, եթէ վարւել գիտենաս:

Բ.

1. Այո, թէ երբ, Աստւած գիտէ:
2. Թող ձգձգւի, վերջը դու ես օգտւողը:
3. Մի քիչ բարկացիր, ամեն բան գլուխ կգայ:
4. Ի՞նչ ես մտածում, երբ մէջ տեղը բան չկայ:

5. Աշաատիր սիրտը գողանալ:
6. Աշխարհում անկարելի բան չկայ:
7. Երկու կողմից խորամանկութիւն է: Ո՛չ:
8. Միջնորդների հմտութիւնից է կախւած:
9. Գլուխ չի գայ, յուսով ես ապրում:

Գ.

1. Անպատճառ, քանի այդքան հպարտ ես:
2. Ոչ յարատև է բաղդդ:
3. Ցարատև ոչինչ չկայ:
4. Երբ ամուսնանաս:
5. Ո՛չ, եթէ բարեգործութիւն անես:
6. Արդէն նշաններ կան:
7. Բաղդաւոր կմնաս:
8. Ոչ:
9. Բաղդը չի թողնէ մարդուս, ճրագը վառ մինչև ի լոյս:

Գ.

1. Աւելի երջանիկ պիտի լինիս:
2. Երանի պիտի տաս անցեալիդ:
3. Զախորդ օրերդ կանցնեն ու կերթան:
4. Այո. աղջիկներդ երջանիկ կանեն քեզ:
5. Ուղտի պոչի նման կմնաս:
6. Կհարստանաս շատ:
7. Պարտքերդ տեղը ունեցածներդ կծախեն:

8. Եթէ տասն ունենաս կտանես 200,000։
9. Անաջողութեամբ կկորչի ամեն ինչդ։

Ե.

1. Ի՞նչպէս չէ։
2. Այո. և այն անկաշառ սիրով։
3. Քեզ պաշտում է .. ժամանակաւորապէս։
4. Հայելուն նայիր, քեզ նման այլանդակին կարելի՞ է սիրել։
5. Ոչ, ո՛չ։
6. Այնքան, որ խելքը թռցնում է։
7. Սիրում է ջերմ սիրով։
8. Խաբում է քեզ։
9. Առ երես միայն։

Զ.

1. Այդ քեզանից է կախուած։
2. Անպատճառ։
3. Ընտանիքի սիրոյ մէջ է երջանկութիւնը։
4. Ոչ, շղթաների մէջ սէր չկայ։
5. Եթէ փոխադարձ սէր գտնի։
6. Դժոխքը ով կսիրէ։
7. Այո՛, և դու երջանիկ կլինիս։
8. Բերած օժիտը թոյլ չի տալիս։
9. Սէ՜ր... ո՛չ տեսնես։

Է.

1. Աշխարհը փողի աշխարհ է.
2. Փուչ մտմոնան չքանում է քո առաջ։
3. Գրպանիդ հաստութիւնն են սիրում։
4. Քո անձիդ բարձրութիւնն են սիրում։
5. Աղքատի երեսը ո՞վ կնայի։
6. Քանի հարուստ ես, սիրելի ես։
7. Գաղափարներդ են յարգում։
8. Բոլորը գրպանիդ բարեկամ են։
9. Խոհանոցի ճանճեր են, քանի որ կերակուր հոտ կայ։

Ը.

1. Չի կատարուի։
2. Եթէ փողից զօռ անես։
3. Կկատարուի աջող կերպով։
4. Միւս աշխարհում։
5. Ուզածիդ նման կլինի։
6. Ո՛չ, ո՛չ։
7. Յուսով պիտի ապրես։
8. Անպատճառ, թէև քիչ ուշ։
9. Յուսա՛, բաղդը քեզ ժպտում է

Թ.

1. Որպէս դլխացուհի։
2. Փողով, շատ գեղեցիկ կերևայ քեզ։
3. Քեզ մեծութիւնից, տրևի երես չես տեսնի։
4. Քանի դեռ աղջիկ է, գեղեցիկ է։
5. Ամենատգեղ աղջիկն է։
6. Բնաւորութեամբ շատ գեղեցիկ է։
7. Դէմքով փայլուն, հոգին սև։
8. Սևի սիրունը։
9. Դէմքով և բնաւորութեամբ ամենագեղեցիկը։

Ժ.

1. Ձատ մեծ հարստութիւն։
2. Մի քաւթառ զօքանչ։
3. Մեծագումար պարտք։
4. Անշարժ կալուածներ։
5. Ութը որբեր։
6. Տգեղ քենի։
8. Ոչինչ չես ստանայ։
9. Կստանաս, բայց կհրաժարուես։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ Կ. ՊՕԼՍԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՕԾՈՒՄԸ

Կաթողիկոսական հրաւիրակներ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան, Տ. Աշոտ եպիսկոպոս Ձախեան, Տ Միսրոպ և Տ. Բաբկէն վարդապետները 1909 ի մայիսի 13-ին Ստամբօլ շոգենաւով հասնում են Կ. Պօլիս և իջևանում Սպլանդիդ ազգային հիւրանոցը։ Մայիսի 18-ին Պերայի ս. Երրորդութեան եկեղեցում տեղի է ունենում հանդիսաւոր պատարագ Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ։ Պատարագիչն է Գարեգին արքեպիսկոպոսը։ Ժողովրդի հոծ բազմութիւնը լցրել էր եկեղեցին։ Վեհափառ Հայրապետի համար պատրաստուած էր ոսկեզօծ գեղեցիկ կաթողիկէ—ամպհովանի։ Որոշեալ տեղում ժամերգութիւնը ընդմիջելով Վեհափառ Հայրապետը առաջնորդւում է սեղան, որի ժամանակ դպիրներն երգում են «Էջմիածին ի Հօրէ» շարականը։ Ապա Գարեգին արքեպիսկոպոսը քարոզ խօսեց, որից յետոյ ոյժ ու կարողութիւն մաղթեց Վեհափառ Հայրապետին, որպէսզի կարողանայ հայ ազգի իղձերը կատարել և պաշտպանել ազգն ու

եկեղեցին ներքին ու արտաքին ամեն տեսակ յարձակումներից։ Աւարտելով իր խօսքը յանձնեց Վեհին հայրապետական գաւազանը։ Ապա Աշոտ եպիսկոպոսը մի քանի բարեմաղթութիւններից յետոյ յանձնում է Վեհին հայրապետական խաչը։

Այս արարողութիւնից յետոյ խօսեց Վեհափառ Հայրապետը պատկերացնելով 1800 տարիներից ի վեր հայ ազգի կրած տառապանքները, և ասաց ի միջի այլոց.

«Այսօր Հայաստանեայց Եկեղեցին ալխունլեալ վիճակի մը մէջ է, սակայն կը հաւատամ և դուք ալ հաւատացէք, որ պիտի ապրի միշտ Հայ Եկեղեցին։ Այսօր հայ ազգը խաչի վրայ պրկուած մարմին մը դարձեր է, սակայն դարձեալ այդ խաչն է, որ պիտի ներշնչէ։ Տգիտութիւնը կործանում ըսել է, պէտք է ջանանք, որ զարգանանք, միտքներս լեցնենք, որովհետև մտքի ուսումն է, որ կերաշխաւորէ կեանքը։ Երբ միտքը բարձրացած և սիրտը ազնուացած է, շատ բան կարող ենք»։

Հինգշաբթի, մայիսի 21-ին Նորին Սրբութիւնը շրջապատուած հրաւիրեալ ու այլ բարձրաստիճան հոգևորականներով, իջնում է ս. Երրորդութեան եկեղեցին, ուր մատուցանում է ի հրաժեշտի վերջին պատարագը, ուր խօսում է

իր հրաժեշտի քարոզը. ի միջի այլոց ասում է.—

«Մենք պարտինք այնպիսի խոհեմ, շրջահայեաց ապրիլ, որ նոյնիսկ անհետացնենք մեր գոյութեան սպառնացող վտանգները. այս կեանքը կը քարոզեմ Երուսաղեմէն մեկնելէս մինչև այս վայրկեանը. շրջահայեցութիւն, ծայրայեղութիւններէ հեռի, խոհեմ, օրինապահ կեանք։ Կփափագիմ որ կեանքի այս եղանակը պահէ ամեն հայ։ Մեր շուրջը շատ ուժեր շրջապատած են. այդ ուժերը մեր կեանքի թշնամիներն են. կուզեն այս ցեղին իմացական ուժը, կարողութիւնը ցամքեցնել։ Հեռի մենէ յուսահատութիւնը։ Յոյս և հաւատք երբ կենդանի են մէջ, պիտի ապրինք։ Աստուած աշխարհի խաղաղութիւն շնորհէ. դարձ կամ բարձ շնորհէ բռնապետներուն։ Մնաք բարեաւ, մնաք խաղաղութեամբ կերթամ միևնոյն ազգին քով՝ նուիրական պաշտօն մը կատարելու»։

Նախ քան Պետերբուրգ մեկնելը Նորին Սրբութիւնը ցանկացաւ այցելել Սուլթանին և խնդրել, որ անպակաս անէ իր բարեացակամ հովանին հայ ազգի վերայից։ Մայիսի 21-ին Նորին Սրբութիւնը ուղեկցութեամբ կաթուղիկոսական հրաւիրակների, կրօնական ժողովի ատենապետ՝ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանի, ազգային ժողովի ատենապետ՝ Մինաս Չերազի, քաղաքական ժողովի ատենապետ՝ Ստեփան Գարայեա-

նի և պատրիարքարանի գործակատար՝ Գամէր Ճիրինեանի, դիմաց Դոլմա-Բախչէի պալատը։

Մուհամմէդ V-ը պատրաստ էր ընդունել սենկնդրութեան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին։ Ապա Նորին Սրբութիւնը իր հետեւորդներով առաջնորդուեցաւ ընդունելութեան սըրահը, ուր սպասում էր Սուլթանը ժպտուն և ոտքի վրայ։ Վեհափառը անձամբ կարդաց թուրքերէն լեզուով մի ուղերձ, որի մէջ շեշտում էր հայ ժողովրդի դարեոր հաւատարմութիւնը, դէպի Օսմանեան պետութիւնը ունեցած սէրը, մամանաւանդ երբ այժմ ազատական կարգեր են տիրում, անշուշտ նրանք կապրեն կեանքի, գոյքի և պատւի ապահովութեամբ»։

—«Մեծապէս գոհ եմ Ձեր արտայայտած զգացմունքների համար, ասաց Սուլթանը, կարող էք միանգամայն հաւատացած լինել այդ մասին» որից յետոյ Սուլթանը նստելով հրաւիրեց նստել Նորին Վեհափառութեանը և իր հետեւորդներին։

Սուլթանը շարունակեց հետեւեալը.

—«Իմ ամենասրտագին ցանկութիւնն է, որ օսմանեան բոլոր ժողովուրդները, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, ապրեն եղբայրաբար և վայելեն հաւասար եղբայրութիւն։ Ադանայում ու շրջակայքում տեղի ունեցող աղէտները խորապէս վշտացրել են իմ սիրտը։ Այս բանը յայտնի է և

Իրան՝ Աստծուն։ Ես խօսել առանձնապէս և մեծ վէզիրի հետ, որպէսզի ձեռք առնեն բոլոր միջոցները՝ արգելելու համար նմանօրինակ ցաւագին աղէտների կրկնութիւնը»։

Հրաժեշտ առնելով Սուլթանից, Վեհը անցաւ առաջին քարտուղարի սենեակը, որտեղ մի քանի րոպէ խօսակցելով Խալիդ Զիա բէյի հետ, ապա հրաժեշտ առաւ և իր հետեւորդներով, նոյն հանդիսաւորութեամբ, դիմեց Բարձր Դրան Հիլմի փաշայի մօտ։

Կաթուղիկոսական թափօրը պինւորական պատիւներով ընդունուեցաւ և առաջնորդուեցաւ մինիստր-նախագահի մօտ։ Հիլմի փաշան առանձին յարգանքով ու սիրալիր ընդունելութեամբ ընդունեց Նորին Սրբութեանը։

Վեհը հրաժեշտ տալով նոյն հանդիսաւորութեամբ հեռացաւ և այցելեց արտաքին գործերի մինիստր Րիֆաթ փաշային, բայց չը գտնելով իր պաշտօնատանը, ընդունեց խորհրդական Աշրեան էֆենտու կողմից։

Մայիսի 28-ին, Նորին Սրբութիւնը վերջին անգամ մասնակցեց ազգային երեսփոխական ժողովի նիստին։

Վեհը շնորհակալութիւն յայտնեց թիւրքահայոց երեսփոխանական ժողովին, որ երկրորդ անգամ բարձրացրեց իրան պատրիարքական ա-

թոռ: Շնորհակալութիւն յայտնեց նաև կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորութեանը, որ պատւեց իրեն, ընտրելով Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ապա օրհնեց համայն ազգը, օրհնեց երեսփոխանական ժողովի անդամներին և ոյժ ու կարողութիւն մաղթեց:

Մայիսի 23-ին, Նորին Սրբութիւնը պէտք է ճանապարհ ընկնէր դէպի Ռուսաստան: Բազմութիւնը առաւօտեան ժամի 9-ից սկսած շրջապատում էր Թօփհանէի առջև, ուրտեղ սպասում էին արդէն Ռուսաց դեսպանատան շոգեմակոյկը և նաւակները:

Ժամը 10-ի մօտ կառքերի շարքերը ծովափ հասան: Թափօրի առջևից գնում էին ձիերի վրայ կարմրազգեստ շաթիրները, յետոյ առանձին կառքով երկու վարդապետներ տանում էին Հայրապետական խաչը և գաւազանը. ապա գնում էր Նորին Սրբութեան շքակառքը, որին հետևում էին անթիւ կառքեր եպիսկոպոսներով, վարդապետներով, քահանաներով և աշխարհականներով: Բազմաթիւ երկարատև ծափերով ողջունում են սիրեցեալ Հօրը՝ յուզմունքներով լի րոպէներ են: Զանգերը արտասւում են... Նորին սրբութիւնը փոքր ժամանակից յետոյ մտաւ Ռուսական շոգեմակոյկը, որը առաջ սլացաւ, բազմաթիւ մակոյկներ սուրում են նրա յետևից:

Վեհափառ Հայրապետը Օդեսայում

—

Մայիսի 24-ին, կէսօրւայ ժամը 1-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ II-ը «Չիխաչև» շոգենաւով ժամանեց Օդեսա: Նաւահանգստում սպասում էին Վեհափառ Կաթողիկոսին Ռուսաստանի բոլոր կողմերից եկած հայ հասարակութեան ներկայացուցիչներ և հոգևորականների պատգամաւորութիւնները, գլուխ ունենալով Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանին: Այստեղ էին տեղական ադմինիստրացիայի ներկայացուցիչները՝ քաղաքապետը, նրա օգնականը, շրջանի զօրքերի հրամանատարի ներկայացուցիչը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, Կամեր-Իւնկեր իշխան Բ. Ն. Արղութեան Երկայնաբազուկ, որոնք և ողջունեցին Վեհափառի գալուստը:

Նաւահանգստից Հայրապետը հանդիսաւորութեամբ ուղևորւեց դէպի հայոց եկեղեցին, ապա առաջնորդւեց նոյն եկեղեցու երեսփոխան Ս. Աստուածատրեանի տունը, ուր պատրաստուած էր Հայրապետի համար իջևանելու տեղ: Այդտեղ տեղի ունեցան և ընդունելութիւնները:

Վերջացնելով ընդունելութիւնները Վեհափառը ուղարկեց իր ներկայացուցիչներին իր անու-

նից ողջունելու այն փարչական անձանց, որոնք չոգենաւի վրայ դիմաւորել էին իրեն։

Հետեւեալ օրը բոլոր պաշտօնական հիմնարկութիւնների ներկայացուցիչները, սկսած զինուորական շրջանի հրամանատար Կաուլբարսից, այցելեցին Նորին Սրբութեանը։ Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին պ. Ս. Աստուածատրեանի բընակարանում տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որին ներկայ էին տեղական հայ գաղութի ներկայացուցիչները և զանազան քաղաքներից եկած պատգամաւորութիւնները։

Մայիսի 25-ին ցերեկը Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնայի ծննդեան տօնի օրը։ Վեհափառ Կաթողիկոսը հայոց եկեղեցում բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ անձամբ գոհացողական մաղթանք կատարեց, որից յետոյ Վեհը հեռագիր ուղարկեց Ն. Կ. Մեծութեանը և Կաղաթին կայարանում բաղդ ունեցաւ ստանալ Ն. Կ. Մ. Թագաւոր Կայսեր հեռագիրը, շնորհակալական պատասխանը։

Վեհ. Հայր. ժամանումը Պետերբուրգ

—

Պետերբուրգից եկեղեցական Խորհրդի անդամները՝ Նախագահ պրօֆեսօր Վ. Ի. Վարդանեանի և Աւագ քահանայ Տէր-Գրիգորեանի ա-

ՏԻԳ. ԱՃՐԻԿԵԱՆ

(Տես երես 268)

«ՃԻՐԱԿ» 1910 թ.

ռաջնորդութեամբ ընդ առաջ էին ելել Վեհին։
Օդեսայի ճեպընթաց գնացքը Պ. Բուրգի Վարշա-
-ւեան կայարանը հասնելիս՝ արդէն բաց էին տը-
բայական սենեակները։ Նոյն ժամանակամիջոցում
սկսեցին ժողովուել կայարանում հայկական գա-
ղութի ընդ առաջ ելած անդամները։ Այստեղ է-
ին ի մէջի այլոց Պետական Խորհրդի անդամ Պ.
Ղուկասեան. Պետական Դումայի անդամներ Մ.
Աջեմեան և Ց. Սաղաթէլեան, ակադեմիկ պրօ-
ֆեսսօր Մառրը, որը բարձրագոյն նշանակուած
էր Թարգման, գնդապետ Սուլթան-Շահ և բազ
մաթիւ ժողովուրդ։

Մայիսի 27-ին, առաւօտեան ժամը 9 և 55
րոպէին Վեհափառ Հայրապետը ողջմամբ հասաւ
Պետերբուրգ։ Երբ գնացքը մօտեցաւ կայարա-
նին, դիմաւորողները կանգնեցին հանդիսաւոր
սենեակների մուտքի երկու կողմերում։ Ճանա-
պարհը դէպի սենեակները ծածկուած էր գորգով։
Ժամի 10-ին Նորին Սրբութիւնը դուրս եկաւ վա-
գոնից և մեծ հանդիսաւորութեամբ մտաւ արքա-
յական սենեակները։ Այստեղ պրօֆեսսօր Վ. Ի.
Վարդանեանը ողջունեց Նորին Սրբութեանը ե-
կեղեցական խորհրդի կողմից։ Պետերբուրգի հա
գաղութի կողմից ողջունեց Վեհին իսկական պե-
տական խորհրդական պ. Գ. Տիգրանեանը։ Վե-
հափառ Հայրապետը օրհնեց բոլոր ներկայ ե-

ղողներին և գոհունակութիւն յայտնեց սրտանց:
Այս նոյն կարգով հանդէսը կեցցէների ուղեկ-
ցութեամբ շարժւեց դէպի առաջ:
Հանդիսաւոր գնացքը ուղղւեց հայոց եկեղե-
ցեցին: Կարճառօտ աղօթքից յետոյ Մկրտիչ քհ.
Ղազարեանը ողջունեց Վեհափառ Հայրապետին և
իր ճառի մէջ շեշտեց այն ուրախութիւնը, որը
առաջացրեց տեղական հայ գաղութի մէջ Նորին
Սրբութեան գալուստը և այն համոզմունքը յայտ-
նեց, որ ներկայումս նկատւող ոգևորութիւնը կը
ամրացնէ հայերի մէջ հաւատ և հաւատարմու-
թիւն դէպի հայ եկեղեցին և հայ ժողովուրդը:
Վեհափառ Հայրապետը բարեհաճեց պատաս-
խանել և յոյս յայտնեց, որ ժողովրդի աջակցու-
թեամբ պիտի կարողանայ օգտակար լինել հայ
եկեղեցուն ու ժողովրդին: Շեշտեց գլխաւորապէս
գործել օրինականութեան սահմանների մէջ:
Եկեղեցուց Վեհափառ Հայրապետը «կեցցէ-
ների» ուղեկցութեամբ շրջապատւած շքախմբի
անդամներով և հայ գաղութի պատւաւոր ներ-
կայացուցիչներով դիմում է դէպի իր համար պա-
տրաստւած օթևանը՝ իշխան Աբամելիք Լազարևի
բնակարանը, որտեղ փոքր ինչ հանգստանալ ւց
յետոյ, խօսակցում է եկեղ. խորհրդի անդամների
և գաղութի ներկայացուցիչների հետ:
Մայիսի 28-ին, ցերեկւայ ժամը 12-ին Ամե-

նայն Հայոց Կաթուղիկոսը իր շքախմբով այցե-
լութեան գնաց Ելագինի պալատը, մինիստրների
խորհրդի նախագահ Պ. Ա. Ստոլիպինի մօտ: Խօ-
սակցութիւնը տևեց մի ժամից աւելի:
Խօսակցութեան միջոցին Վեհափառ Հայրա-
պետը շօշափեց հայ ժողովրդի արդի դրութիւնը
Ռուսաստանում, հայ հոգևորականութեան վերայ
ծանրացող պարտականութիւնները Կովկասում
տիրող ազգայնական թշնամութիւնները վերա-
ցնելու գործում, կաթուղիկոսական ընտրութիւն-
ների կարգը փոփոխութեան ենթարկելը և այլն:
Խօսակցութիւնից յետոյ, երբ Վեհը մեկնում
է, մինիստրների խորհրդի նախագահը ամենայն
պատշաճաւորութեամբ և սիրալիրութեամբ ճա-
նապարհ է գցում Հայոց եկեղեցու պետին գոհ
սրտով և անկեղծութեամբ բաժանւելով նրանից:
Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, Հայրապե-
տի իջևանած բնակարանում տեղի ունեցաւ ճաշ-
կերոյթ, որին մասնակցելու հրաւիրւած էին տե-
ղական հայ հասարակութեան ներկայացուցիչնե-
րը: Ճաշկերոյթի ժամանակ Վեհափառը պատմեց
ներկայ եղողներին Ստոլպինի հետ ունեցած խօ-
սակցութեան ժամանակ իր ստացած տպաւորու-
թիւնները: Նորին Սրբութիւնը իր գոհունակու-
թիւնն է յայտնել մինիստրների խորհրդի նախա-
գահի կողմից, իրեն ցոյց տւած ընդունելութեան

առթիւ և յատնել է, որ նա Ստոլիպինին համարում է դէպի այլազգիները անաչառութեամբ վերաբերւող մի մարդ:

Մայիսի 29-ին, նախապէս որոշուած ցերեմոնիալի համեմատ, Վեհափառ Հայրապետը ժամի $2^{1}/_{2}$ պէտք է ներկայանար Թագաւոր Կայսրին: Ցերեկւայ 1 ժամ 37 ր. Նորին Սրբութիւնը հանդիսաւորութեամբ իր շքախմբի ուղեկցութեամբ գնաց դէպի Բալթիկեան երկաթուղու կայարանը, որտեղ սպասում էին արդէն կայսերական պալատի երկու արարողապետները պաշտօնական համազգեստներով, որոնք դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին և մի քանի րոպէ կայսերական սենեակների մէջ հանգստանալուց յետոյ, Վեհը արարողապետների առաջնորդութեամբ, գնաց դէպի կայսերական սալոն վագոն:

50 րոպէից յետոյ կայսերական գնացքը հասաւ Պետերհօֆի կայարանը. կայսերական-դահլիճները թէ ներսից և թէ դրսից զարդարուած էին թարմ ծաղիկներով ու ճիւղերով և բազմաթիւ դրօշակներով, իսկ կայարանի առջևը սպասում էին վեց պալատական կառքեր և ոսկեճամուկ զգեստներով կայսերական մանկլաւիկներ:

Երբ Նորին Սրբութիւնը դուրս եկաւ սալոն վագոնից, նրան դիմաւորեցին պալատական բարձրաստիճան պաշտօնեաները և մի փոքր հան-

գստանալուց յետոյ առաջնորդեցին Վեհին դէպի Թագաւոր Կայսեր կողմից ուղարկուած արքայական վեց ձի կառքը:

Հանդիսաւոր գնացքը առաջ էր ընթանում դէպի պալատ հետևեալ կարգով:

ա. Լանդօ.—Տ Գրիգորիս ծ. վարդապետ Գալաքեան և Տ. Մեսրոպ վարդապետ Նշանեան, որոնք տանում էին հայրապետական խաչը և գաւազանը:

բ. Արքայական վեց ձի կառքը, որի մէջ բազմած էր Նորին Սրբութիւնը, որի դէմը նստած էր պրոֆեսոր Մառը գլխաբաց. կառքի յետևը կանգնած էին պալատական երկու մանկլաւիկներ ոսկեճամուկ համազգեստներով:

Նորին Սրբութեան կառքին հետևում էին չորս հեծեալ պալատականներ, իսկ Վեհի կառքի մօտով ընթանում էր արարողապետներից մէկը: Մնացած չորս լանդօների մէջ տեղաւորուած էին շքախմբի անդամները:

Կէս ժամից յետոյ հանդիսաւոր գնացքը անցնելով դրօշակներով զարդարուած փողոցներով հասաւ պալատ

Պալատի գլխաւոր դրան առաջ քանի չափ պալատական դիմաւորող պաշտօնեաները յարգանքով ճանապարհ տուին աւագ արարողապետին, որը համբուրելով Նորին Սրբութեան ս.

Աջը, առաջնորդեց ծափօրը։ Առջևից գնում էին չորս սենեկապետներ, յետոյ չորս մանկլաւիկներ իրենց գլխաւորի հետ միասին։ Սրանց յետևից գնում էին կաթուղիկոսական շաթիրները արծաթագլուխ գաւազաններով, յետոյ հայրապետական խաչն ու գաւազանը կրող երկու վարդապետները, ապա Նորին Սրբութիւնը, որին հետևում են արարողապետը, պրօֆեսօր Մառը և արքեպիսկոպոսներն ու վարդապետները։ Նորին Սրբութիւնը պալատի դահլիճներից անցնելով, պատկերների դահլիճի միջով առաջնորդւեց դէպի Չինական հիւրասենեակը։

Ցերեկւայ ժամը 2 և 30 րոպէին աւագ արարողապետ կոմս Գենդրիկովը առաջնորդեց Նորին Վեհափառութեանը թարգման պրօֆեսօր Մառի ուղեկցութեամբ ընդունարանը, ուր գըտնւում էր Կայսրը։

Ունկնդրութիւնը վերջանալուց յետոյ, աւագ արարողապետը յանձնեց Վեհափառ Կաթուղիկոսին կայսերական հրովարտակը և ադամանդակուռ խաչը, վեղարի համար։

Այնուհետև Կաթուղիկոսը և միւս հոգևորականները Սպիտակ ընդունարանում հիւրասիրւեցին թէյով։

Վեհափառը մի քանի օր մնալուց յետոյ Պետերբուրգից յունիսի 4-ին ճանապարհեց Մոսկւա։

Գնացքը տեղ հասնելուց 10 րոպէ առաջ, կայարանի ընդարձակ հանդրւանը գրեթէ ամբողջովին բռնւած էր երկսեռ հասարակութեան ահագին բազմութեամբ, որոնք առաւօտեան ժամի 8-ից շտապել էին Նիկոլաեվսկի կայարանը դիմաւորելու Նորին Վեհափառութեանը։ Բացւած էին կայսերական սենեակները, որտեղ սպասում էին Վեհափառի գալստեանը մամուլի ներկայացուցիչները, կարգադրիչ յանձնաժողովի անդամները և տեղական հայ գաղութի ներկայացուցիչները։ Ժողովուրդը սրտատրոփ սպասում էր Վեհին և երբ երևաց նա, հասարակութիւնը խանդալից բերկրանքով գոչեց «Կեցցէ Վեհափառը, կեցցէ Իզմիրլեանը»։

Նորին Սրբութիւնը օրհնելով հաւաքւած ժողովրդին, ներս մտաւ կայսերական սենեակներն իր շքախմբի և մեծ բազմութեան ուղեկցութեամբ։ Պրօֆեսօր Գ. Խալաթեանը ողջունեց Վեհափառին Մոսկւայի հայ գաղութի կողմից, որի ճառը փակեց ժողովուրդը կեցցէներով։ Բանաստեղծ Ա. Ծատուրեանը ողջունեց Վեհին եկեղեցական խորհրդի անունից և ասաց հետևեալը․

«Ողջոյն Քեզ, ազգընտիր Հովւապետ։

«Ողջոյն որդիական բուռն սիրոյ, ժողովրդի ցաւակից Հայր․

«Վշտի երկրից ես գալիս, հովւելու համա-

սփիւռ զաւակներից։ Որհաւիրքի և հեծեծանքի վայրից ես գալիս բազմելու Լուսաւորչի Գահը, որին այսօր յառած է զաւակներից յուսալից հայեացքը.

«Դառն է և անմխիթար ազգիդ վիճակը.

«Ծանր է փշոտ Հովուապետիդ ուղին...»

Կայարանից Նորին Սրբութիւնը դիմեց հայոց եկեղեցին։ Վեհափառի կառքին հետևում էին շքախմբի անդամների և պատուաւոր ծխականների լանդօնները և մի քանի հարիւր կառք լցւած։ Բոլոր փողոցները, որոնցով անցնում էր Նորին Սրբութիւնը, արտասովոր բնաւորութիւն էին ստացել։ Հայոց փողոցը ամբողջովին լցւած էր բազմաթիւ վարչական պաշտօնեաներով, իսկ հայոց եկեղեցու բակը ծայրէ ի ծայր լցւած էր երկսեռ բազմութեամբ։

Եկեղեցու դարպասներից մինչև եկեղեցու ներսը փռւած էր կարմիր մահուդ, իսկ եկեղեցու բակը զարդարւած էր տրօպիքական բուսականութեամբ և դրօշակներով։ Վեհափառը շքակառքից դուրս գալով մտաւ ամպհովանու տակ, որի ձողերը բռնած էին Յովհ. Թամհարեան, Մ. Ասիրբէգեան և Ձորշորեան և եկեղ. երեսփոխանը։ Եկեղեցում Էմմանուէլ քահանայ Նազարեանը ողջունեց Ս. Հայրապետին, աւելացնելով, որ այսօր Հայոց եկեղեցին ուրախ է, քանի որ նա տեսնում

է սիրեցեալ ընտրեալին։ Այնուհետև խօսեց Վեհափառ Հայրապետը։ Ապա նոյն հանդիսաւորութեամբ Վեհափառը դուրս գալով եկեղեցուց, գընաց Յովհաննէս Թամհարեանի տունը, ուր օթեւան էր պատրաստւած։

Ժամը 4-ին, Վեհափառ Կաթողիկոսը շքախմբի անդամների ու տեղական գաղութի ներկայացուցիչների հետ միասին գնում է հայոց գերեզմանատուն, որտեղ ընդհանուր հոգեհանգիստ է կատարւում այնտեղ թաղւած նշանաւոր գործիչների յիշատակին։

Այդտեղ բացօդեայ Նորին Սրբութիւնը հիւրասիրւում է թէյով, որից յետոյ վերադառնում է իր օթևանը։

Հետևեալ օրը ժամը 10-ին Վեհափառ Կաթողիկոսը իր շքախմբով այցելեց Լազարեան ճեմարանը, որի մուտքի մօտ Նրան դիմաւորեց տեսուչ Ի. Թանդեանը պրօֆեսօրների, ուսուցիչների և լսարանցիների հետ միասին։ Ըկտե դահլիճում տեսուչը ողջունեց Վեհին ճեմարանի կողմից և յանձնեց պատուաւոր անդամի դիպլոմը, յոբելանական մետալի հետ միասին։

Ժամի 4-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբի հետ միասին գնաց Կրեմլը, որտեղից Փրկչի տաճարը, Իվերսկու Աստւածածնի մատուռը, Արխանգելսկի տաճարը, ապա վերադարձաւ իր

օթեւանը։ Երեկոյեան տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ ի պատիւ Հայրապետի։

Հետեւեալ օրը Նորին Վեհափառութիւնը 12 ժամ 55 ր. մեկնեց դէպի Նոր Նախիջեւան, գնացքը շարժեց «կեցցէ Իզմիրլեան Վեհափառը» աղաղակներով։

Յունիսի 8-ին, երեկոյեան ժամը 10-ին, արագ գնացքի հետ արքայական վագոնով Նորին Սրբութիւնը ժամանեց Ռոստով։ Կայարանի արքայական դահլիճում տեղի ունեցաւ հանդիսաւոր ընդունելութիւն։ Վեհափառին ներկայացան քաղաքապետը, պաշտօնական այլ անձինք, քաղաքագլուխները եւ հայ գիւղացիութեան ներկայացուցիչները, որոնք մատուցին աղ ու հաց։

Ապա Նոր Նախիջեւանի պատգամաւորների առաջնորդութեամբ հանդիսաւոր թափօրը գիմեց դէպի Նոր-Նախիջեւան։

Նոր Նախիջեւանը զարդարուած էր եւ տօնական բնաւորութիւն էր կրում։

Հետեւեալ օրը Վեհափառ Հայրապետը բարեհաճեց այցելել Նախիջեւանի հասարակական հիմնարկութիւնները. այդ օրը պաշտօնական ճաշկերոյթ էր ձմեռային ակմբանոցի շինութեան միջում։

Յունիսի 11-ին Վեհափառ Հայրապետը ճանապարհ ընկաւ դէպի Թնֆլիս։ Նոր Նախիջեւանի

հայ հասարակութիւնը ամենայն շուքով ու հանդիսաւորութեամբ բարի ճանապարհ մաղթեց Վեհափառ Հայրապետին։

Նոր Նախիջեւանից, համաձայն Վեհափառ Հայրապետի հրամանի, հեռագրական կարգադրութիւններով յայտնուած էր, որ մինչեւ Թիֆլիս Նորին Սրբութիւնը ոչ մի քաղաքում հանգստանալու չէ։

Առանձին հանդիսաւորութեամբ դիմաւորեցին Նորին Սրբութեանը բագուեցիները Բալաջարի կայարանում։ Բագուի կարգադրիչ յանձնաժողովը երկաթուղային վարչութիւնից խնդրել եւ պատրաստել էր Վեհի համար առանձին արտակարգ գնացք Բալաջարից Թիֆլիս։ Բացի դրանից կառավարութեան թոյլտւութեամբ Բալաջարի կայարանը զարդարել էին ծաղիկներով, կանաչով եւ ռուսական ազգային դրօշակներով։

Բալաջարի կայարանը յունիսի 13-ին տօնական կերպարանը էր ստացել։ Զարդարուած կայարանը հետզհետէ լցւում էր երկսեռ բազմութեամբ, որոնց անընդհատ բերել էին Բագուից արտակարգ գնացքները։

Բացի ազգային զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, Բալաջարի էին եկել նաեւ Բագուի քաղաքագլուխը մի քանի ձայնաւորների հետ, ռուս հոգեւորականութեան ներկայա-

ցուցիչ գործակալ Ինիցկի աւագ քահանան, հայ բողոքականների ներկայացուցիչները, վրաց հասարակութեան ներկայացուցիչները, հրէաների պատգամաւորութիւնը, բողոքականների պաստորը և այլն։

Ժամի 4 և կէսին գնացքը հասաւ կայարան բուռն կեցցէների ողջոյնով։ Երևաց Վեհափառը սալօն վագօնում... կեցցէներին վերջ չկար։

Նորին Սրբութիւնը սովորական ցերեմոնիալով դուրս եկաւ վագօնից շրջապատուած շքախմբի անդամներով։ Ամենից առաջ դիմաւորում է Ինիցկի քահանան, ապա քաղաքագլուխը մատուցանում է աղ ու հաց. յետոյ ողջունում է Վեհին վրաց հասարակութեան ներկայացուցիչը ընդգծելով երկու հարևան հայ և վրացի ազգերի դարաւոր բարեկամութիւնը և ազգակցութիւնը։ Այնուհետև Բագուի ծխական հայ դպրոցների հոգաբարձութեան և հայ ժողովրդի կողմից ճառ խօսեց Միք. Պապաջանեանը։

Նորին Սրբութիւնը պատասխանում է հետևեալը.

«Հայ ժողովուրդը ունեցել է, և պէտք է ունենայ միայն մի նպատակ՝ զարգանալ խաղաղութեան, կրթութեան և ուսման մէջ, պահպանելով անդրդուելի իր հանրածանօթ հաւատարիմ հպատակութիւնը դէպի Ռուսական հզօր Կայսրութիւ-

նը և գահը և պաշտպանելով իր եկեղեցին և լեզուն՝ իբրև արհրաժեշտ պայմաններ իր ազգութեան»։ Ապա Նորին Վեհափառութիւնը յորդորեց ամենքին օրինաւոր ճանապարհներով և խիստ օրինականութեան սահմաններում պաշտպանել ազգային իրաւունքները։

Նորին Սրբութիւնը լսելով և միւս պատգամաւորների ողջոյնները, մտաւ Բագուի հայ հասարակութեան կողմից պատրաստած արտակարգ գնացքը, որը ճիշտ ժամի 5 և կէսին շարժուեց դէպի Թիֆլիս։

Քիւրդամիր և մի քանի այլ կայարաններում Նորին Սրբութեանը ողջունեցին բազմաթիւ հայեր, ռուսներ և թուրքեր։

Գանձակի կայարանում չը տեսնուած բազմութիւն էր խմբուել։ Վեհափառը իջաւ վագօնից և մտաւ արքայական դահլիճը, ուր ներկայացան պատգամաւորներ և արտասանեցին ճառեր։

Աղստաֆա կայարանում հաւաքուել էր հայերի և թուրքերի մեծ բազմութիւն, որ եկել էին նոյնպէս Ղազախի գաւառից. եկել էին նոյնպէս յատուկ պատգամաւորութիւններ Քարվանսարայից, Աչաջրից և Սեքարից։

Աղստաֆա էին եկել նաև Թիֆլիսի հայ հասարակութեան պատգամաւորները։

Վեհափառ Հայրապետը մօտեցաւ սալօն վա-

գոնի լուսամուտին և օրհնեց ժողովրդին։ Ղազախի գաւառի թուրք հասարակութեան ներկայացուցիչ Մահմադ էֆէնտի Եաղուբովը կարդաց մի ճառ թուրք լեզուով, արծարծելով այն միտքը թէ հայ ու թուրք դարերով իրար հետ ապրող ժողովուրդները պարտաւոր են միմեանց հետ ապրել համերաշխօրէն, միմեանց ցաւերին ու ուրախութիւններին մասնակցել։ Նորին Սրբութիւնը գեղեցիկ օսմանեան թուրքերէնով պատասխանեց այդ ճառին։

Վեհ. Հայրապետի մուտքը Թիֆլիս

—

Արտակարգ գնացքը մտաւ Թիֆլիսի կայարանը յունիսի 14-ին, առաւօտեան ժամի 11 և կէսին։ Երբ գնացքը կանգ առաւ, սալօն վագոնը մտան գնդապետ Լազարեվ, պալատի կամեհէր՝ իշխան Ն. Վ Արգուտինսկի-Դոլգորուկով, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեան, վարչութեան անդամներ՝ իշխան Ա. Մ. Արգուտինսկի-Դոլգորուկով, Ն. Կեօկչաեվի հետ, և կարգադիր յանձնաժողովի հետ՝ նախագահ Ալ. Քիշմիշեան։ Գնդապետ Լազարեվ յայտնեց, - որ եկած է ողջունելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Իզմիրլեանի գալուստը Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի կող-

մից։ Վեհափառը խնդրեց իր շնորհակալութիւնը յայտնել Նորին Պայծառափայլութեանը։ Ապա կարգադիր յանձնաժողովի նախագահ Ալէքսանդր Քիշմիշեան բարի գալուստ մաղթեց Նորին Վեհափառութեանը Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից։

Սալօն վագոնից Վեհափառը իջաւ և առաջնորդուեց դահլիճ։ Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գալուստը թեմի հայ հոգևորականութեան կողմից։ Ապա մի կարճ ճառ ասաց Թիֆլիսի թեմի կաթողիկոսական պատգամաւոր Սամսոն Յարութիւնեան։ Դրանից յետոյ Անդրկովկասի հայ կաթոլիկների համայնքի կողմից իբրև ներկայացուցիչ Առաքել Սարուխանեան ճառ արտասանեց։

Հայրապետը իր շնորհակալութիւնը յայտնելով, մի համառօտ պատասխանից յետոյ, օրհնեց ամենքին և դուրս եկաւ դահլիճից։

Հանդիսաւոր երթը կայարանից մինչև Ալէքսանդրեան այգին այսպէս կազմուեց։ Վեհափառը բազմած էր վեց ձիերով լծուած մի շքակառքի մէջ, որի ետևում կանգնած էին շաթիրները. կառքի առջևից մի քահանայ ձիու վրայ նստած տանում էր Կաթողիկոսի փոքր գաւազանը, իսկ երկու քահանաներ, նոյնպէս ձիերի վրայ նստած

տանում էին կաթողիկոսական մեծ խաչը և գաւազանը. կառքի առջևից տանում էին և երկու պարսկական եղակներ, զարդարւած մետաքսագործ ծածկոցներով: Կառքի առջևից ուղեկցում էին Փոխարքայի ուղարկած պատուաւոր պահակախմբի կօզակները կարմիր զգեստով. մօտ 50 հոգի: Կաթողիկոսի շքակառքին հետևում էին շքախմբի անդամները լանդոյի մէջ նստած: Երթը, որ բաւական դանդաղ էր, ճանապարհին խըռնւած էր ժողովրդի ահագին բազմութիւն: Հասնելով Աղէքսանդրեան այգու առաջ, ուր աւելի մեծ և հոծ էր բազմութիւնը. Վեհափառն իջաւ կառքից և այդտեղից սկսւեց եկեղեցական թափօրը դէպի Վանքի աւագ եկեղեցին: Վանքի մօտ մի տանիքի վերայ, կանգնած էր մի քանի ռուս տիկինների հետ միասին, կոմսուհի Վօրօնցով-Դաշկովան, Փոխարքայի ամուսինը, որին Վեհափառը երբ նկատեց, խաչով օրհնեց. կոմսուհին ապա իջնելով մտաւ եկեղեցի:

Ժամի 1-ին Վեհափառը նոյն թափօրով եկեղեցուց բարձրացաւ վեհարան, ուր ընդունեց պաշտօնական անձանց:

Թէ կայարանի դահլիճում, թէ եկեղեցում և թէ վեհարանում արտասանած քարոզ ճառերի ընդհանուր իմաստը կարելի է ամփոփել հետևեալ մտքերի մէջ.—ամեն բանից առաջ օրինա-

պահութիւն, կարգապահութիւն, խոհեմ և զգուշաւոր գործողութիւն, խուսափումն յախուռն և չմտածւած ու հետևանքները չկշռւած գործողութիւններից, պաշտպանութիւն, նոյն իսկ եռանդուն պաշտպանութիւն ազգային—եկեղեցական իրաւունքների, բողոք այդ իրաւունքների դէմ եղած ոտնձգութիւնների առիթով, բայց այդ ամենը օրէնքների թոյլատրած սահմաններում, ամրապնդումն այն հաւատարմական զգացումների, որ հայ ժողովուրդը միշտ արտայայտել է դէպի ռուսական հզօր կայսրութիւնը. խուսափումն աւելորդ ցոյցերից ու ոգևորութիւնից: «Այս ծափերը, այս կեցցէները կանցնեն կերթան,—ասաց Իզմիրլեան.—կանհետանան: Նրանք անցողական են. ձեր ոգևորութիւնը ձեր Հայրապետի նըկատմամբ պէտք է ցոյց տաք գործով՝ աջակցելով անոր»:

Կէս ժամից յետոյ Մատթէոս Բ. հանդիսով և ուղեկցութեամբ հոգևորականների ու մի քանի աշխարհականների մեկնեց վեհարանից և գնաց Վրաստանի մայր Տաճար Սիօնը, իր յարգանքն ու երկրպագութիւնը մատուցանելու Վրաստանի Լուսաւորիչ ս. Նունէին և վրաց օրթոդոքս եկեղեցուն, ինչպէս արել էր և Պետերբուրգում ռուս օրթոդոքս եկեղեցուն:

Ժամի 4 ին, Վեհափառ Հայրապետը նոյն

հանդէսով դիմեց Կովկասի Փոխարքայի պալատը, ուղեկցութեամբ հրաւիրակ եպիսկոպոսների և վարդապետների։ Ընդունելութիւնը կայացաւ պալատի Սպիտակ դահլիճում։ Փոխարքան դիմեց Կաթուղիկոսին հետևեալ խօսքերով.

«Ողջունում եմ Ձեր Սրբութեան բարեյաջող գալստեան համար Թիֆլիս, ուր Ձեզ անհամբեր սպասում էր Ձեր հօտը և ցնծութեամբ ընդունեց Ձեզ։ Միանալով Ձեր հօտի ուրախութեան, ես իմ կողմից կաւելացնեմ—բարի եկաք»։

Այս խօսքերին Վեհափառը պատասխանեց.

«Խորապէս շնորհակալ եմ Ձեր Պայծառափայլութեանը՝ ինձ արտայայտած զգացմանց համար։ Ես ուրախ եմ անձամբ ողջունելու Ձեր պայծառափայլութեանը այն հաւատաքով, որ Ձեր աջակցութեամբ ինձ հնարաւորութիւն կտրւի աշխատել յօգուտ եկեղեցու և իմ հօտի»։

Ապա Փոխարքան իր օգնականներին, գլխա-
Նատան կառավարչին և շքախմբի անդամներին ներկացրեց Կաթուղիկոսին, և մօտ մի քառորդ ժամ առանձին խօսակցելով կաբինետում, առաջնորդեց Կաթուղիկոսին կոմսուհու սենեակը, ուր առաջարկւեց ամենքին թէյ։ Ժամը 4 և 40 րոպէին Կաթողիկոսը հրաժեշտ առաւ և վերադարձաւ վեհարան։ Ժամը 5-ին Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքան փոխ այցելութիւն տւեց

Կաթուղիկոսին, իսկ 10 րոպէից յետոյ եկաւ այցելութեան նաև կոմսուհին՝ նրա ամուսինը։

Կոմսի և կոմսուհու գնալուց յետոյ Կաթուղիկոսը փոքր ինչ հանգստացաւ։ Ժամի 6-ին Նորին Վեհափառութեանը ներկայացան քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեանը և քաղաքային վարչութեան անդամները. Խատիսեան ողջունեց Կաթուղիկոսին իր մի ճառով։

Ապա ներկայացան Վեհին քահանաների դասը և մի շարք հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։ Նոյն օրը ցերեկւայ ժամը 3-ին, Նորին Վեհափառութեանը այցելեց Թիֆլիսի Պարսից հիւպատոս Սարդար Հիմայունը պարսկահայ Խոսրով Արզումանեանի ուղեկցութեամբ։ Վեհափառ Հայրապետը սիրալիր ընդունելութիւն ցոյց տւեց հիւպատոսին, որին և շնորհակալութիւն յայտնեց այցելութեան համար։

Նոյն օրը ներկայացան Վեհափառին Տիկին Հ. Ալթանգիլեան և պ. Ա. Սարուխանեան և ներկայացրին յօգուտ ադանայցիների կազմակերպւած գրօսանքից գոյացած 3500 ր.։

Յունիսի 17-ին Նորին Սրբութիւնը հետն ունենալով Գարեգին արքեպիսկոպոսին և Մեսրոպ վարդապետին այցելեց Փոխարքայի ժամանակաւոր պաշտօնակատար գեներալ Շատիլովին։

Գեներալը շատ սիրով ընդունեց Վեհին։

Ապա մատուցեց սուրճ։ Տեսակցութիւնը տեւեց 25 րոպէ։

Նոյն օրը Վեհափառին այցելել են Անդրկովկասի Շէյխ-ուլ-Իսլամը. Թիւրքաց հիւպատոսը. պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի կառավարիչ Բեզոբրազովը և Էջմիածնի Սինօդի Պրոկուրոր Մելիք Օհանջանեանը։ Նոյն օրը Վեհափառին ներկայացան և ուրիշ շատ հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։

Յունիսի 18-ին, համաձայն Վեհափառ Հայրապետի կարգադրութեան տեղի ունեցաւ հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի մահարձանի բացումը, որին բարեհաճեց Վեհը ներկայ գտնուել, ուր և մի սրտառուչ քարոզ խօսեց։

Պատարագի աւարտումից յետոյ ամբողջ հոգևորականութիւնը, առաջնորդութեամբ Հայրապետի, որ զգեստաւորուած էր և բռնած ունէր հայրապետական գաւազան ու խաչ, եկեղեցական մեծաշուք թափօրով գնաց դէպի Սեդրակեանի գերեզմանը։ Այնտեղ դրուած էր Հայրապետի համար աթոռ։ Մահարձանը ծածկուած էր սպիտակ շղարշով, կապուած սև ժապաւէնով։ Նրա շուրջը խռնուած էր հանդիսականների ահագին բազմութիւն երկու սեռի։

Սկսեց հանդիսաւոր հոգեհանգիստ, որի

վերջում Հ. Առաքելեան և Ս. Քալանթար ճառեր խօսեցին, որից յետոյ Վեհափառ Հայրապետը փակեց հանդէսը աղօթքով և մեկնեց վեհարան։

Նոյն օրը Վեհափառին ներկայացան մի քանի հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Յունիսի 19-ին Վեհափառ Հայրապետը ուղեկցութեամբ իր շքամբի անդամների այցելեց Մետեխի բանտը, ուր մուտքին Վեհափառին ընդունեցին բանտի կառավարիչը, Թիֆլիսի Փոխնահանգապետ Չերնեաւսկին, բանտի վերատեսուչներ Ալ. Խատիսեան, գեներալ Ղօրղանեան և Թիֆլիսի ոստիկանապետը։

Վեհափառը առաջնորդուեց բանտի գլխաւոր եկեղեցին, ուր ընդունեց եկեղեցու ռուս քահանան և ուր գտնւում է Վարդան սպարապետի դստեր՝ Շուշանիկի դամբարանը։

Ապա Վեհափառը մի քարոզ խօսեց, ուղղելով հայ բանտարկեալներին, որ բառ առ բառ թարգմանեց յետոյ Ալ. Խատիսեան։

Իր քարոզում Վեհը այն միտքը յայտնեց թէ բանտարկութիւնը ծանր փորձութիւն է, բայց այդ փորձութիւնը տրւում է մարդուն ի հատուցումն անզգոյշ քայլերի։ Բանտարկութեան մէջ մարդիկ աւելի ժամանակ և միջոց ունեն ինքնամփոփման. մտածողութեան և հնարաւորութիւն ուղղուելու։ Բայց նրանք չպէտք է յուսահատուեն,

նրանք ընդունելով այդ փորձութիւնը, պէտք է հպատակեն երկրի տիրող օրէնքներին և յոյս ունենան արդարադատութեան վրայ.—«Ես ինքս.—ասաց Վեհափառը. կրած եմ բանտարկութեան ծանր հոգեկան տանջանքները»:

Բանտից Վեհափառը գնաց Կուսանաց վանքը, ուր մեծ շուքով ընդունուեց և հիւրասիրուեց մրաքան կայսերի կողմից:

Յունիսի 20-ին. մեծ հանդէսով և շուքով կայացաւ Ներսիսեան դպրոցի նոր շինութեան հիմնարկութիւնը, որին ներկայ էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ. Ինքն իր ձեռքով դրեց հիմնարկութեան առաջին քարը, իսկ երկրորդ քարը տուեց դնելու Թիֆլիսի նահանգապետին. երրորդ քարը դրեց Թիֆլիսի Թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան: Իբրև պատիւ տուեցին դնելու քարեր հասարակութիւններից զանազան անձերի:

Այս Վեհափառը մի իմաստալից քարոզ խօսեց, ցոյց տալով Ներսէս Աշտարակեցու վսեմ նշանակութիւնը, նրա հիմնած գործի մեծութիւնը, օրհնեց բարերար Ալ. Մանթաշեանին՝ արծարծելով այն միտքը՝ թէ Ռուսաստանում մտաւորական բարգաւաճումն հայ ժողովուրդը պարտաւոր է Ռուսաց Մեծազօր Պետութեան հովանաւորութեան, օրհնեց Նիկոլայ II Ալէքսանդրովչին:

Օրհնութեան հանդէսը վերջանալուց յետոյ, Կաթողիկոսը և հանդէսին բոլոր մասնակցողներն ու հիւրերը հրաւիրուեցին շքեղօրէն զարդարուած վրանի ներքոյ, ուր պատրաստուած էր ճոխ սեղան հիւրերի համար, իսկ առանձին սեղան բարձրավանդակի վրա Վեհափառի համար:

Առաջին բաժակը Վեհափառը առաջարկեց Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովչի կենացը:

Երկրորդ բաժակը Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսի կենացը և իր ճառի մէջ յայտնեց այն միտքը՝ թէ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը—հայոց եկեղեցու Պետը, իրան արեց մեծ պատիւ՝ հրաւիրելով դնել հիմնարկութեան երկրորդ քարը, նա մեծ հպատակութեամբ ընդունեց այդ պատիւը, որովհետև Վեհափառի այդ հրաւէրի մէջ տեսաւ մի մեծ գրաւական պետութեան և եկեղեցու լծակցութեան և համերաշխ միաբան գործակցութեան լուսաւորութեան ասպարէզում: Վեհափառը իբրև հայոց եկեղեցու Պետ, և ինքն իբրև ներկայացուցիչ ռուս կառավարութեան, դընում են առաջին և երկրորդ վէմերը այն շինութեան, որ կոչուած է ուսման և կրթութեան ջահ հանդիսանալ: Ի հարկէ,—ասաց նահանգապետը,—այդ քարերը նման չեն այն քարերին, որ մի գիժ գցում է մի հորի մէջ և տասը խելօք չեն

կարողանում հանել, բայց սրանք հիմնաքարեր են այն մեծ կոթողի, որ եկեղեցու և պետութեան ներկայացուցիչների ձեռքով ձգւում է իբրև հիմք կրթարանի, ուստի նա առաջարկում է Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կենացը, Կաթուղիկոսի, որի հայեացքները եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների մասին նրան շատ լաւ են յայտնի:

Երրորդ բաժակը առաջարկեց Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի կենացը, որ եղել է հաւատարիմ թարգման և արտայայտիչ Նորին Կայսերական Մեծութեան ցանկութիւնների և հայեացքների: Հետզհետէ առաջարկւեցին մի շարք կենացներ, ի միջի այլոց և Ալ. Մանթաշեանի կենացը, որ մեծ որոտներով ընդունւեց և որին պատասխանեց Առաքել Սարուխանեան, իբրև ներկայացուցիչ Ա. Մանթաշեանի, մի քանի շնորհակալական խօսքերով: Մանթաշեանին ուղարկւեց թէ Վեհ. Կաթուղիկոսի և թէ դպրոցի հոգաբարձութեան կողմից հեռագիր:

Յունիսի 23-ին, Վեհափառը դուրս եկաւ Թիֆլիսից և 11 ժ. 10 ր. հասաւ երկաթուղու կայարան և իջաւ արքայական օթեանների սենեակներում:

Այդտեղ ներկայացաւ Վեհին Կովկասի Փոխարքայի օգնական գեներալ Ձատիլովի կողմից ուղարկւած գնդապետ Պաւլով ողջերթ մաղթելու: Վեհափառը յանձնարարեց յայտնել իր շնորհակալութիւնը Փոխարքայի օգնականին իր օրհնութեամբ: Նոյնպէս ներկայացաւ կայարանի գլխաւորը և համբուրեց Վեհափառի աջը:

Վեհափառը հակիրճ խօսքով շնորհակալութիւն յայտնեց Թիֆլիսի հասարակութեանը, որը այնքան սիրալիր կերպով ընդունեց իրեն և իր Թիֆլիսում անցկացրած օրերը դարձրեց անմոռանալի և յիշատակելի: Այնուհետև օրհնելով ժողովրդին մտաւ վագոն: Գնացքը շարժւեց:

Ճանապարհին բոլոր կայարաններում ընդառաջ եկած բազմութիւնը կեցցէներով էր ճանապարհ դնում Վեհին: Նոյն օրը ժամի 6-ին Նորին Սրբութիւնը իր հետևորդներով հասաւ Սանահնի վանքը, ուր ժողովրդի ահագին բազմութիւնը զուռնայով դիմաւորեց: Հետևեալ օրը, յունիսի 24-ին, առաւօտեան ժամը 10 ին Նորին Սրբութիւնը վանքից իջաւ կայարան:

Ժամը 3-ին գնացքը հասաւ Մեծ Ղարաքիլիսա: Այստեղ հաւաքւած էին նաև շրջակայ գիւղերից պատգամաւորութիւններ, որոնք ներկայացան Վեհին բարի գալուստ մաղթելու: Վեհափառը պատասխանեց ամենքին ըստ պատշաճին:

Երեկոյեան ժամը 5 և կէսին, արտակարգ
գնացքը մօտեցաւ Ալէքէանդրապօլ կայարանին։
Դեռ հեռուից նկատւում էր ժողովրդի ահագին
բազմութիւն խռնուած պլատֆօրմի վրայ և կայա-
րանի առջևի փողոցներում։ Ժողովրդի մի լայ-
նատարած ծով։ Հանդիսաւոր թափօրով Վեհա-
փառը մտաւ ս. Աստուածածին տաճ եկեղեցին.
կարճ աղօթքից յետոյ, Կաթողիկոսը քարոզ խօ-
սեց, օրհնելով ժողովրդին, և ապա նոյն թափօ-
րով առաջնորդուեց յաջորդարանը, ուր ներկայա-
ցան պատգամաւորութիւններ ազգային, եկեղեցա-
կան և հասարակական զանազան հաստատու-
թիւնների և կարդացուեցին ուղերձներ։
Երեկոյեան ժամը 8-ին յաջորդարանում տըր-
ւեց ճաշկերոյթ։

Վեհափառը Անիում

—

Հինգշաբթի յունիսի 25-ն, առաւօտեան ժ. 7-
ին, Վեհափառը իր շքախմբով Ալէքսանդրապօլից
ճանապարհ ընկաւ դէպի Անի։
Վեհափառի քառաձի կառքը, շրջապատուած
հեծեալ պահակներով, պրիստաւի առաջնորդու-
թեամբ գնում էր հանդիսաւոր գնացքի առջևից։
Ճանապարհին հեռու տարածութեան վերայ,
հորիզոնում երևաց ալէզարդ Մասիսը իր ձիւնա-

պատ գագաթով։ Ժողովրդի Հայրը աչքերը յա-
ռած դէպի այն կողմը՝ նայում էր երկար, թախ-
ծութեամբ և վշտապատ նայուածքով։ Ի՞նչ էր
մտածում այդ րոպէին նա... Հայի այժմեան տա-
րագիր վիճակի մտածմո՞ւնքն էր տիրել նրա հո-
գուն և սրտին, թէ հայի անցեալ պանծալի
փառքի հինաւուրց վկայից նա տեղեկութիւններ
էր ուզում իմանալ։ Միայն նրա հայեացքը վշտա-
լի ու տխուր՝ բևեռած էր հեռուն, դէպի Մասիսը։
Դեռ հեռւից, Անիի պարիսպների մօտ երե-
ւում էր ահագին բազմութիւն։ Եւ յիրաւի, երբ
մօտեցանք, տեսանք մի այնպիսի հոծ բազմու-
թիւն, որպիսին երբէք չէ եղել Անիում, աւերակ-
ների այդ աշխարհում։ Պարսպի առաջ դրուած էր
մի սեղան, որի շուրջը բոլորուել էին յարգելի
պրօֆեսօր Ակադեմիկ Մառի պեղումների վրայ
աշխատող մշակները իրենց բահերով, պրօֆե-
սօրի ձեռքի տակ աշխատող ուսանողները և եկ-
ւոր ահագին բազմութիւն։ Երկու պարիսպները
միացուած էին մեծ տախտակով, որի վրայ խոշոր
կարմիր տառերով գրուած էր «Բարի գալուստ»։
Վեհն իջաւ կառքից և մօտեցաւ սեղանին։
Պրօֆեսօր Ակադեմիկ Նիկ. Մառը Անիի
հիւսիսային դրան առաջ մատուցեց Նորին Սրբու-
թեանը աղ ու հաց և արտասանեց գրաբար լեզ-
ւով մի ճառ։

Վեհափառը ևս մի զգացւած ճառով պատասխանեց պրոֆ. Մառին և յորդորեց շարունակել իր օգտակար գործը:

Վեհափառը հանգստանալուց յետոյ, իր շքախմբով առաջնորդւեց հնադարանը: Այդտեղ երկար ու սիրալիր բացատրութիւններ էր տալիս յարգելի պրոֆ. Մառը:

Այնուհետև Վեհափառը այցելեց և դիտեց ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, մայր տաճարը, Գագկաշէն ս. Գրիգորի եկեղեցին, իշխանաց տունը, վրաց եկեղեցին, 4 սիւնազարդ փոքրիկ շինութիւնը, պալատը, 2 հիւրանոցները, Առաքելոց եկեղեցին և այլն: Այս բոլոր տեղերում էլ մանրամասն բացատրութիւններ տւին պրոֆեսոր Մառը և ճարտարապետ Թ. Թորամանեան, որի հետ Վեհը ճաշից յետոյ խօսակցեց մի ժամւայ չափ հայկական ճարտարապետութեան վերաբերեալ խնդիրների մասին:

Վեհի այցելութիւնը կենդանացրել էր այդ օրը Անիին, և նա էլ ասես գէթ մի օր պայծառացաւ, հիւրընկալելով հայ ժողովրդի յոյսերի ու ակնկալութիւնների մարմնացումն Հայրապետին: Ամբողջ մի ժամ Վեհը ընդունեց այդ օրը այդտեղ գտնւած մարդկանց:

—Դարեր են հարկաւոր այս ժողովրդի կրթութեան համար.—յուզմունքով նկատում էր Վե-

հը և կրկին ընկնում իր խորհրդաւոր մտածմունքների մէջ, որ երևում էր նրա խոհուն աչքերից և թախծոտ դէմքից:

Հետևեալ օրը, յունիսի 26-ին, Վեհափառը դարձեալ շրջեց մի երկու տեղ և լուսանկարւեց մայր տաճարի առաջ իր շքախմբի հետ միասին և ապա ուղևորւեց Ղօշավանք, ուր դիտեց այդտեղի հնութիւնները: Մի ժամ հանգստանալուց յետոյ ուղևորւեց դէպի Ալէքսանդրապօլ:

Ժամը 6-ի մօտերը Վեհափառը հասաւ Ալէքսանդրապօլ և իջաւ յաջորդարան հանգստանալու: Հետևեալ օրը տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որ տևեց ժ. 2—6 ընդմիջումներով:

Երեկոյեան յաջորդարանում տեղի ունեցաւ պաշտօնական ճաշ: Հրաւիրւած էին գաւառապետը և պատգամաւորների ներկայացուցիչները:

Յունիսի 28-ին Վեհափառը իր շքախմբի անդամներով և բազմաթիւ քաղաքացիների ուղեկցութեամբ մեկնեց Ալէքսանդրապօլից Էջմիածին:

Վեհափառի մուտքը ս. Էջմիածին

—

Գնացքը ուղիղ ժամը 1 ին հասաւ Էջմիածին կայարանը: Ժամը 3 և կէսին Նորին Սրբութիւնը մուտք գործեց Վաղարշապատ: Տօնական կերպարանք էր ստացել Վաղարշապատը:

Հանդիսաւոր թափօրը ուղեկցեց Մայր տաճարը։ «Ուրախ եղէ ես» Սաղմոսը ասելուց յետոյ Վեհափառը ծնկաչոք և վեղարը վերցրած համբուրեց Իջման սեղանի Խաչը և Աւետարանը։ Ապա Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը ողջունեց Վեհափառ Հայրապետի գալուստը։

Նորին Սրբութիւնը մի քանի խօսքով պատասխանելուց յետոյ, նոյն շուքով առաջնորդուեց վեհարան։

Երեկոյեան ժամի 7-ին Վանքի սեղանատանը ի պատիւ Վեհափառի գալստեան ընդհանուր ճաշկերոյթ կար, որին մասնակցում էին մօտ 200 հոգի։ Նորին Սրբութիւնը իրան յոգնած զգալով անկարող եղաւ մասնակցել ճաշկերոյթին։

Հետևեալ օրը, յունիսի 29-ին, առաւօտեան ժամը 9-ին Մայր Աթոռի ամբողջ միաբանութիւնը Տ. Տեղակալի առաջնորդութեամբ բարձրացան վեհարան և ներկայացան Կաթողիկոսին։

Վեհափառ Հայրապետը դիմեց նրանց բաւական երկար ճառով, ուր շեշտում էր գլխաւորապէս միաբան համերաշխ գործունէութիւնը, և էջմիածնի ներկայ տխուր պատկերը հետևանք է՛ր համարում տիրող կուսակցութիւնների.— «Մենք մի կուսակցութիւն պիտի ճանաչենք, ասաց Վեհափառը—այդ Աւետարանն է»։

Ապա կարդաց Կ. Պօլսի ռուսաց դեսպանին

ուղղած իր գրութիւնը, ուր ասած էր Պետերբուրգ կգնայ իբրև սոսկական եպիսկոպոս և ոչ Կաթողիկոս։ Հայաստանեայց եկեղեցու հնաւանդ սովորութեամբ օծումից յետոյ կճանաչուի միայն Կաթողիկոս։

Դրանից յետոյ օրհնեց բոլորին և արձակեց։

Կաթուղիկոսի օծումը

—

Օծման նախընթաց օրը, առաւօտեան Կաթողիկոսը պաշտօնական անձանց ներկայութեամբ հաւատարիմ հպատակութեան երդում տւեց Կայսերին—ըստ Պօլօժենիայի։

Երեկոյեան հանդիսաւոր թափօրով Վեհափառը առաջնորդուեց տաճար—ներկայ լինելու ժամերգութեանը։ Վանքի բակը լիքն էր հասարակութեան մեծ բազմութեամբ։

Սեպտեմբերի 13-ին, ժամը 10-ին զանգակների հնչիւններն ազդարարեցին։ 12 արքեպիսկոպոսներ զգեստաւորուած եկեղեցական մեծ թափօրով վեհարանից առաջնորդեցին տաճար Կաթողիկոսին, որի ամպհովանին բռնել էին պատուաւոր անձինք։ Պատարագիչը ինքը Կաթողիկոսն էր, եպիսկոպոսները աւագութեան կարգով շարուեցին բեմի վրայ սեղանի աջ և ձախ կողմերը։ «Զի ողորմած և մարդասէր Աստուած գոլով» ա-

ղօթքը ասելուց յետոյ, Վեհափառը երեսը դար-ձրեց ժողովրդին, խօսեց հայրապետական քարոզ:

Այս բեմի կենդրոնում Կաթուղիկոսը գորգի վրայ չոքեց, իսկոյն զգեստաւորուած 12 եպիսկո-պոսները շրջապատեցին Նրան, ձեռքերը դրին Վե-հի գլխին և ասացին — «Մենք դնեմք զձեռս ի վե-րայ սորա, և դուք աղօթս արարէք»: Յետոյ ըս-կսեցին հերթով կարդալ աղօթքներ:

Այս ողջոյնից առաջ սկսեց օծման հան-դէսը: Կաթուղիկոսը չոքեց սեղանի վերայ երեսը դէպի ժողովուրդը և 12 արքեպիսկոպոսները ձեռքերը դրին ծնկաչոք Կաթուղիկոսի գլխին, և արտասանեցին մի շարք երկար աղօթքներ: Պա-տարագիչը վեր կենալուց յետոյ, կրկին չոքեց և Մեսրոպ եպիսկոպոսը մեռոնի աղաւնուց բարակ հոսանքը ծորեց ծնկաչոք Կաթողիկոսի գագաթին: 12 եպիսկոպոսները բութ մատներով խաչաձև քաշեցին իրենց կողմը հոսած մեռոնը, ասելով— «Մենք կոչեմք զՄատթէոս արքեպիսկոպոսն ի հայրապետութիւն ազգի և եկեղեցւոյ»: Այս գա-գաթին բամբակ դրին: Ողջոյնի ժամանակ Վեհը չոքեց, եպիսկոպոսները համբուրեցին գագաթը: Պատարագից յետոյ Վեհը չքով դիմեց վեհարան:

Սոյն ուղեւորութիւնը քաղում ենք «Արարատ» յուլիս-օգոստոս համարներից և այլ թերթերից:

Гос. Библиотека
ССР
им. А.

Арм.
I-1410

ՇԻՐԱԿ
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ
1910
Կազմեց
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ.

6650

20 02

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032818

1-1410 2
1910.